Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 22 (1422) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 20, 2009
VOLUME 29, NO. 22 (1422) SATURDAY, JUNE 20, 2009

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՀՅԴ-Ի ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿԻՑԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԱՆՁՆԱԳԻՐԵՐՈՒ ԿԵՂԾՄԱՆ ՄԷՋ

Միշէլ Մըր կեղծ անձնագիրերը ցոյց տալու պահուն

Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն շուրջ բուռն քննարկումները կը շարունակուին երկրի քաղաքական շրջանակներուն մօտ եւ մամուլի կողմէ:

Լիբանանի քաղաքական թատերաբեմի ամենէն ազդեցիկ դէմքերէն նկատուող երեսփոխան Միշէլ Մըր, որ աւելի քան 50 տարուայ դաշնակիցը եղած է ՀՅԴ-ի, Երեքշաբթի Յունիս 16-ին կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, կասկածի տակ առաւ Պուրճ Համուտի քուէատուփերու արդիւնքները, ամբաստանելով հայկական կուսակցութիւնը կեղծ անձնագիրերու օգտագործման մէջ:

Շար.ը էջ 3

ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ԿՈՉ ԸՐԱՒ ՎԻԺԵՑՆԵԼՈՒ՝ ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԴԱՒԱԴԻՐ ԾՐԱԳԻՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Յունիս 12-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած ընդդիմադրութեան հերթական բազմամարդ հանրահաւաքը: Մատենադարանի առջեւ հաւաքուած հազարաւոր ցուցարարներու առջեւ իր ունեցած ելոյթի ընթացքին, Հայաստանի առաջին նախագահը ներկայացուց 12 կէտերէ բաղկացած փլաթֆորմ մը ու նաեւ բաց հրաւէր յղեց այլ կուսակցութիւններու՝ գալու եւ միանալու իրենց շարժումին: «Մենք պատրաստ ենք ընդդիմութեան դաշտում գրկաբաց ընդունել ցանկացած կուսակցութիւն՝ չվախենալով մրցակցութիւնից եւ բաց չթողնելով համագործակցութեան որեւէ առիթ», - յայտարարեց Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեան:

Իսկ, ներկայացուած փլաթֆորմը կ'ընդգրկէր արտահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններու կազմակերպում եւ Սերժ Սարգսեանի անյապաղ հրաժարականի պահանջ: Բացի այդ, Տէր-Պետրոսեանի ներկայացուցած ծրագիրը կ'առաջարկէր լիովին բացայայտել եւ դատական կարգով պատժի ենթարկել Մարտի 1-ի ոճրագործութեան բուն մեղաւորներուն, ստեղծել Մարտի 1-ի իրադարձութիւններու ուսումնասիրման անկախ միջազգային յանձնաժողով, կամ վերականգնել

Լեւոն Տէր-Պետրոսեան ելոյթ կ'ունենայ ընդդիմադրութեան Յունիս 12-ի հանրահաւաքի ընթացքին

փաստահաւաք խումբը՝ կազմը համալրելով միջազգային փորձագէտներով, ազատ արձակել բոլոր քաղաքական բանտարկեալներուն եւ հարկային տեռորի զոհ դարձած գործարարներուն, կատարելով Եւրոդատարանի վճիռն ու ԵԽԽՎ բանաձեւերու պահանջը, անյապաղ վերաբանալ «Ա 1+» հեռուստակայանը:

Արտաքին քաղաքական բնագաւառէն ներս, ընդդիմադրութեան փլաթֆորմը կ'առաջարկէր վիժեցնել Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը կասկածի տակ դնելու նպատակով հայ եւ թուրք պատմաբաններու յանձնաժողովի ստեղծման դաւադիր ծրագիրի իրականացումը, իշխանութիւններուն թոյլ չտալ Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գծով անտեղի զիջումները եւ վերականգնել բանակցութիւններու նախկին ձեւաչափը, Լեռնային Ղարա-

Շար.ը էջ 4

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՄ «ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐԸ» ԿԸ ԴԱԴՐԵՑՆԷ ԻՐ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄԷԿ ՄԱՍԸ

Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ հաստատուած «Հազարամեակի մարտահրաւէր» ընկերակցութիւնը որոշած է դադրեցնել Հայաստանի մէջ ճանապարհաշինական ծրագիրներու ֆինանսաւորումը: Այս որոշումը, սակայն, չի վերաբերիր ծրագրի աւելի մեծ մասը կազմող ոռոգման ենթածրագրին:

«Հազարամեակի Մարտահրաւէր» ընկերակցութեան հաղորդագրութեան համաձայն, տնօրէններու խորհուրդի որոշման համար հիմք ծառայած է այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարութեան կատարած քայլերը չեն համապատասխանէր «Հազարամեակի Մարտահրաւէր» ընկերակցութեան ժողովրդավարական կառավարման չափանիշերուն:

«Ընկերակցութիւնը ափսոսանք կը յայտնէ, որ պիտի չկրնայ շարունակել Հայաստանի մէջ ճանապարհաշինական աշխատանքներու ֆինանսաւորումը», - ըսած է Ընկերակցութեան գործադիր տնօրէն Ռոտնի Պենտ:

«Այս որոշումի պատասխանատուութիւնը կը կրէ Հայաստանի կառավարութիւնը, որու գործողութիւնները չեն համապատասխաներ ծրագիրի շարունակական մասնակցութեան համար անհրաժեշտ ցուցանիշերուն: Այն հանգամանքը, որ Ընկերակցութիւնը պիտի չկարողանայ համագործակցիլ Հայաստանի հետ, գիւղական աղքատ համայնքներու համար նախատեսուող ճանապարհներու կառուցման գծով, յատկապէս հիասթափեցնող է, քանի որ նոյն գիւղական այդ համայնքները պիտի ըլլան մեր գործընկերները՝ ապագային զարգացում ապահովելու մէջ», - աւելցուցած է Պենտ:

«Հազարամեակի Մարտահրաւէր» ծրագիրի հիման վրայ Հայաստանին տրամադրուած էր 235,6 միլիոն տոլար: Ընկերակցութեան տնօրէններու խորհուրդը իրաւունք ունի կասեցնելու կամ դադարեցնելու ծրագիրը ամբողջութեամբ կամ մասամբ, եթէ երկիրը անհրաժեշտ յառաջընթաց չապահովեր ժողովրդավարական շարք մը բնագաւառներու մէջ, որոնք են՝ մամուլի ազատութիւնը, կոռուպցիան, կառավարութեան գործունէութեան թափանցիկութիւնը, եւ ժողովրդավարական կառավարումը:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԴԺԳՈՀ ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Եւրոպային Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութենէն ներս (ԵԱՀԿ) Միացեալ Նահանգներու առաքելութիւնը անցեալ շաբթուայ ընթացքին հրապարակեց յայտարարութիւն մը՝ Երեւանի վերջին քաղաքապետական ընտրութիւններուն վերաբերեալ:

Ողջունելով հանդերձ նախընտրական քարոզարշաւի ընթացքին տիրող մթնոլորտի որոշ բարելաւումները, յայտարարութիւնը եկաւ մտահոգութիւն յայտնելու բուն ընտրութիւններու կազմակերպման վերաբերեալ, կարծիք յայտնելով, որ շատ ընտրողներ չեն կարողացած ազատ կերպով իրականացնել իրենց ժողովրդավարական իրաւունքները:

«Երեւանի մեր դեսպանութեան դիտորդներու հաղորդումներու եւ տեղական ու միջազգային այլ դիտորդներու հետ ունեցած քննարկումներու հիման վրայ մենք կրնանք սոսկ եզրակացնել, որ ընտրութիւններու օրը քուէարկութեան գործընթացը անցած է լայնատարած խախտումներով ու ահաբեկմամբ: Մենք տեսած ենք քուէատուփերի լցոնման, բազմակի քուէարկութեան, քուէներու հաշուարկի կեղծման, կուսակցութիւններու վստահուած անձերու եւ դիտորդներու ահաբեկման եւ տեղամասերու մէջ անյայտ ու չարտօնուած անձերու ներկայ գտնուելու դէպքեր», - ըսուած է յայտարարութեան մէջ:

«Ի վերջոյ, հակառակ խախտումներով ընթացած ընտրութիւններուն, հարկ է նշել, որ ընդդիմադիր կուսակցութիւններէն մին Երեւանի աւագանիէն ներս զգալի թիւով տեղեր ստացած է: Մենք կը հասկնանք այն յուսախաբութիւնը, որ ընդդիմութեան կողմնակիցները կ'ապրին քուէարկութեան հետ կապուած, սակայն կոչ կ'ընենք ընդդիմութեան առաջնորդներուն ընդունիլ աւագանիի իրենց մանտաթները եւ Երեւանի կառավարման հարցերով լիակատար ու ակտիւ մասնակցութեամբ ներկայացնել իրենց ընտրողներուն: Միայն ժողովրդավարական գործընթացին կառուցողական մասնակցութիւն եւ շարունակաբար բարելաւելու նպատակ ունենալով է կարելի ի վերջոյ կանգնել ՀՀ քաղաքացիներու ժողովրդավարական ձգտումները», - եզրակացուած է Միացեալ Նահանգներու ԵԱՀԿ-ի առաքելութեան յայտարարութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ԿԱԶԻՆՈՅԻ ԲԻԶՆԵՍԸ ՁԳՈՒՄ Է

Կառավարությունը որոշել է, որ 2013 թ. Յունուարի 1-ից սկսած՝ Հայաստանում խաղատներ լինելու են միայն Ծաղկաձորում, Սեւանում եւ Ջերմուկում: Տիգրան Սարգսեանը նախօրէին յայտարարել է, թէ «Սա է մեր սկզբունքային դիրքորոշումը, հանրապետութեան նախագահի դիրքորոշումը՝ 2013-ից խաղատներ չպէտք է լինեն երկրի կենտրոնական մասում եւ Երեւանի շրջակայքում»:

Սա, իհարկէ, յիմար որոշում է, բայց ամբողջ խնդիրն այն է, որ այդ յիմարությունը բազմաշերտ է, հետեւաբար՝ արժէ շերտ առ շերտ անդրադառնալ այս որոշմանը: Աշխարհագրական յիմարութեան վրայ չարժէ ուշադրութիւն դարձնել. կառավարութիւնում որտեղի՞ց պիտի իմանան, որ Ծաղկաձորն, օրինակ, ուղիղ «երկրի կենտրոնական մասում» է, հետեւաբար՝ այնտեղ խաղատներ կառուցելը հակասում է «հանրապետութեան նախագահի սկզբունքային դիրքորոշմանը»: Անդրադառնանք աւելի լուրջ հարցերին:

1. Էկոլոգիական յիմարութիւն: Հասկանալի է, չէ՞, թէ գործնականում ինչ է նշանակում խաղատները կենտրոնացնել մի տեղում: Դա նշանակում է. այնտեղ պիտի ոչ միայն կազինոներ լինեն, այլեւ հիւրանոցներ, մեղմ ասած՝ «սաունաներ» եւ այլն՝ համապատասխան անձնակազմերով: Այսինքն, հենց որ Ծաղկաձորը, Սեւանն ու Ջերմուկը դառնան այդպիսի կենտրոններ, այլեւս որեւէ նորմալ քաղաքացի ոտք չի դնելու այդ տարածքներում: Որեւէ մեկի մտքով չի անցնի, չէ՞, ընտանիքով հանգստի գնալ «խաղատնային կենտրոն»: Այլ կերպ ասած, այս որոշմամբ Հայաստանի երեք լաւագոյն հանգստավայրերը պարզապէս խլւում են շարքային քաղաքացիներից եւ պաշտօնապէս վերածւում անառականոցների:

ԱՄՆ-ում, օրինակ, ժամանակին ճիշդ հակառակն արեցին: Այնտեղ էլ կային հրաշալի անտառներ, լեռներ ու ծովածոցեր, բայց Լաս-Վեգասը կառուցեցին ճիշդ անապատի կենտրոնում: Ինչո՞ւ: Որպեսզի նախ՝ բնութիւնը չփչանայ, եւ երկրորդ՝ անապատը գոնէ այդ ձեւով ծաղկի: Մեզանում հակառակն են անում. եղածը-չեղածն էլ խլում են մարդկանցից:

2. Բարոյական յիմարութիւն: Թւում է՝ խաղատները Երեւանից հեռացնելը գոնէ բարոյական տեսանկիւնից արդարացուած քայլ է. պետք է երիտասարդութեանը հեռու պահել այդ ախտից: Բայց պարզւում է՝ կառավարությունը պաշտօնապէս պատրաստ է վաճառքի հանել այդ բարոյականութիւնը: Նոյնիսկ նուազագոյն գին է սահմանել՝ 100 միլիոն դոլար: Կառավարության նոյն որոշման համաձայն, եթէ որեւէ ընկերութիւն առնուազն 100 միլիոն դոլար ներդնի, իրենք կը քննարկեն Երեւանում խաղատուն կառուցելու թոյլտուութեան հարցը: Հասկացա՞ք: Դա նոյնն է, թէ «աւանդական» ընտանիքի հայրը աղջկան արգելի երեկոյեան ժամերին տնից դուրս գալ, շփուել տղաների հետ եւ այլն, ու վերջում աւելացնի. «բայց եթէ 100-200 դոլար տուող լինի՝ հարց չկայ, վռազ համաձայնուի»:

3. Տնտեսական յիմարութիւն: Խաղատների սեփականատէրերը ոչ մէկի աչքի լոյսը չեն, բայց փաստ է, որ նրանք տասնեակ (եթէ ոչ հարիւրաւոր) միլիոն դոլարներ են ծախսել ու Երեւանի մերձակայքում կազինոներ կառուցել: Հիմա փաստօրէն այդ մարդկանց «քցում են», ու յայտնի չէ նոյնիսկ, թէ դրանից յետոյ ինչ նպատակով պիտի օգտագործուեն այդ տասնեակ շքեղ շինութիւնները: Հարց է ծագում՝ արդեօ՞ք դրանից յետոյ ոեւէ մէկը կը համարձակուի ներդրումներ կատարել Հայաստանում, եւ ի՞նչ երաշխիք կայ որ երկու տարի յետոյ մէկ այլ որոշմամբ էլ կազինոները չեն տեղափոխուելու, ասենք, միայն «ճ» տառով սկսուող բնակավայրերը:

Յիմարութիւնների ցանկը կարելի է շարունակել, բայց պրոբլեմն այն է, որ մանրամասն ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս հետեւեալը. այս որոշումը ոչ թէ կազինոները Երեւանից հեռացնելու, այլ ճիշդ հակառակը՝ Երեւանում կազինոներ կառուցելու մասին է: Ինչ-որ մէկը որոշել է Երեւանում կազինոներ կառուցել, բայց քանի որ քաղաքի մերձակայքի արդէն գոյութիւն ունեցող կազինոները լուրջ մրցակցութիւն կ՚ապահովէին, որոշուել է նախապէս կառավարութեան որոշմամբ ձերբազատուել այդ մրցակցութիւնից: Հիմա ինքներդ մտածէք՝ ո՞վ է, որ ընդգծուած սեր ունի կազինոների նկատմամբ, ի վիճակի է 100 միլիոն դոլարի ներդրումներ անել եւ կարող է հեշտուհանգիստ կառավարութեան որոշում ընդունել տալ:

Այնպէս որ, այս որոշման իրական նպատակը խաղային բիզնեսում նոյնպէս մենաշնորհ հաստատելն է: Ծաղկաձորում կամ Ջերմուկում մի քանի կազինոներ գուցէ եւ բացուեն, բայց հիմնական արդիւնքն այն կը լինի, որ Երեւանի մերձակայ կազինոները կը վերանան: Ու դրանից անմիջապէս յետոյ Երեւանում մէկ-երկու հսկայական կազինոներ կը բացուեն՝ արդէն առանց որեւէ մրցակցութեան: Եւ իհարկէ՝ գրանցուած օֆշորային գօտիներում: Բա հո անունը «Ջազզուէ» չէ՞ն դնելու:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ԴԷ ՍՊԱՍԻՐ, ՈՒ ՏԵՍ

Հայաստանի քաղաքական դաշտում ստեղծուել է բաւական իւրօրինակ մի իրավիճակ, երբ թէ իշխանութիւնը, ու թէ ընդդիմութիւնը համարում են, որ ժամանակն աշխատում է իրենց օգտին: Իշխանութիւնը համարում է, որ ժամանակի ընթացքում Հայ Ազգային գոնկրեսը թուլանալու է, հետաքրքրութիւնը կոնգրեսի հանդէպ մարելու է, հասարակութիւնը դադարելու է հաւատալ ու վստահել, թէ կոնգրեսը կարող է հասնել երկրում օրինականութեան հաստատման, իսկ այդ ամէնն էլ ի վերջոյ ապահովելու է իր հանգիստ գոյութիւնն առնուազն մինչեւ խորհրդարանի հերթական ընտրութիւն:

Հայ Ազգային կոնգրեսն էլ համարում է, որ ժամանակի ընթացքում իշխանութիւնը կանգնելու է արտաքին խոստումները կատարելու անհրաժեշտութեան առաջ, սակայն չի կարողանալու դրանք կատարել, քանի որ չունի լեգիտիմութիւն եւ խոստումներն էլ չեն բխում Հայաստանի պետական շահից, ու անկարող լինելով այլեւս դիմադրել արտաքին ճնշմանը, ստիպուած է լինելու ներքին ճնշմանն էլ տեղի տալ ու հեռանալ: Ընդդիմութեան առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանն ուղղակի յայտարարեց, որ ժամանակը աշխատում է ընդդիմութեան օգտին:

Այդպիսով, եթէ վերջին տարիներին հայ հասարակութեանը յուզում էր այն հարցը, թէ ում օգտին է աշխատում ժամանակը Ղարաբաղի խնդրի առնչութեամբ՝ Հայաստանի, թէ Ադրբեջանի, ապա այժմ թերեւս հասարակութեանը յուզող ժամանակի հարցը տեղափոխւում է ընդդիմութեան եւ իշխանութեան հարթութիւն: Ի վերջոյ, ում օգտին է աշխատում ժամանակը՝ ընդդիմութեան, թէ իշխանութեան: Իշխանութիւնն ընդդիմութեանն է ասում՝ «դէ սպասիր, ու տես թէ ինչպէս ես մարելու կամաց-կամաց», ընդդիմութիւնն էլ իշխանութեանն է ասում «դէ սպասիր, թէ ինչպէս ես ձախողուելու կամաց-կամաց»:

Մի պահ թողնենք այն, թէ ում ձախողումը կամ ում յաջողութիւնն է, որ բխում է հասարակութեան ու պետութեան շահից: Կան մարդիկ, որոնք փիլիսոփայօրէն կ՚ասեն, թէ պետութեան շահից բխում է, որ յաջողութիւն ունենայ թէ ընդդիմութիւնը, թէ իշխանութիւնը: Բայց այդ մօտեցումը թողնելով մեր ժամանակի պալատական մտաւորականներին ու փորձագէտներին, այդուհանդերձ այս հրապարակման շրջանում մի կողմ թողնենք այն, թէ ում յաջողութիւնը կամ ձախողումն է հասարակութեան օգտին, եւ դիտարկենք միայն ժամանակի մէջ այս կամ այն կողմի շահելու հաւանականութիւնը:

Բայց դա էլ թերեւս աւելորդ զբաղմունք է: Բանն այն է, որ շահելու հաւանականութիւն առկայ է երկուստեք: Խնդիրն այն է, թէ ժամանակի ընթացքում ինչ կ՚անի ընդդիմութիւնն ու ինչ կ՚անի իշխանութիւնը: Քաղաքականութեան մէջ չեն լինում հարիւր տոկոս կամ վերջնականապէս պարտուած վիճակներ, եթէ իհարկէ չի լինում անգործութիւն: Բայց տրամաբանական է նաեւ, որ գործելը ինքնին բաւական չէ, պէտք է նաեւ արդիւնաւէտ կամ այսպէս ասած ճիշդ գործել: Բայց դա էլ թերեւս բաւարար չէ, որովհետեւ շատ կարեւոր է սխալ գործողութիւններից ճիշդ դասեր քաղելը, այսինքն սեփական սխալը գիտակցելն ու ընդունելը:

Խրատելը կամ դատելն իհարկէ հեշտ է: Բայց հեշտ է նաեւ սեփական անյաջողութեան պատասխանատուութիւնն արտաքին գործօնների վրայ դնելը: Ի վերջոյ, ժամանակի ընթացքում շահելու հաւանականութիւնը մեծ է նրա մօտ, ով սպասում է, բայց չի կորցնում ժամանակի զգացողութիւնն ու չի մնում մօտ կամ հեռու ինչ որ ժամանակի գերի:

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ» Կայքէջ

մենք ոչ մի հաղորդագրութիւն չենք ստացել: Այդ հարցը նախ պէտք է որոշուի ամերիկեան իշխանութիւնների կողմից, որից յետոյ նրանք կը դիմեն մեզ»:

Ադրբեջանում Բրայզային ԱՄՆ դեսպանի պաշտօնում առաջադրելու առիթով քաղաքագէտ Ստեփան Սաֆարեանը յիշեցրեց. «Մինսկի խմբում վերջին 10 տարիներին նշանակուած բոլոր ամերիկացի համանախագահներն առաւելապէս եղել են ոչ թէ կոնֆլիկտների լուծման, այլ էներգետիկ հարցերով մասնագէտ՝ Ստիւըն Ման, Քերի Քաւանո, Մեթիւ Բրայզա: Նրանք ոչ միայն էներգետիկ ոլորտի մասնագէտներ են, այլեւ՝ ԼՂ հիմնախնդրում հանդէս գալով որպէս ամերիկացի համանախագահ, զուգահեռաբար, եթէ ոչ առաջնահերթ, շարունակել են հետապնդել Կասպեան տարածաշրջանում Միացեալ նահանգների տնտեսական եւ ռազմավարական շահերը»:

«ԱՅԲ-ՖԷ»

ԲՐԱՅԶԱՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԴԵՍՊԱ՞Ն

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկեան համանախագահ Մեթիւ Բրայզան երաշխաւորուել է Ադրբեջանում ԱՄՆ արտակարգ եւ լիազօր դեսպանի պաշտօնում:

Այս մասին տեղեկատուութիւն է տարածել ադրբեջանական մամուլը՝ յղում կատարելով «Foreign Policy» ամսագրին: Ըստ ամսագրի՝ Բրայզայի թեկնածութիւնն այս պաշտօնում առաջարկել եւ երաշխաւորել է ԱՄՆ պետքարտուղարի նախկին օգնական Դենիէլ Ֆրիդը:

Մեթիւ Բրայզան այս մասին դեռ ոչինչ չի յայտարարել: Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի պաշտօնում Մեթիւ Բրայզայի թեկնածութեան մասին պաշտօնապէս դեռ չի յայտարարել նաեւ Սպիտակ տունը: Ադրբեջանի ԱԳ նախարարի խօսնակ Էլխան Պոլուխովն այսօր յայտարարել է. «Այդ առիթով

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆԵԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԵԱՆ
ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱԼԱՆԱՒՈՐՈՒԵԼ Է ՀԵԼՍԻՆԿԵԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄ ԱՐՇԱԼՈՅՍ ՅԱԿՈԲԵԱՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Անցած շաբաթ դատարանի որոշմամբ կալանքի տակ է առնուել Հայաստանի Հելսինկեան ասոցիացիայի անդամ Արշալոյս Յակոբեանը: Ասոցիացիայի նախագահ Միքայէլ Դանիէլեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում պնդում է, որ մինչեւ կալանաւորելը իրաւապահները բռնութիւն են կիրառել իրաւապաշտպանի նկատմամբ:

Միքայէլ Դանիէլեանը պատմեց, որ Յունիսի 5-ի առաւօտեան իրենց ասոցիացիայի անդամ, ֆոտոլրագրող Արշալոյս Յակոբեանին զանգահարել են Յատուկ քննչական ծառայութիւնից եւ հրաւիրել ցուցմունք տալու Մայիսի 31-ին Երեւանի աւագանում ընտրութիւններին Մալաթիա - Սեբաստիա համայնքի ընտրատեղամասերից մէկում կատարուած միջադէպի կապակցութեամբ, որի մասին Յակոբեանը յայտարարութիւն էր ներկայացրել Յատուկ քննչական ծառայութիւն:

Այդ ընտրատեղամասային յանձնաժողովի անդամներն ու ինչ-որ անյայտ անձինք խոչընդոտել են Արշալոյս Յակոբեանին եւ Միքայէլ Դանիէլեանի կողմից դիտորդական առաքելութիւն իրականացնելուն:

Արշալոյս Յակոբեանը հրաժարուել է հեռախօսազանգով ներկայանալ Յատուկ քննչական ծառայութիւն, պահանջելով պաշտօնական ծանուցագիր:

«Երկու ժամից կամ մէկուկէս ժամից յետոյ իրենց տուն են ներխուժում երկու ոստիկան Կենտրոն բաժմունքից, բերելով իրենց հետ չեմ կարող ասել ծանուցագիր, մի հատ թղթի կտոր, որտեղ նշուած չէր, թէ Արշալոյսը որպէս ով է հրաւիրուած, ինչ գործով է հրաւիրուած», - պատմեց Դանիէլեանը: - «Արշալոյսը հրաժարուեց: Իրեն սկսեցին համոզել, ճնշում գործադրելով»:

Ի վերջոյ, Արշալոյս Յակոբեանը ստորագրել է, սակայն, ըստ Միքայէլ Դանիէլեանի, վատ տեսողութեան պատճառով, Յակոբեանը ստորագրել է թղթի սխալ հատուածում, ինչն էլ առաջացրել է ոստիկանների զայրոյթը:

Քիչ անց Յակոբեանի բնակարան են այցելել եւս երկու ոստիկան եւ ուղեկցել նրան ոստիկանութեան Կենտրոնի բաժին, որտեղ, ըստ Միքայէլ Դանիէլեանի, Յակոբեանին խոշտանգել են, ծեծի ենթարկել:

Միջադէպի յաջորդ օրը, դատարանը որոշել է Արշալոյս Յակոբեանի նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառել կալանքը: Յակոբեանը մեղադրւում է քրէական օրէնսգրքի 316-րդ յօդուածի 1-ին մասի յատկանիշներով, այն է, իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութեան գործադրում:

Կատարուածի առնչութեամբ մտահոգութիւն են յայտնել միջազգային իրաւապաշտպան մի քանի տասնեակ կառոյցներ, այդ թւում «Հիւման Ռայթս Հաուզ» հիմնադրամը, Մարդու իրաւունքների պաշտպանների Հարաւային Կովկասի ցանցը, Ժողովրդավարութեան համաշխարհային շարժումը, եւ դիմել են Հայաստանի իշխանութիւններին, կոչ անելով ազատ արձակել Արշալոյս Յակոբեանին: Նոյն կոչով Ռուսաստանում Հայաստանի դեսպանատանն են դիմել նաեւ ռուսաստանեան մի շարք իրաւապաշտպան կազմակերպութիւններ:

ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՀԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԽՆԴՐՈՒՄ ՀԱՄԱԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: 2008 թուականի Մարտի 1-ի զոհերի հարազատները Յունիս 16-ին նամակ են փոխանցել նախօրէին Հայաստան ժամանած Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Հայաստանի հարցով համազեկուցողներին, խնդրելով ներկայ այցի ընթացքում հանդիպել իրենց հետ:

Առաւօտեան ժամը 10-ից մարտիմէկեան 10 զոհերից Գոռ Քլոեանի, Դաւիթ Պետրոսեանի, Սամուէլ Յարութիւնեանի եւ Տիգրան Խաչատրեանի ծնողները սպասում էին Եւրախորհրդի երեւանեան գրասենեակի մօտ, սակայն գրասենեակի աշխատակիցները տեղեկացրին, որ Ջոն Պրեսկոտն եւ Ժորժ Կոլումբիէն պաշտօնեաների եւ ընդդիմութեան ներկայացուցիչների հետ ծրագրուած հանդիպումների մէջ են:

Զոհուածների ծնողները ցանկանում են անձամբ ներկայացնել, թէ ինչ ընթացք ունի իրենց զաւակների սպանութիւնների բացայայտման գործը՝ ակնկալելով միջազգային ատեանների միջամտութիւնը:

«Մենք հիմա սպասում ենք Եւրախորհրդից, որ մեր վրայ ուշադրութիւն դարձնեն, բացայայտեն այս բոլոր գործերը: Եթէ Եւրախորհուրդն էլ ոչինչ չանի, ուրեմն մենք կործանուած մարդիկ ենք: Սա երկիր չէ, սա պետութիւն չէ», - ասաց զոհուածներից մէկի հայրը: - «Մենք չգիտենք, ուր գնանք, ում բողոքենք: Մեր իշխանութիւնները մեզ մոռացել են»:

«Կարող է իրենք մոռանան զոհերին, բայց զոհերը մեր երեխաներն են», - յաւելեց զոհուածներից մէկի մայրը:

Մարտիմէկեան իրադարձութիւններում զոհուածների հարազատները նաեւ յոյս էին յայտնում, որ ԵԽԽՎ-ն իր առաջիկայ նստաշրջանում կ՚անդրադառնայ իրենց որդիների սպանութիւնների բացայայտման խնդրին եւ համապատասխան դիրքորոշում կ՚որդեգրի հայաստանեան իշխանութիւնների նկատմամբ:

«Այնպէս ենք վիրաւորւում, որ հեռուստատեսութեամբ միայն ցոյց են տալիս, թէ ինչ լաւ է մեր երկրում ամէն ինչ , որ Եւրոպական կառոյցներն առաջընթաց են արձանագրում մարտիմէկեան իրադարձութիւնների ուսումնասիրման գործում: Թող գան մեզ հարցնեն: Մենք մեր երեխաներին կորցրել ենք միայն նրա համար, որ գնացել են խաղաղ հանրահաւաքի մասնակցելու: Իշխանութիւնները մէկուկէս տարի չեն բացայայտում ու պատժում սպաննողներին, փոխարէնը ամէն ինչ արեցին, որպէսզի լուծարուի գործով զբաղուող փաստահաւաք խումբը», - յայտարարում էին մարտիմէկեան իրադարձութիւններում զոհուածների ծնողները:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԸ «ԻՆՉ-ՈՐ ՀԱՇԻՒՆԵՐ ԵՆ ՄԱՔՐԵԼ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Երեւանից Թալին տանող մայրուղու հարեւանութեամբ տեղակայուած «Նարեկ» ռեստորանային համալիրի շրջակայքում, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին պատմել են ականատեսները, «ինչ-որ հաշիւներ են մաքրել» Արագածոտնի նորանշանակ մարզպետ Սարգիս Սահակեանի եւ Թալինից ընտրուած Ազգային ժողովի պատգամաւոր Խաչիկ Մանուկեանի կողմնակիցները:

Յիշեցնենք, որ ինչպէս Սահակեանը, այնպէս էլ Մանուկեանը ներկայացնում են իշխող Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը:

Սահակեանի եւ Մանուկեանի միջեւ տարաձայնութիւնները ծագել են Երեւանում: Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամեանի ներկայութեամբ ինչ-որ հանդիպման ժամանակ: Այնուհետեւ, Ուրբաթ երեկոյեան, նրանց կողմնակիցների միջեւ բախում է տեղի ունեցել Աշտարակի ձորում: Իսկ Շաբաթ երեկոյեան փորձել են շարունակել մարզպետի ընտանիքին պատկանող «Նարեկ» ռեստորանային համալիրում:

Ըստ գիւղացիներից ոմանց, այնտեղ է եղել Թալինի ոստիկանապետը: Մարզպետի կողմն էլ բոլոր գիւղապետերին հրահանգել է «մի քանի տասնեակ մարդ ապահովել»:

«Հա, ամբողջ մարզը, Արագածով, Ապարանով, Աշտարակով, Թալինի ամբողջ գիւղապետերով, ասուել էր, ամէն մէկդ 40-50 մարդ կ՚ապահովէք», - ասաց գիւղացիներից մէկը:

«Դեպուտատներ են եկել, նստել իրար հետ ռազբիրատի: Բեգլարեան Գագոյի ախպերն ա եղել», - յաւելեց մէկ ուրիշը:

«Ազատութիւն» ռադիոկայանի եւ ֆոտոլրագրող Գագիկ Շամշեանի հետ զրոյցում նորանշանակ մարզպետ Սահակեանը հաստատեց, որ Մանուկեանի հետ տարաձայնութիւններ եղել են: Նրա խօսքով, վէճը ծագել է հանգուցեալ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի ծննդեան օրը: Մանուկեանը իրեն ոչ պատշաճ ձեւով է դիմել, եւ դա դուր չի եկել մարզպետին:

Մարզպետը հաստատեց, որ ինքը եւ իր շրջապատը «Նարեկ» ռեստորանում տօնել են իր նշանակումը, բայց չհաստատեց, որ տեղի է ունեցել վիճաբանութիւն:

Ազգային ժողովի պատգամաւոր Խաչիկ Մանուկեանը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, թէ «ոչնչից տեղեակ չէ», «առաջին անգամ է լսում», «որեւէ խնդիր չունի մարզպետի հետ»:

«ԱՆՅԱՊԱՂ ԱԶԱՏԷՔ ՄԵՐ ՊԱՏԱՆԴ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ». ԱՐՄԱՆ ՄՈՒՍԻՆԵԱՆ

Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսինեան

«Մենք մի պահանջ ունենք այս յանցաւոր վարչախմբից, անյապաղ ազատ արձակել մեր պատանդ ընկերներին»,- ասել է Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսինեանը, Tert.am-ի հետ հեռախօսազրոյցում պատասխանելով այն հարցին, թէ ընդդիմութիւնն ի՞նչ ակնկալիքներ ունի խորհրդարանի արտահերթ նիստից:

Յիշեցնենք, որ Յունիսի 19-ին Ազգային ժողովն արտահերթ նիստ է հրաւիրում, որտեղ քննարկուելու է ՀՀ նախագահի առաջարկութիւնը համաներում յայտարարելու մասին:

Նկատենք նաեւ, որ սպասուող համաներման վերաբերեալ արդէն իսկ հնչել են բազմաթիւ գնահատականներ, եւ, որ ուշագրաւ է, ընդդիմութիւնն այն կարծիքին է, որ համաներումը չի արուի «ազնուօրէն»:

ՀՅԴ-Ի ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿԻՑԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ

Շարունակուածէջ 1-էն

«Հարց կու տամ, ուրկէ եկան յաւելեալ 4000 հայ քուէարկողները: Արդեօ՞ք անոնք օգտագործեցին այն կեղծ անձնագիրերը, որոնք յայտնաբերուած էին ներքին գործոց նախարարութեան կողմէ»-. յայտարարեց Միշէլ Մըր լրագրողներու ներկայութեան:

Լիբանանի նախկին փոխվարչապետը բացայայտեց, որ առաւելագոյնը 9300 հայեր պէտք է մասնակցած ըլլային Մէթնի շրջանի ընտրութիւններուն, սակայն անոնց թիւը եղած է 13700, ինչ որ կասկածի առիթ կու տայ:

Միշէլ Մըր յայտնեց, որ համապատասխան փաստաթուղթերը պատրաստելէ ետք, պիտի դիմուի Սահմանադրական Խորհուրդին՝ տուեալ ընտրաշրջանի արդիւնքները չեղեալ յայտարա-ռելու համար:

ՀՅԴ Լիբանանի բոլոր ընտրութիւններուն, միշտ ալ ամբաստանուած է հայկական քուէներ կեղծելու մէջ, օգտագործելով մեծ թիւով լիբանանահայերու երկրէն գաղթած ըլլալու պարագան եւ շատերու՝ Արաբերէն լեզուին չտիրապետելու հանգամանքը:

Միշէլ Մըր վերջերս դուրս գալով «Մարտ 8»-ի դաշինքէն, որպէս անկախ թեկնածու գլխաւորեց «Մարտ 14»-ի Լեռնալիբանանի ընտրական ցանկը: Երկարամեայ գործակցութեան պատճառով, ան դաշնակցութեան հետ համաձայնութեան եկաւ ընտրաշրջանէն ներս գտնուող հայկական միակ աթոռը բաց ձգելու՝ այդ կուսակցութեան թեկնածուին համար: Փոխարէնը, ՀՅԴ խոստացաւ իր ձայները տալ Միշէլ Մըրին: Սակայն, ըստ քուէարկութեան արդիւնքներուն, դաշնակցութիւնը իր թեկնածուի ընտրութիւնը ապահովելէ ետք դրժած է իր համաձայնութիւնը, խաբելով իր նախկին դաշնակիցին:

Յայտնենք որ, Միշէլ Մըր թէեւ ինք անձնապէս ընտրուեցաւ, սակայն իր ցուցակի միւս 7 անդամներէն 6-ը ձախողեցան 2-3 հազար ձայնի տարբերութեամբ:

ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՑՈՅՑ ԵՐԵՒԱՆՈՒՄ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԴԻՄԱՑ

Հայաստանաբնակ իրանցիներու բողոքի ցոյցը Իրանի դեսպանատան դիմաց

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Երկուշաբթի օրը հայաստանաբնակ իրանցիները ցոյց էին կազմակերպել Երեւանում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանատան դիմաց՝ բողոքելով Իրանում անցկացուած նախագահական ընտրութիւնների պաշտօնական արդիւնքներից:

Հաւաքուած մօտ հինգ տասնեակ իրանցիները ասում էին, որ իրենց քուէն տուել են Միր-Հոսէյն Մուսավիին: Պնդելով, որ ընտրութիւնները կեղծուել են, նրանք կոչ էին անում Մուսավիին՝ պահանջել վերահաշուարկ կամ նոր, արդար ընտրութիւնների անցկացում:

«Մենք քո կողքին ենք ու ամէն կերպ աջակցում ենք քեզ, մեզ դիկտատոր պէտք չէ», - բացականչում էին ցուցարարները:

«Ներկայ նախագահին հակառակ է քուէարկել ամբողջ ժողովուրդը, հակառակն է դուրս եկել», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց ցոյցի մասնակիցներից մէկը:

«Ինչ մենք ենք ուզել՝ չի եղել: Մենք ուրիշ մարդու ենք ընտրել, բայց իրենք սխալ են արել, կամ խաբել են, կամ ինչ-որ բան է եղել ... Մենք չենք ընդունում այս ընտրութիւնները: Մենք եկել ենք այստեղ, որ ասենք՝ սա մեր ուզածը չէ», - ասաց մէկ այլ ցուցարար:

Հաւաքուածները կանաչ վզկապներ էին կապել՝ որպէս խորհրդանիշ անցած ընտրութիւնների հանդէպ իրենց անհանդուրժողականութեան: Նրանք ասում են, որ խնդիր չունեն Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ, դէմ են միայն երկրի գործող նախագահ Մահմուդ Ահմադինեջադի քաղաքականութեանը:

Հայաստանաբնակ իրանցիները առայժմ մտադիր են պայքարել խաղաղ ցոյցերի միջոցով, իսկ հետագայ քայլերը դեռ պարզ չեն: Ցուցարարների հաւաստմամբ՝ այլ երկրներում ցոյցերը պակաս արդիւնաւէտ չեն լինի:

ՎԻԺԵՑՆԵԼ ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Շարունակուած էջ 1-էն

բաղի Հանրապետութիւնը դարձնելով հակամարտութեան լիիրաւ կողմ:

Տեղեկացնելէ ետք, որ ՀԱԳ-ի յաջորդ հանրահաւաքը պիտի կայանայ Սեպտեմբեր 18-ին, Լեւոն Տէր-Պետրոսեան յայտնեց որ, փլաթֆորմը շահագրգիռ ուժերու հետ քննարկումներու արդիւնքով, ենթակայ է փոփոխութիւններու ու լրացումներու եւ ամառը լրիւ բաւարար է այդ աշխատանքը կատարելու համար:

«Գոնկրէսը, կամ նրան նախորդած Համաժողովրդական շարժումը երբեւէ չի հրաժարուել ընդդիմադիր որեւէ ուժի հետ համագործակցութիւնից: Աւելին, որպէս կանոն, ինքն է եղել համագործակցութեան համարեա բոլոր փորձերի նախաձեռնողը», - յայտարարեց առաջին նախագահը՝ յիշեցնելով նախագահական ընտրութիւններու նախօրէին իրենց վարած բանակցութիւնները «Ժառանգութեան», Դաշնակցութեան, «Օրինաց երկրի», Ազգային Միաբանութեան, «Նոր ժամանակներու», ԱԺՄ-ի եւ քաղաքական այլ ուժերու հետ:

«Թուարկուած կուսակցութիւններից երկուսը, «Ժառանգութիւնը» եւ «Նոր ժամանակները», միացան համաժողովրդական շարժմանը եւ նախագահական ընտրութիւններում ստարեցին նրա առաջադրած թեկնածուին: Մնացեալները նախընտրեցին լքել ընդդիմադիր դաշտը եւ ապաստանել իշխանական ճամբարում: Հետագայում, երբ ձեւաւորուեց Հայ Ազգային Գոնկրէսը, Ժառանգութիւնը եւ Նոր ժամանակները յարմար չգտան ընդգրկուել նրա կազմում, շարունակելով իրենց անկախ ընդդիմադիր գործունէութիւնը: Դրանով հանդերձ, Գոնկրէսի եւ «Ժառանգութեան» համագործակցութիւնն ամենեւին չդադարեց, ինչի ցայտուն վկայութիւնն են, մասնաւորապէս, նրանց բազմաթիւ համատեղ յայտարարութիւնները եւ փաստահաւաք խմբում ծաւալած արդիւնաւէտ գործունէութիւնը», - ըսաւ Տէր-Պետրոսեան՝ ընդգծելով, որ չպէտք է կարեւորել համագործակցութեան ձեւական կողմը:

Դաշնակցութեան եւ «Բարգաւաճ Հայաստանի» կապակցութեամբ, առաջին նախագահը յայտնեց թէ, անոնք նախ ընդդիմութիւն պիտի դառնան, որպէսզի անոնց հետ համագործակցելու անհրաժեշտութեան մասին խօսուի:

Խօսելով Մայիսի 31-ի ընտրութիւններու մասին, ընդդիմութեան առաջնորդը Սերժ Սարգսեանին մեղադրեց ընտրութիւնները քրէականացնելու մէջ: Տէր-Պետրոսեան քննադատեց նաեւ արեւմտեան կառոյցներուն՝ ընտրութիւններուն արժանի գնահատական չտալու համար:

«Քուէարկութեան ընթացքը շատ աւելի ուշադիր դիտեցին Արեւմտեան երկրների երեւանեան դեսպանատների բազմաթիւ աշխատակիցներ, որոնք, սակայն, ի տարբերութիւն վերը նշուած առաքելութեան, առայժմ չեն հրապարակել իրենց կարծիքը», - ըսաւ Տէր-Պետրոսեանը:

Ընդդիմադրութեան այս հանրահաւաքին եւս յաջորդեց երթ՝ Երեւանի կեդրոնական փողոցներով, աւարտելու համար Հիւսիսային պողոտայի վրայ:

ԹՐՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՊԻՏԻ ԸՆՏՐԷ «ԱԹՈՌԱԿԻՑ ՊԱՏՐԻԱՐՔ» ՄԸ

«ՄԱՐՄԱՐԱ»: «Հիւրիէթ» թերթի համաձայն՝ կառավարութիւնը որոշեց արտօնել որ Թուրքիոյ հայ համայնքը «Աթոռակից Պատրիարք» մը ընտրէ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Մեսրոպ Արք. Մութաֆեանի կողքին, տրուած ըլլալով որ Մեսրոպ Պատրիարքը՝ առողջական պայմաններու բերումով այլեւս ի վիճակի չէ այս պաշտօնը կատարելու:

Այս լուրին արձագանգ եղած են քանի մը լրատու գործակալութիւններ ալ: Թերթը կը գրէ որ Հայոց Պատրիարքարանը, որ այս կերպով ընտրութեան արտօնութիւն ստացած կ՚ըլլայ, յառաջիկայ ամիսներուն դիմում պիտի կատարէ ընտրութիւնն իրականացնելու համար, քանի որ կ՚ընդգծուի թէ պատրիարքական պաշտօնի գործադրութիւնը կենսական կարեւորութիւն կը ներկայացնէ Թուրքիոյ հայ համայնքին համար: Այս դիմումէն ետք կառավարութիւնը փոփոխութեան պիտի ենթարկէ պատրիարքական ընտրութեան այն օրէնքը որ գործադրուած էր 1998-ի ընտրութեան ընթացքին եւ որ հիմնուած էր Նախարարաց Խորհուրդի 1961 թուակիր կանոնագրութեան վրայ: Այս փոփոխութենէն վերջ Թուրքիոյ Հայոց Պատրիարքը պիտի ընտրուի որպէս «Աթոռակից Պատրիարք»: Այս կերպով ընտրուած անձին պիտի արտօնուի որ պատրիարքական տարազ կրէ, միայն թէ Մեսրոպ Սրբազան առաջնահերթութեան իր դիրքը պիտի պահէ հասարակութեան մէջ:

ՀԱՅԵՐՆ ՈՒ ԹՈՒՐՔԵՐՆ ՈՒՆԵՆ ՀԱՄԱՏԵՂ ԱՊԱԳԱՅ, ՅԱՅՏԱՐԱՐԵԼ Է ԴԱՎՈՒԹՕՂԼՈՒՆ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմեդ Դաւութօղլու

«Tert.am»: Հայաստանի հետ երկխօսութիւնների ընթացքում մենք տեսնում ենք, որ նրանք նոյնպէս ցանկանում են Կովկասում խաղաղութիւն եւ զարգացում հաստատել: Նման յայտարարութեամբ Trend News-ին տուած հարցազրոյցում հանդէս է եկել Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դաւութօղլուն: Բացի այդ, նա յայտարարել է, որ Հարաւային Կովկասում իրավիճակը կարգաւորելու համար կարեւոր է եւ հարկաւոր է նաեւ առաջխաղացումներ գրանցել ղարաբաղեան կարգաւորման հարցում:

«Ես նաեւ կը ցանկանայի նշել, որ Թուրքիայի եւ Հայաստանի յարաբերութիւնները չեն սահմանափակւում Հարաւային Կովկասով: Նրանք նաեւ ազդեցութիւն ունեն Թուրք-ամերիկեան յարաբերութիւնների վրայ, ինչը սխալ է: Հայաստանի հետ մեր յարաբերութիւնները չպէտք է անդրադառնան ԱՄՆ-ի հետ մեր կապերի վրայ»,- յայտարարել է արտգործնախարարը:

Դաւութօղլուն չի համաձայնել այն մտքի հետ, որ Ռեջէփ Թայիփ Էրդողանի՝ Ադրբեջան կատարած այցից յետոյ «ճանապարհային քարտէզի» վերաբերեալ բանակցութիւնները կորցրել են իրենց արդիականութիւնը:

«Մենք՝ Թուրքիան, Հայաստանը, Ադրբեջանը, ինչպէս նաեւ Ռուսաստանը եւ Վրաստանը ունենք համատեղ ապագայ», - նշել է Թուրք դիւանագէտը:

ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի նախագահութիւնը ստանձնելու կապակցութեամբ Թուրքիայի արտգործնախարարը յայտարարել է, որ այս ամիս ԱԽ օրակարգում քննարկուելու են տարաբնոյթ հարցեր, ինչպէս նաեւ ղարաբաղեան թեման:

«Մենք կը ցանկանայինք, որպէսզի հայ-ադրբեջանական բանակցութիւններն արդիւնաւէտ լինեն: Մենք այդ հարցի շուրջ աշխատում ենք նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Վաշինգթոն կատարած այցի շրջանակներում ես այդ հարցը քննարկել եմ ԱՄՆ-ի ղեկավարութեան հետ եւ մենք եկել ենք այն եզրայանգման, որ մեր համատեղ խնդիր է հանդիսանում հակամարտութեան կարգաւորմանը նպաստելը»,- իր խօսքը եզրափակել է դիւանագէտը:

ԼԻԲԱՆԱՆ

«ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ԸՆԿ. ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՀԵՏ

ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐԸ ՅԱՂԹՈՒՄ ԵՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԵՐԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ՀԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Յունիսի 7-ին Լիբանանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններն աւարտուեցին երկրի իշխող՝ «Մարտի 14»-ի դաշինքի յաղթանակով. այդ դաշինքը գբաղեցրել է Լիբանանի խորհրդարանի 128 տեղերից 71-ը՝ պահպանելով մեծամասնութիւնը եւ պարտութեան մատնել «Մարտի 8»-ի շարժումը, որը գլխաւորում էր իրանամէտ եւ սիրիամէտ «Հըզբալլահ» կուսակցութիւնը:

Ընտրութիւններին մասնակցող հայկական կուսակցութիւնները եւս բաժանուած էին այս երկու ճակատների միջեւ: Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան եւ Ռամկավար ազատական կուսակցութիւնները ընտրութիւններին մասնակցել են «Մարտի 14»-ի, իսկ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ ծայրայեղական «Մարտի 8»-ի կազմում:

Այսպիսով, Լիբանանի խորհրդարանում հայերն ստացել են 6 աթոռ, որոնցից 2-ը բաժին է հասել Հնչակեան կուսակցութեանը, 2-ը՝ ՀՅ Դաշնակցութեանը, 1-ը՝ Ռամկավար ազատական կուսակցութեանը: Իսկ միւս աթոռի համար մղուող պայքարում յաղթել է Հնչակեան կուսակցութեան աջակցութիւնը վայելող, անկուսակցական Նշան Զինչինեանը՝ պարտութեան մատնելով խորհրդարանի ներկայ անդամ դաշնակցական Ջորջ Քասարջեանին:

Այս առթիւ մեր զրոյցը Հնչակեան կուսակցութիւնը ներկայացնող պատգամաւոր Սեպուհ Գալփագեանի հետ է:

- Պրն Գալփագեան, ընտրութիւնների նման արդիւնքը, երբ խորհրդարանում աւելի մեծ տեղ ունեն հնչակեանները, ինչի՞ մասին է վկայում, արդեօ՞ք այն մասին, որ լիբանանահայ համայնքի արժէհամակարգում, ուր գերիշխող է եղել ազգայնականութիւնը՝ ի դէմս ՀՅԴ-ի, փոփոխութիւններ են արձանագրուել, եւ տեղի հայութիւնը գնալով յակւում է դէպի Արեւմուտք, դէպի ժողովրդավար արժէքներ:

- Նախ ասեմ, որ Լիբանանի խորհրդարանում հայազգի վեց երեսփոխան կայ, ինչը մեծ նուաճում է: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թէ դաշինքը, որի կազմում մենք ներկայանում էինք, արեւմտամէտ է, թոյլ տուէք չհամաձայնել: Ընդհակառակը՝ այն ծրագիրը, որի շրջանակներում «Մարտի 14»-ը տարաւ իր ընտրարշաւը, ունէր հետեւեալ լոզունգները՝ ազատութիւն, անկախութիւն եւ գերիշխանութիւն Լիբանանին: Եւ մեր՝ մինչ այս կատարած եւ յետայսու կատարելիք աշխատանքները պէտք է միտուած լինեն հետեւեալին, որ մեր շրջակայ հարեւանները այլեւս ճնշում չբանեցնեն եւ թողնեն, որ Լիբանանը դառնայ ինքնորոշ ու ինքը լուծի իր ճակատագիրը: Հենց այս գաղափարի ներքոյ էլ մենք մղեցինք մեր ընտրական պայքարն ու յաղթանակ արձանագրեցինք: Եւ թող տպաւորութիւն չստեղծուի, որ մենք Արեւմուտքի հետ յաւելեալ կապեր ունենք, ընդհակառակը՝ մենք ուզում ենք, որ Լիբանանը անկախ լինի եւ չազդուի իր շուրջը տեղի ունեցող այն հարցերից, որոնք կապ չունեն Լիբանանի հետ: Արեւմտեան, կամ թուացեալ ազատական շատ ուժեր փորձում են ցոյց տալ, որ իբր թէ իրենք շատ մօտ են «Մարտի 14»-ի դաշինքին: Մենք այդպէս չենք զգում, եւ մեր դաշինքի կազմում կան կազմակերպութիւններ, որոնք սերտ կապեր ունեն ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ արեւմտեան այլ երկրների հետ: Բայց մենք՝ որպես հայ ուժեր «Մարտի 14»-ի դաշինքում ներգրաւուել ենք բացառապէս այն նկատառումներից ելնելով, որ դէմ ենք դրսի ուժերի միջամտութեանը լիբանանեան ներքին քաղաքականութեանը, եւ լիբանանցիների ինքնուրոյնութեան ջատագովն ենք: Մինչդեռ դիմացի կողմը (մրցակից քաղաքական ուժը՝ «Մարտի 8»-ի դաշինքը), զգում ենք, որ ցանկացած անչան հարցով խորհրդակցում է դրսի ուժերի հետ, որոնք էլ փորձում են ներլիբանանեան իրենց աջակիցների միջոցով իրենց կամքը պարտադրել Լիբանանի ներքին շատ խնդիրների վերաբերեալ:

- Ի դէմս »Մարտի 14«-ի դաշինքի՝ Հնչակեան կուսակցութեան նման մեծ հասարակական աջակցութիւնը յուշո՞ւմ է այն մասին, որ լիբանանահայութեան շրջանում հայ աւանդական կուսակցութիւնների ազդեցութիւնների փոփոխութիւն է տեղի ունեցել: Եւ Դաշնակցութիւնը, որը մշտապէս իշխող դիրքերից էր հանդէս գալիս լիբանանահայ համայնքում, այլեւս նահանջ է արձանագրել: Փոխարէնը՝ ռամկավարներն ու հնչակեանները դարձել են աւելի ազդեցիկ:

- Հարկ է նշել, որ ՀՅԴականներն ու նրանց համախոհները աւելին են մեր գաղթօջախում, սակայն ընտրութիւնները, վերջին հաշուով, միայն քուէարկութիւն չեն: Ընտրութեան 50 տոկոսը թուաքանակ է, միւս 50 տոկոսը՝ ճիշդ դաշնակիցներ ընտրելն ու ճիշդ ծրագրով ներկայանալը: Այստեղ է, որ Հնչակեան կուսակցութիւնը յաղթանակ տարաւ, քանի որ կարողացաւ ժողովրդի ցաւերին առնչուող ընտրական ծրագրի հաւանութիւն տալ, եւ այդ ցաւերից ելնելով էլ՝ ժողովուրդը՝ ե՛ւ լիբանանահայ համայնքը, ե՛ւ լիբանանցիներն առհասարակ սատարեցին մեզ: Ընտրութիւնների այսպիսի արդիւնքն ազդարարում է լիբանանահայութեան վիճակի փոփոխութեան մեկնարկի մասին: Բայց այն, որ մենք այսուհետ աւելի ազդեցիկ ենք դառնալու խորհրդարանի ներսում՝ չի նշանակում, որ մենք անտեսելու ենք ՀՅԴ-ին եւ կամ մեծամտութիւն ենք ցուցաբերելու վերջինիս նկատմամբ: Ընդհակառակը՝ ընտրութեան արդիւնքներից յետոյ մենք անմիջապէս յայտարարեցինք, որ պատրաստ ենք համագործակցել, եւ իրենց ունեցած երկու երեսփոխանների հետ խորհրդարանում կազմել հայ երեսփոխանների համախմբում, որպէսզի կարողանանք հետապնդել լիբանանահայութեան բոլոր տեսակի իրաւունքների պաշտպանութիւնը: Մենք միշտ էլ պատրաստ ենք ձեռք մեկնել եւ գործակցել ՀՅԴ-ի հետ, քանի որ բացառապէս միասնականութեան շնորհիւ է, որ կարող ենք հայ գաղթօջախը պահել եւ կանխել արտագաղթը: Եթէ մենք ընկղմուենք ներքին խժդժութիւնների մէջ, դա եւս առիթ կը դառնայ, որպէսզի շատ-շատերը մտածեն համայնքը թողնել-հեռանալու մասին: Մենք եւ ՀՅԴ-ն կուսակցական, ազգային հարցերի վերաբերեալ տարաձայնութիւններ չունենք, մեր միակ տարակարծութիւնը կապուած է «Մարտի 14»-ի եւ «Մարտի 8»-ի հարցերի հետ՝ կապուած լիբանանեան քաղաքականութեան հետ: Ընտրութիւնները աւիթ են, որպէսզի մենք՝ որպէս հայ աւանդական կուսակցութիւններ, կրկին նստենք ու մտածենք մեր գաղթօջախի ապագայի մասին: Անշուշտ, ներգաղթօջախային հարցերում ՀՅԴ-ի հետ որոշակի անհամաձայնութիւններ ունենք. Դաշնակցութիւնը փորձում է իրեն մենատէր զգալ այս կամ այն ազգային հարցերում, դիցուք՝ Կաթողիկոսարանի գծով, փորձում է Առաջնորդարանի դռները միշտ փակ պահել մեր առջեւ: Դրանք հարցեր են, որոնք, սակայն, ժամանակի ընթացքում կը լուծուեն:

- Այդ դէպքում, եթէ ներազգային հարցերում չունէք տարակարծութիւններ, ի՞նչն է պատճառը, որ հայ աւանդական կուսակցութիւններով չէք մէկտեղւում նոյն դաշինքում եւ աւելի լայն ճակատով տանում քաղաքական պայքարը:

- Բանն այն է, որ իրենք մեզ մեղադրում են նրանում, թէ իբր մեր որոշումը՝ դաշինքի ընտրութեան հարցում, ինքնուրոյն, անկախ չէ: Մենք էլ նոյն համոզումն ունենք իրենց վերաբերեալ: Սակայն իրենք պէտք է որ վերանայէին իրենց դիրքորոշումը, քանի որ, վերջին հաշուով, կուսակցութիւնը ժողովրդի կամքն ու փափաքն արտայայտողը պէտք է լինի: Ընտրութիւններն էլ ցոյց տուեցին, որ մեր դաշինքը հասարակական անհամեմատ աւելի լայն աջակցութիւն է վայելում: Հետեւապէս ՀՅԴ-ն պէտք է վերանայի իր քաղաքական գիծը, քանի որ դաշինքը, որում ներգրաւուած է, իր քաղաքական կապերով միտուած է դէպի արտաքին աշխարհ՝ գնում հասնում է մինչեւ դրկից երկրներ: Մենք՝ լիբանանահայութիւնս, այդ՝ համայն Լիբանանի քաղաքական խաղի մէջ մտնելու կարիք չունենք, եւ մեր դիրքորոշումը պէտք է լինի յոյժ չէզոք:

- Լիբանանահայութեան շրջանում յատկապէս վերջին մի քանի տարիներին մեծ տոկոս է կազմում արտագաղթը: Այն, որ հայութիւնն արդէն իսկ մեծ ներկայացուածութիւն ունի տեղի օրէնսդիր մարմնում եւ կարող է ազդեցութիւն ունենալ երկրի կառավարման գործընթացի վրայ, կարո՞ղ է դառնալ արտագաղթը կանխարգելող գործօն:

- Ընդհանրապէս, ժողովրդի ծանր կացութիւնը եւ վերջին չորս տարիների պայթունավտանգ իրավիճակը շատ անհանգստացրեց մեր ժողովրդին: Ցանկալի կը լինէր, որ մենք հայկական երեք կուսակցութիւններով միասին նոյն ճակատում տանէինք ընտրապայքարը եւ միասնաբար յաջողելով կը կարողանայինք աւելի ապահով կենսապայմաններ ստեղծել լիբանանահայութեան համար, եւ մարդիկ այլեւս չէին մտածի արտագաղթի մասին: Սակայն, դժբախտաբար,

Շար.ը էջ 18

ՏԵՍԷ՛Ք՝
ԵԹԷ
BANKRUPTCY-Ի
ՕՐԵՆՔՆԵՐԸ
Կ'ՕԳՆԵՆ ՁԵԶԻ,
ՁԱՆԳԱՀԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209

Nazareth V. Jansezian, Esq.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ
«ՀԱՅԱՍՏԱՆ»
(Շարունակուած «Մասիս»ի թիւ 20-էն)

Բնութագրական է նաեւ,որ ԱՄՆ-ի ակադեմիական շրջանակներում վերջին ժամանակներս հետաքրքրութեան աճ է նկատւում Կովկասի ժամանակակից ատրպէյճանցիների էթնոգենեզի ուսումնասիրութեան նկատմամբ, ընդ որում, մեծ ուշադրութիւն է դարձւում ատրպէյճանական ժողովրդի ծագման իրանական բաղադրիչին:

Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացի հետ կապուած իրադարձութիւնները ուշագրաւ են այն առումով, որ թերեւս առաջին անգամ ամերիկացիները ռուսներից յետոյ Թուրքիան ընդգրկեցին այդ գործընթացի մէջ: Հայ-թուրքական բանակցութիւններից էլ ակնյայտ դարձաւ, որ ամերիկացիները նպատակ ունեն ամրապնդելու «հայկական գործօնը» Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականութեան մէջ նրան սահմանափակելու նպատակով: Այդ բանակցութիւնների արդիւնքում թուրքական քաղաքական գործիչների վերաբերմունքը դարձաւ աւելի թշնամական եւ ագրեսիւ, չնայած բազմաթիւ դրական գնահատականներին այդ շփումների շուրջ եւ պայմանաւորուածութիւններին ամերիկեան, բրիտանական ու եւրոպական քաղաքական գործիչների հետ: Թուրքական ղեկավարութիւնն ակնյայտօրէն բորբոքուած է, քանի որ իրենց երկիրը փորձել են ներքաշել վտանգաւոր տարածաշրջանային հակամարտութեան ձեւաչափի մէջ եւ դրանով վերածել նրան ապակառուցողական գործընկերոջ, որն ընդունակ չէ դրական քաղաքականութիւն վարելու: Այսպես թէ այնպէս, Թուրքիան դուրս եկաւ այդ բանակցութիւններից առանձնապէս ոչ լաւ իմիջով, եւ նրան ժամանակ է պէտք՝ իրավիճակն իմաստաւորելու համար: Ներքին իրադրութիւնը Թուրքիայում հիմա այնպիսին է, որ ղեկավարութիւնը, այսպէս թէ այնպէս, մտահոգուած է, որ իր քաղաքականութիւնը դրական եւ արդիւնաւէտ ճանաչուի հասարակութեան եւ քաղաքական դասակարգի կողմից: Եթէ Թուրքիան մտադիր է իսկապէս ամրապնդել իր դիրքերը Հարաւային Կովկասում, նրան անհրաժեշտ է ընդգրկուել արեւմտեան հանրութեան այս կամ այն նախագծերում, եւ դա այլընտրանք չունի: Միայն այդ դէպքում Թուրքիայի արտաքին քաղաքականութիւնը կարող է ճանաչուել «լեգիտիմ» եւ գոնէ մասամբ հաւանութեան արժանանալ ԱՄՆ-ի եւ Եւրամիութեան կողմից:

Սակայն ամէնաէական հարցն այն է, թէ որքանով Թուրքիան կը կարողանայ կառուցել ինքնուրոյն եւ անկախ արտաքին քաղաքականութիւն, ստեղծել «անվտանգութեան գօտի», իրագործել իր պրագմատիկ գեոտնտեսական յաւակնութիւնները, եթէ հարկադրուած լինի վերադառնալ արեւմտեան խաղի կանոնների դաշտ: Այս պրոբլեմը, անշուշտ, լուծուած չէ եւ չի կարող լուծում ստանալ Թուրքական էլիտայի կողմից մօտակայ հեռանկարում:

Որոշակի իմաստով Թուրքիան կորցնելու բան չունի տարածաշրջանային քաղաքականութեան մէջ, առաւել եւս Հարաւային Կովկասում: Հայաստանի հետ նա պէտք է խաղայ՝ արեւմտյան կանոններով եւ թոյլ տայ իրեն ներքաշել բազմաթիւ թակարդների մէջ՝ կապուած ոչ այնքան հասկանալի պարտաւորութիւնների կատարման հետ, ինչը նկատելիօրէն կը սահմանափակի նրա քաղաքական մտադրութիւնների շրջանակը, կամ էլ տեղի կ'ունենայ այլ բան: Ընդ որում, վերոնշեալ պարտաւորութիւնները կատարելով, Թուրքիան, միեւնոյնն է, դէպի Եւրամիութիւն ցանկալի անցագիրը չի ստանայ եւ չի կարողանայ իրագործել իր տարածաշրջանային քաղաքականութիւնը: Այդ պատճառով էլ Թուրքական էլիտան միգուցե կը փորձի հրաժարուել բանակցութիւնների այն ձեւաչափից, որն առաջարկել են ԱՄՆ-ը, Եւրամիութիւնը եւ գուցէ Ռուսաստանը, եւ կ'աշխատի յաղթահարել «հայկական գործօնը»՝ Հայաստանի հետ ուղղակի յարաբերութիւններ ենթադրող բանակցութիւններ սկսելով: Դա միակ, քիչ թէ շատ տրամաբանական առաջարկութիւնը կը լինէր հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման առումով:

Հայաստանի քաղաքական ղեկավարութիւնը եւ ընդհանուր առմամբ էլիտան պէտք է հասկանան, որ Թուրքիայի հետ բանակցութիւնների ներկայիս պայմանաւորուած ձեւաչափերը կեղծ բա-

Շար.ը էջ 18

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ԳԷՈՐԳ ՍՏԱՄՊՈՒԼՑԵԱՆ

Ինչպէ՞ս են ընթանալու ղարաբաղեան բանակցութիւնները եւ, ի վերջոյ, ի՞նչ արդիւնքի դրանք կը յանգեցնեն: Նախագահներ Սարգսեանի եւ Ալիեւի սանկտպետերբուրգեան հանդիպումից առաջ բանակցային ներկայ փուլում առկայ իրավիճակը գնահատելու փորձ է կատարել Հայաստանի նախկին արգործնախարար Վարդան Օսկանեանը:

1998-ից մինչեւ 2008 թուականը որպէս Հայաստանի արտաքին գործերի նախարար պաշտօնավարած Օսկանեանը «Ազատութիւն» ռատիոկայանին տրամադրած մեկնաբանութեան մէջ իրադարձութիւնների զարգացման երեք հնարաւոր տարբերակ է կանխատեսում. «Առաջին սցենարը՝ հաստատուն հրադադարի պահպանումն նէ: Երկրորդ տարբերակը՝ պատերազմի վերսկսումն է, ինչը նոր իրավիճակ կը ստեղծի տարածաշրջանում: Եւ երրորդը հիմնախնդրի՝ բանակցութիւնների արդիւնքում ձեռք բերուած լուծումն է»:

Օսկանեանի խօսքով՝ վերջին տարբերակը, ի հարկէ, ամենացանկալին է, եւ տարածաշրջանում հաստատուն խաղաղութեան կը յանգեցնի: Այս տարբերակի իրագործումը, սակայն, ըստ Օսկանեանի, «պահանջում է այնպիսի մի փաստաթղթի մշակում, որն իր մէջ էական փոխզիջումներ կը պարունակի»:

Ինչ վերաբերում է միւս երկու սցենարներին, ապա ստատուս քուոյի գաղափարին, ըստ Օսկանեանի, կտրականապէս դէմ է միջազգային հանրութիւնը:

«Թէեւ միջազգային հանրութեան մեծամասնութիւնը՝ այդ թւում միջնորդները, աւտոմատ կերպով մերժում են այս տարբերակը՝ այն համարելով անընդունելի եւ անկայուն, պարտադիր չէ, որ այս մօտեցումը ճիշտ լինի: Բազմաթիւ պատմական օրինակներ կան, երբ դեռ երէկ անիրական թուացող այլընտրանքը դառնում է այսօրուայ գերադասելի ու իրատեսական լուծումը»:

Ինչ վերաբերում է պատերազմի վերսկսման սցենարին, ապա Օսկանեանի համոզմամբ հայկական կողմը պատերազմական գործողութիւնների դիմելու որեւէ պատճառ չունի «Եթէ Ատրպէյճանը պատերազմ սկսի, դա կը լինի երրորդ դէպքը, երբ նրանք փորձում են (հարցը ռազմական ճանապարհով լուծել): Նրանց այս փորձը կարելի կը լինի յաջողուած համարել միայն մի դէպքում՝ եթէ հնարաւոր լինի հասնել «վերջնական լուծման»: Սա Ատրպէյճանի համար շատ աւելի մեծ ռիսկեր է պարունակում՝ քան՝ հայկական կողմի»:

Խօսելով բուն բանակցային պրոցեսում արձանագրուող խորքային զարգացումների մասին՝ Օսկանեանը յատուկ ընդգծում է, որ կարգաւորման գործընթացի վրայ մի շարք գործօններ են ազդում:

Նախկին արտգործնախարարը դրանք բաժանում է չորս խմբի: Առաջինը՝ խոշոր տէրութիւնների գլոբալ եւ տարածշրջանային շահերն են եւ այն յարաբերութիւնները, որ հաստատուել են այդ պետութիւնների միջեւ: Երկրորդ գործօնը միջազգային յարաբերութիւններում նկատուող հիմնական միտումներն են, որոնք արտացոլւում են միջազգային կազմակերպութիւնների, մասնաւորապէս ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ-ի որոշումներում եւ օրակարգում: Երրորդ գործօնը, ըստ Օսկանեանի, հակամարտող երկու պետութիւններում տիրող ներքաղաքական ու տնտեսական իրավիճակներն են: Չորրորդն էլ՝ բանակցային պրոցեսի մասին հակամարտող կողմերի պատկերացումներն են, դրանց ցուցաբերած դիւանագիտական մօտեցումներն ու դիրքորոշումները:

«1992 թուականից ի վեր դիւանագիտական ակտիւութեան բոլոր փուլերում այս չորս գործօնները անուղղակի ազդեցութիւն են ունեցել եւ երբեք այսքան նշանակալի ու փոփոխական բնոյթ չեն կրել, որքան այսօր: Աւելին՝ այս գործօնները երբեք այսքան անկանխատեսելի փոփոխութիւնների փուլում չեն գտնուել», նշում է Օսկանեանը:

Այս փոփոխութիւններից Օսկանեանը մատնանշում է մեր տարածաշրջանում ամերիկեան նոր վարչակազմի մօտեցումները, Եւրամիութեան «Արեւելեան գործընկերութեան» ծրագրի մեկնարկը:

Փոփոխուող գործօններից ամէնաէականը, սակայն, ամերիկեան վարչակազմի ջանքերն են՝ ուղղուած հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորմանը:

«Պարաք Օպաման լրջօրէն ջանում է նպաստել այդ յարաբե-

Շար.ը էջ 18

ՀԱՅ ԴՊՐՈՑ

ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՏՕՆԱԽՄԲԵՑ ԻՐ ԿՐԹԱԿԱՆ ՃԱՌԱՅՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԸ

ՏՕԲԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ընթացիկ 2009 տարուան Մայիս 30-ին, կ.վ. ժամը 6.00-էն 9.00-ը, ջերմիկ եւ հայաբոյր մթնոլորտի մէջ, ամփոփ, այլապէս պատշաճ յայտագրով մը տօնախմբուեցաւ Լոս Անճելէսի Մխիթարեան վարժարանի հաստատման 30 ամեակը, Կլենտէյլ քաղաքի Հիլթըն պանդոկի գեղեցկօրէն բարեզարդուած հանդիսասրահին մէջ: Մօտ հինգ հարիւր հոգի հաշուող վարժարանի ծնողքներու, բարեկամներու, ուսուցիչներու, բարերարներու, մամլոյ եւ համայնքային հոգեւոր ներկայացուցիչներու շարքին, իրենց ներկայութեամբ առանձնակի ուշադրութիւն կը գրաւէին յատուկ Վիէննայէն ժամանած գլխաւոր պատգամաբեր, Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր՝ Գերպ. Եղիա Վրդ. Քիլաղպեան, անոր փոխանորդը՝ Հայր Վարդան Վրդ. Օհանեան եւ վանքի մատակարար՝ Հայր Ռաֆայէլ Անտոնեան: Նոյնպէս ողջունելի էին իրենց թեմական ներկայացուցչական հանգամանքով՝ ներկայութիւնը Հոգշ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Տ. Պարետ Վրդ. Երէցեան:

Լոս Անճելէսի Մխիթարեան վարժարանը, նման մեր միւս բոլոր կրթական դարբնոցներուն, իր նշանակալից եւ օգտաշատ ներդրումը բերած է մեր գաղութի կրթական, մշակութային եւ հոգեւոր կեանքէն ներս թերեւս 1979 էն սկսեալ: Ան, իր գոյութեան առաջին օրէն, սատար հանդիսացած է հայ լեզուի պահպանման, տիպար հայու կազմաւորման, եւ ազգային արժանապատուութեան գիտակցութեան զարգացման մեր նոր սերունդներուն մէջ: Անցնող 30 տարիներուն, շնորհիւ իր ջամբած հայեցի կրթութեան՝ Մխիթարեան վարժարանը նպաստած է հայապահպանման գուպարին, սերմանած է ուժեղ հայրենասիրութիւն:

Այս մտորումներով, գոհունակ սրտով մեր քայլերը առաջնորդեցինք դէպի Կլենտէյլ քաղաքի Հիլթըն պանդոկը, ուր տեղի պիտի ունենար արդար փառաբանանքը հայ վարժարանի մը, որուն առաքելութեան մարտահրաւէրը եղած է միշտ, հայ նոր սերունդներու քելութեան մարտահրաւէրը եղած է միշտ, հայ նոր սերունդներու հայեցի դաստիարակութիւնը, ինչ որ հպարտութիւն կը ներշնչէ հայու ապագայով մտահոգ մէն մի հայու:

Ժամ մը ընկերային ընդունելութեամբ սկսած ներկայ երեսնամեայ բացառիկ հանդիսութիւնը, իր յոբելինական հունին մէջ պիտի մտնէր, վարժարանի տնօրէն՝ Պրն. Ոսկան Մխիթարեանի սահուն հանդիսավարութեամբ: Ան, համառօտակի, իր աւուր պատշաճի խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց մասնաւորաբար Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր՝ Տ. Եղիա Վրդ. Քիլաղպեանին, Տեղակալ՝ Հայր Վահան Օհանեանին եւ վանքի մատակարար՝ Հայր Ռաֆայէլ Անտոնեանին, որոնք սիրայօժար ընդառաջած էին իրենց տրուած հրաւէրին: Անոնք այսօր ներկայ կը գտնուէին 30-ամեայ Մխիթարեան դպրոցի տարեդարձային տօնակատարութեան: Պրն. Տնօրէնը, նոյնպէս, շնորհակալութիւն եւ բարի գուարճութիւն յայտնեց ներկաներուն, որոնք միշտ նեցուկ կը հանդիսանային վարժարանին:

Պրն. Տնօրէնի խօսքէն ետք, հանդիսատեսները ուրախութեամբ հետեւեցան տեսաերիզի մը, որ լուսարձակի տակ կ՚առնէր Մխիթարեան Միաբանութեան հոգեւոր, կրթական եւ մշակութային ընդարձակ գործունէութիւնը Սփիւռքի տարածքին:

Այնուհետեւ, բեմահարթակ բարձրացաւ Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր՝ Տ. Եղիա Վրդ. Քիլաղպեան, որ ջերմօրէն շնորհաւորեց եւ գնահատեց Լ. Ա. Մխիթարեան վարժարանի 30-ամեայ կրթական, ուսումնական, ազգային ու հայրենասիրական վաստակը: Աբբահայրը, նաեւ, գնահատեց եւ խթանեց համանուն վարժարանի շուրջ բոլորուած ծնողներն ու բարեկամները, որոնց պատգամեց միշտ նեցուկ կանգնիլ անոր:

Մխիթարեան Միաբանութեան Աբբահայրը իր պատգամը կը փոխանցէ

Աբբահօր տեղակալ՝ Հայր Վահան Օհանեան, իր սրտի ջերմ գնահատանքի խօսքին մէջ, ի մէջ այլոց կարեւորեց Մխիթարեան վարժարանի կրթական եւ դաստիարակչական առաքելութիւնը եւ շեշտը դրաւ անոր գլխաւոր առաջադրանքը հանդիսացող հայերէն լեզուի ուսուցման վրայ: Հայ լեզուն, ըսաւ ան, անհաւասար միջոցն է հայը հայ պահելու տարաշխարհի ափերուն:

Վանքի մատակարար՝ Հայր Ռաֆայէլ Անտոնեան իր շնորհաւորական խօսքէն ետք, նոյնպէս ծանրացաւ հայեցի դաստիարակութեան եւ հայ լեզուի առաջնահերթութեան վրայ: Ան շնորհակալութիւն յայտնեց 30-ամեակին ներկայ՝ Մուրատ Ռաֆայէլեան դպրոցի լոսանճելոսաբնակ շրջանաւարտ ծնողներուն, անոնց ներկայութեան համար, եւ կոչ ուղղեց անոնց, իրենց զաւակները վստահելու Մխիթարեան վարժարանին, զօրավիգ կանգնելով օգնելու համար իրենց դպրոցին:

Սրտի խօսքերու բաժինը իր լրումին հասաւ Հոգշ. Տ. Պարետ Վրդ. Երէցեանի՝ Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի, եւ Գերշ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեանի՝ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ողջոյնի գիրերու ընթերցումով:

Վարժարանի տնօրէն՝ Ոսկան Մխիթարեան ելոյթի պահուն

Մխիթարեանի Վարժ.ի բոլորած 30-րդ պանծալի տարեդարձը յատկանշող 30 մոմերու մոմավառութեան յաջորդեց օրուան անակնկալը, որ յուզումնախառն հպարտութեամբ զեղուց ներկաներուն սրտերը: Օրուան հանդիսավար Պրն. Ոսկան Մխիթարեան պիտի բացայայտէր զայն:

Իբրեւ Հոգեւոր հովիւ, կրթական մշակ, գիրքերու հեղինակ, հայ խորանին ու հաւատքին նուիրեալ, 30-ամեայ Մխիթարեան Վրժ.ի ծառայութեան կոչուած հետեւողական եւ անխոնջ ծառայ եւ համեստութեան մարմնացում. ահա՝ Հայր Օգոստինոս Վրդ. Սեքուլեանը, որուն բոլորած ծառայութեան 65 տարիներու նուիրական վաստակը պիտի գնահատուէր սրահով մէկ, սիրոյ եւ խորը յարգանքի բուռն արտայայտութիւն՝ որոտընդոստ ծափահարութիւններով: Հայր Օգոստինոս Վրդ. Սեքուլեանին ընծայաբերին Արծաթեայ կողքով Նարեկ մը, որ յուզումով պատեց Մեծարեալին հոգեկան աշխարհը: Նաեւ, Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր՝ Գերպ. Եղիա Վրդ. Քիլաղպեան եւ Հայր Օգոստինոս Վրդ. Սեքուլեան յուշանուէրներ փոխանակեցին իրարու:

Տիրող արդէն իսկ շիկացած մթնոլորտը տակաւ ջերմացաւ շնորհիւ յայտագրի պաշտօնական մասին յաջորդող բաժնին, ուր ելոյթ ունեցան ծանօթ երգիչ Գօգօ Հայլիթեան եւ իր նուագախումբը: Տօնախմբութիւնը շարունակուեցաւ երգ ու պարով մինչեւ ուշ գիշեր:

Յաջող եւ գնահատելի յոբելինական տօնակատարութիւն մը՝ արդարեւ:

«Մասիս» ջերմօրէն կը շնորհաւորէ Լոս Անճելէսի Մխիթարեան վարժարանի հաստատման 30 ամեակը, որ ձեռնարկի սկիզբէն մինչեւ աւարտը գնահատելիօրէն ողջունուեցաւ եւ տօնախմբուեցաւ լրիւ հայերէն լեզուով: Ան ստեղծեց հայաբոյր, ջերմ, խանդավառիչ եւ օրինակելի մթնոլորտ: Նաեւ, «Մասիս» հպարտ կը զգայ Մխիթարեան վարժարանի արձանագրած կրթական, մշակութային եւ հայապահպանման ճանապարհին արձանագրած յաջողութիւններով, եւ կը մաղթէ, որ այն բոլոր ակնկալութիւնները, ինչպէս պատգամուեցան սրտի խօսքերու ընդմէջէն, նուիրագործուին, յօգուտ հայ լեզուի, կրթութեան եւ մշակոյթի զարգացման:

Բարի եւ բեղուն տարեդարձ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863

massis2@earthlink.net

Ընտրեցէք

ՀԲԸՄ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Ձեր Զաւակին Լաւագոյն Դաստիարակութեան Համար

AGBU HIGH SCHOOL PASADENA

(WASC ACCREDITED HIGH SCHOOL)

New Student Enrollment

Grades: 9-12

- College Preparatory Academic Program
- Honors and Advance Placement (AP) Level Instruction in All Subject Areas
- Small Class Sizes and Individual Attention
- Promoting Personal Growth and Academic Success
- Comprehensive Armenian Curriculum
- College Counseling and Annual University Visitations
- Co-curricular and Extra Curricular Activities Including Competitive Sports
- Safe and Secure Environments; Closed Campus

Make the Quality Choice...
Choose AGBU High School - Pasadena
for your child's high school education.

For more information, campus tour and meeting with the administration, call:

626 794-0363

2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104

(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՍԱՆ ՏԻԵԿՈՅԻ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ 32ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԷՑԿԻՆ ԱՐԱՔՍԻ ԹԱԹՈՒԼԵԱՆ

Կիրակի, 31 Մայիս, 2009, տեղի ունեցաւ Ս. Յովհաննու-Կարապետ եկեղեցւոյ 32րդ տարեդարձի տօնակատարութիւնը:

Եկեղեցւոյ հանդիսութեանց կը հովանաւորէր թեմիս բարեջան առաջնորդ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեան: Հիւրաբար ներկայ էր Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեան:

Սուրբ եւ անմահ պատարագը մատոյց առաջնորդ սրբազան հայրը, որ ձեռնադրեց 3 դպիրներ, որոնք են Յակոբ Մարկոսեանը, Լեւոն Բարսեկովը եւ Էնտրիւ Պողոսեանը: Սարկաւագ ձեռնադրուեցաւ Ժիրայր Զատրճեան:

Սրբազան հայրը, հոգեշունչ եւ ոգեւորիչ քարոզ ու խրատական տուաւ ձեռնադրեալներուն, որպէսզի դառնան պիտանի եւ հոգեւոր սնունդով առլցուն շարունակեն իրենց ծառայութիւնը եկեղեցւոյ:

Պատարագի վերջաւորութեան վկայականաց բաշխման արարողութիւն տեղի ունեցաւ կիրակնօրեայ վարժարանի եւ հայկական դպրոցի աշակերտութեան: Սրբազան հայրը բարձր գնահատեց հայկական դպրոցի եւ կիրակնօրեայ վարժարանի ուսուցչական կազմին եւ տնօրէնութեան աշխատանքները:

Պատարագէն անմիջապէս ետք, եկեղեցւոյ «Խոշարեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ ճաշկերոյթ եւ պատշաճ յայտագիր:

Օրուան հանդիսավարն էր հոգաբարձութեան անդամ՝ Ռոպէրթ Յակոբեան, որ ձեռնհասօրէն վարեց յայտագիրը:

Կիրակնօրեայ եւ հայկական դպրոցի աշակերտները, արտասանեցին Տէրունական աղօթքը, ճաշակեսցուքը, երգեցին ամերիկեան եւ հայկական քայլերգները:

Գեղարուեստական յայտագրին մասնակցեցան, Մէլընի Պրուսալեան՝ սրինգ, Նիքոլա Մնտրոյեան՝ թաւջութակ, դաշնակի ընկերակցութեամբ Գանի Ագաշեանին:

Տ. Տաթեւ Աւ. Քհնյ. Թաթուլեան, հովիւ Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ, իր ողջոյնի խօսքը աւարտելէ ետք, ներկայացուց եկեղեցւոյ երկու ժրաջան անդամուհիներ՝ Անի Լանուզա-Գալայճեանը եւ Մարալ Փուչիկեանը, որոնք ստացան առաջնորդարանի կողմէ ընծայուած Hye-Spirit - հայ հոգի շքանշանը, իրենց անխոնջ աշխատանքին եւ եկեղեցւոյ հանդէպ իրենց սիրոյն եւ ծառայասիրութեան համար:

Օրուան «Տարուան Անդամը» Տիկ. Միրիըն Պապիկեան եւ Կէրի Դաքէսեան եւս արժանացան առաջնորդարանի կողմէ իրենց երկար տարիներու ցուցաբերած աշխատանքին եւ ծառայասիրութեան համար վկայագրեր, ձեռամբ սրբազան հօր եւ տէր հօր:

Հուսկ բանքը կատարեց Վաչէ Արքեպս. Յովսէփեան, քրիստոնէական ու հայկական հոգիով լիցքաւորուած, քաջալերանքի խօսքերով եւ գեղեցիկ արտայայտութեամբ:

Թեմիս Առաջնորդ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեան աղօթքով փակեց յիշատակելի ու արժանավայել հանդիսութիւնը:

ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ «ՆԱՄԱԿՆԵՐ ՊԷՅՐՈՒԹԷՆ» ՀԱՏՈՐԻ ԳԻՆԵՁՕՆԸ

Պէյրութահայ ծանօթ գործատէր եւ բարերար Արմէն Յարութիւնեան իր տիկնոջ՝ Միմիի հետ Լոս Անճելոս պիտի գտնուին քանի մը շաբաթով: Արմէն Յարութիւնեան կը պատկանի ժամանակակից հայ բարերարներու խումբին: Տասնամեակներու ընթացքին կատարած է բազմաթիւ սրտաբուխ նուիրատուութիւններ, կրօնական, բարեսիրական եւ կրթական հաստատութիւններու Սուրիոյ եւ Լիբանանի հայութեան, ինչպէս նաեւ իր հայրենիքին: Աշխոյժ կերպով մասնակցած է հայ ազգային կեանքին: Մեծապէս հետաքրքրուած է հայ ապագայ սերունդին հայեցի դաստիարակութեամբ, մշակութային ծրագիրներով, կրօնա-բարոյական դաստիարակութեամբ եւ հայրենի ճարտարարուեստի զարգացմամբ:

Իրենց բարեգործաութեան եւ ազգանուէր գործունէութեան համար Վեհափառ Վազգէն Ա. Կաթողիկոսը Արմէնին պարգեւատարած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Բարձրագոյն շքանշանով իսկ Միմին՝ Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով:

Արմէն Յարութիւնեան միաժամանակ գրելու շնորհքով օժտուած անձնաւորութիւն մըն է: Հեղինակ է բազմաթիւ յօդուածներու, յատկապէս թուագրուած «Նամակներու» որոնք լոյս տեսած են եւ կը տեսնեն հայ մամուլի մէջ (Պէյրութ-Լոս Անճելոս եւ այլ գաղթավայրեր) եւ ուղղուած հայ հասարակականութեան: Իր նամակներուն մէջ Ա. Յարութիւնեան կը գնահատէ, կը քաջալերէ եւ իր անձնական կարծիքը կը յայտնէ որոշ ազգային հրատապ հարցերու մասին: Երբեմն սուր երգիծանքով իր անհամաձայնութիւնը կը յայտնէ մէկ այլ գրութեան կամ կարծիքի վերաբերեալ: Յաճախ կ'անդրադառնայ հայութեան անցեալի կեանքին՝ Հալէպի եւ Պէյրութի մէջ: Ան ցարդ գրած է շուրջ 300 նամակներ:

Վերջերս լոյս տեսաւ Արմէն Յարութիւնեանի «Նամակներ Պէյրութէն» հատորը: Հայ Այնթապցիներու եւ Թէքէեան Մշակութային Միութիւնները միատեղ երեկոյ մը կը կազմակերպեն մեծարելու Յարութիւնեան ամոլը եւ հանրութեան ներկայացնելու Արմէն Յարութիւնեանի նոր լոյս տեսած «Նամակներ Պէյրութէն» գիրքի Ա. հատորը գինեձօնով մը: Հալէպի Կրթասիրաց վարժարանի շրջանաւարտից միութիւնը եւ Ամերիկահայ Գրողներու Միութիւնը իրենց մասնակցութիւնը պիտի բերեն այս մեծարման հանդիսութեան որ տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 25 Յունիս, 2009, երեկոյեան ժամը 7:30ին Կլէնտէյլի Կեդրոնական Գրադարանի հանդիսասրահին մէջ (222 East Harvard Ave.): Հանրութիւնը ջերմօրէն հրաւիրուած է ներկայ գտնուելու այս ձեռնարկին:

Տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն եւ ներկաները առիթ պիտի ունենան մօտէն ծանօթանալու հեղինակին հետ:

ԼԱ ԳԱՆԻԱՏԱ-ՔՐԷՍԷՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՃՈՒԽԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ ՆՈՐ ԳՆՈՒԱԾ ԵՒ ՕՐՀՆՈՒԱԾ ԿԱԼՈՒԱԾԻՆ ՄԷՋ

Թեմական Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի կողմէ եւ մասնակցութեամբ Լա Գանիատա-Քրէսէնթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեանի, Ծուխին գնած նոր կալուածի օրհնութենէն ետք, անհրաժեշտ փոփոխութիւններ կատարուեցան եւ յիշեալ շէնքին մէջ ***ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ*** *21ի առաւօտեան ժամը 9:30ին պիտի սկսի ժամերգութիւնը, իսկ* ***ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ*** *պիտի մատուցուի ժամը 10:30ին: Արարողութեանց պիտի հանդիսապետէ Թեմական Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:*

Կալուածը կը գտնուի Լա Քրէսէնթա Քաղաքի մէջ Ֆութհիլ Փողոցին վրայ, որուն հասցէն է. 2767 Foothill Blvd., La Crescenta, CA 91214: Եկեղեցին պիտի ծառայէ գլխաւորաբար Լա Գանիատա, Լա Քրէսէնթա, Մոնթրոզ, Թահանկա եւ Սանլէնտ քաղաքներուն մէջ բնակութիւն հաստատած հայրութեան հոգեւոր կարիքներուն համար:

Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին եկեղեցի՝ միասնաբար աղօթելու եւ լսելու օրուան պատգամը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այս տարի լրանում է Լոս Անջելեսի «ՍԻՓԱՆ» երգչախմբի հիմնադրութեան 30-ամեակը
Տօնական համերգի համար հրաւիրում են երգիչ- երգչուհիներ
Երգչախմբի հիմնադիր եւ գեղ. ղեկավար՝
ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ
Խմբավար, Երեւանի օպերային թատրոնի նախկին խմբավար՝
ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐՈՍԵԱՆ
Տեղեկութիւնների համար կանգահարել
Հեն. Անասեան՝ (323) 466-3726, 217-5730
Ս. Վարոսեան՝ (323) 469-1879, 610-1314
Ռաֆֆի Թորոսեան՝ (626) 797-9788

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ի պատիւ

Արմէն եւ Միմի Յարութիւնեանների

Կազմակերպութեամբ՝
Հայ Այնթապցիների Մշակութային Միութեան
Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելոսի Մասնաճիւղի

Մասնակցութեամբ՝
Ամերիկայի Հայ Գրողների Միութեան
Հալէպի Կրթասիրաց Վարժարանի Շրջանաւարտից Միութեան

Պիտի ներկայացուի

ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

«ՆԱՄԱԿՆԵՐ ՊԷՅՐՈՒԹԷՆ Ա.» *հատորը*

Գիրքը կը ներկայացնէ՝ **ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ**
Յարութիւնեան Ամոլ Մտկնաբար՝ **ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ**
Հատորէն Ընթերցումներ՝ **ԳԷՈՐԳ ՔԷՕՇԿԵՐԵԱՆ**
Հանդիսավար՝ **ԹԱԳՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ**

Գեղարուեստական Յայտագիր

25 ՅՈՒՆԻՍ, 2009, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:30
ԿԼԷՆՏԷՅԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
222 E. HARVARD AVENUE, GLENDALE

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ ***ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ***

Massis Weekly

Volume 29, No. 22 **Saturday, JUNE 20, 2009**

Ter-Petrosian Pushes For Broader Opposition Collaboration

YEREVAN - Armenia's main opposition has again called on all "democratic forces" to join its continuing push for a leadership change in the country, indicating that last month's elections to Yerevan's municipal council swept by the ruling party brought forth no need for changing its further action mode.

Addressing thousands of his supporters at a rally in downtown Yerevan late on Friday, former president Levon Ter-Petrosyan said his Armenian National Congress (HAK) has never intended to establish hegemony for the opposition field or assimilated other political parties.

"The most important thing for us has been not a structural homogeneousness, but a common understanding of opposition political forces of the need for solving major problems facing the country," Ter-Petrosian said. "The HAK will never refuse cooperation with any opposition force."

"The opposition field is so wide that it can make room for all. We are ready to welcome any political party to the opposition camp without fearing competition and without missing any opportunity for cooperation."

In his 45-minute speech at the rally Ter-Petrosian made further accusations against President Sarkisian blaming him for "criminalizing" the May 31 vote in Yerevan.

"The criminalization of the elections could be regarded as an individual case if there were no tendency for a total criminalization of the country's governance," the opposition leader charged.

Ter-Petrosian also criticized the West for effectively conniving at the fraudulent conduct of the elections. Calling on his supporters to get rid of illusions about the "justice" of the West, Ter-Petrosian at the same time said that this skepticism should not spread on western or panhuman values to which, he said, the Armenian people has provided its strong commitment.

The opposition leader also warned political analysts and media pundits against making serious efforts to analyze the officially announced results of the Yerevan vote and thus making far-going conclusions about a possible reshape in the political field "in order not to legitimize the elections that cannot be called such."

Ter-Petrosian said the HAK "has come out of the Yerevan election stronger" and has "no worries" since the election results have no connection with the reality. He added that the opposition will continue to seek a leadership change using only constitutional means, "which has fully justified itself by turning the Congress into a viable institutional force in the past year and a half."

Continued on page 3

US Congress Appropriation Subcommittee Approves Aid for Armenia and Nagorno Karabagh

WASHINGTON, DC -- Today, Rep. Schiff announced that the House Appropriations Subcommittee on State and Foreign Operations approved $48 million in foreign aid for Armenia and $10 million in foreign aid for Negorno Karabagh. Rep. Schiff, a member of the subcommittee, worked closely with Chairwoman Nita Lowey (D-NY) to ensure this critical funding was included in the foreign aid bill.

"This is important funding that will help ensure peace and greater economic stability in the Caucasus," said Schiff. "Armenia and Nagorno Karabagh are important partners in a troubled and economically stagnant region, and this funding

Continued on page 4

Iranians Continue Yerevan Embassy Protests

Iranian opposition supporters demonstrate outside the Iranian embassy in Yerevan

YEREVAN -- Several dozen Iranians rallied outside the Iranian embassy in Yerevan for the second day on Tuesday to protest against the official results of Friday's disputed election that gave victory to the incumbent

Continued on page 2

U.S. Mission to OSCE Slams Widespread Fraud and Intimidation During Yerevan Municipal Elections

Millennium Challenge Corporation Cuts Aid Over Democratic Governance

The United States mission to the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) in a statement released last Thursday, has slammed the "widespread fraud and intimidation" during Yerevan Municipal elections on May 31st, noting that it "repeated a disturbing pattern of similar violations witnessed in previous elections in Armenia", but urged opposition leaders to "represent their voters through full and active participation in the governance of Yerevan."

"We observed incidents of ballot-stuffing, multiple voting, falsified vote counts, intimidation of party proxies and observers, and the illegal presence of unauthorized and unidentified individuals in polling stations. These clear violations of OSCE commitments – and of the Armenian Election Code – were especially egregious in Yerevan's Malatia-Sebastia district, but were observed in other electoral districts as well," the mission said.

MCA Cuts Aid to Armenia

Earlier this week, the U.S. Millennium Challenge Corporation said a $67 million project aimed at reconstructing and repairing about 1,000 kilometers of rural roads in Armenia, which is part of the $235.6-million-worth Millennium Challenge Account program, will not be implemented anytime soon.

The agency, which administers

US State Department Freedom and Democracy Report on Armenia Page 3

the U.S. Millennium Challenge Account (MCA) program, froze the project following a harsh government crackdown on the Armenian opposition sparked by the disputed presidential election of February 2008. The MCC board of directors has extended the freeze during quarterly meetings held over the past year.

In a statement issued after its latest meeting in Washington chaired by Secretary of State Hillary Clinton, the board said MCC " will not resume funding for any further road construction and rehabilitation." "The responsibility for this outcome remains with the government of Armenia, whose actions have been inconsistent with the eligibility criteria that are at the heart of the MCC program," Rodney Bent, the corporation's acting executive director, was quoted as saying.

The decision came shortly after the U.S. State Department reiterated its discontent with Yerevan's human rights record in an annual report on U.S. efforts to promote freedom and democracy around the world. It again described the February 2008 ballot as "significantly flawed" and criticized the ensuing government crackdown on the opposition.

"Authorities used harassment and intrusive application of bureaucratic measures to intimidate and retaliate against government opponents," said the report. "Police beat pretrial detainees and failed to provide due process in some cases … Courts remained subject to political pressure from the executive branch, with the selective prosecution of political opponents and absence of due process reflecting the judiciary's lack of independence."

"U.S. officials repeatedly have warned the government that MCC funding is contingent upon its progress in democratic practices and in meeting the MCC indicators," added the report.

Six Major US Companies Lobbing Against Armenia Genocide Bill

WASHINGTON, DC -- Five military contractors and an energy company have stepped into the Armenian Genocide denial campaign lobbying against any resolution that could pass by the U.S. Congress. The six companies have strong ties to Turkey.

None would state their position on the House resolution, but industry analysts and others said they likely lobbied against the measure to show support for Turkey, an important market for weapons and industrial products.

"They don't want to be seen opposing a resolution that has a very evident human rights element," said Rouben Adalian, director of the Armenian National Institute, a Washington research organization. "It would put them on the side of denying history and denying genocide."

BAE Systems Inc., Goodrich Corp., Northrop Grumman Corp., Raytheon Co., United Technologies Corp. and energy producer Chevron Corp. spent $14 million to lobby Congress in the first quarter of this year.

Continued on page 2

Racist Comments on Armenians by KFI Radio What is the Next Target and What We Can Do?

By Simmon Papukyan

On May 13 at 8:33am Bill Handel, Lara Hermanson and Gary Hoffman on KFI 640AM, broadcasted from Burbank CA, suggested reducing the U.S. population by 50% to save the government money. Then came a wisecrack about starting with the Armenians and selling Glendale city . So far, it's just tacky, and par for the shock-radio course. One person (Greg Garabedian) who heard this called and e-mailed to complain. The upshot? On May 14 at 5:10am the e-mail was read and mocked again and that same is suggested to be done with Irish and Italians…. But then came "What the Turks started, Bill will finish." Imagine if similar comments were made against Jews or Blacks! They would turn the world upside down until they got justice! It's time we do the same and stop being so passive. If you are truly offended by this, then take 10 minutes (I've spent days talking and organizing people..met with community organizations) out of your day and do something about it.

You'll certainly want to hear the two clips. Unfortunately, you can't hear the real offender off KFI's website. Why? They've taken down that show from their website. Hmm, wonder why that is. Fortunately, they were downloaded ahead of time and are now available at: http://www.burbankanc.org/KFI.mp3

So called "apology" followed on 06/12/2009 at 6:15am (you can listen to it yourself at http://www.kfi640.com/pages/podcasting/ …click the 6:00am podcasting tab)

After meeting with their management and Bill himself by Armenian community leaders,

Practically not management, nor Bill himself did not apologize.

In the beginning of 20th century Talat Pasha and his accomplices suggested to do the same ….what happened to them?

Let's flood these people. Let's fill up their voice mail system.

You can find some other numbers for them online too.

KFI station numbers:

Main : (818) 559-2252

Programming: (818) 566-6476

To contact these people, here are some options:

snail mail address: 3400 W Olive Ave Ste 550 , Burbank CA 91505

e-mail: Robin Bertolucci, Program Director, KFI AM640, RobinBertolucci@clearchannel.com mailto:RobinBertolucci@clearchannel.com

Corporate headquarters:

Clear Channel, 200 East Basse Road , San Antonio , TX 78209

Tel:210/822-2828

webmaster@clearchannel.com <mailto:webmaster@clearchannel.com>

I urge you to file a complaint with the FCC, the federal agency that oversees all public broadcasts.

I have attached a link:

https://esupport.fcc.gov/sform2000/formE!input.action?form_page=2000E

or

http://esupport.fcc.gov/complaints.htm<http://esupport.fcc.gov/complaints.htm>

Make sure to fill up the form properly:

Station call sign: KFI Radio station frequency: 640

Station location: Burbank, CA

Program name: Bill Handel Date: May 13, 2009 Time: 8:30 AM

Date: May 14, 2009 Time: 5:10 AM

Be sure to hit submit on the bottom.

Iranians Continue Yerevan Embassy Protests

Continued from page 1

President Mahmoud Ahmadinejad.

The protesters, most of them university students, also condemned the deaths of seven fellow Iranian opposition supporters who were shot dead during a massive anti-government demonstration in Tehran on Monday.

Organizers said the demonstration was part of worldwide street protests staged by Iranian expatriates supporting Mir Hossein Musavi, the main opposition presidential candidate. The small crowd chanted slogans and held banners accusing the Iranian government of rigging the vote. An Armenian police unit kept it from getting too close to the embassy building.

"Between 2,000 and 2,500 of our citizens voted here [in Armenia] and 70-80 percent of them voted for Musavi," one young man told RFE/RL. "The same happened all over Iran."

In contrast to Monday's rally, many protesters wore dark sunglasses and medical facemasks. "We want to make sure they don't recognize us by face," one of them explained. "Why? Because our state is such that we may get in trouble. And we, the students living here, don't want to have problems."

Other protesters claimed that Iranian embassy officials phoned Iranians living in Armenia the previous night and warned them against attending further protests against their government. "But we still decided to come here because young people in Iran have been killed," said one young woman.

Armenia, which maintains close political and economic ties with the Islamic Republic, has recognized the vote results, with President Serzh Sarkisian sending a congratulatory message to Ahmadinejad at the weekend.

Armenian Rights Activist Jailed for 'Assault'

YEREVAN -- An Armenian human rights campaigner is facing up to five years in prison for allegedly assaulting two police officers that visited him after he claimed to have been intimidated by government loyalists during the municipal elections in Yerevan.

Arshaluys Hakobian, a member of the Armenian Helsinki Association (AHA), monitored the May 31 vote in the capital along with the chairman of the group, Mikael Danielian. The two men say they were forced to leave a polling station in Yerevan's Malatia-Sebastia district, the main election trouble spot, after witnessing and protesting against vote irregularities.

Hakobian lodged a formal complaint with Armenia's Special Investigative Service (SIS), a law-enforcement agency subordinated to state prosecutors. The SIS responded by summoning him for questioning.

Hakobian was taken to the police department of Yerevan's central Kentron district on June 5 after a bitter argument with two police officers that visited his apartment and handed him a SIS summons. He was charged with assaulting the officers and remanded in pre-trial custody the next day. The accusation carries hefty fines and up to five years' imprisonment.

A police statement last week claimed that Hakobian punched one of the policemen and slapped the other after they "reprimanded" him for being drunk and wrongly signing the document. The AHA activist strongly denies that, according to his defense lawyer and representatives of Armenia's state human rights ombudsman who visited him in Yerevan's Nubarashen prison.

Danielian likewise insisted on Monday that Hakobian did not attack the policemen and was himself beaten up at the Kentron police. He claimed to have obtained photographs of his comrade showing traces of violence on his face and head.

The official version of events has also been dismissed by several international and regional human rights organizations. In a joint statement issued last week, they demanded the immediate release of Hakobian.

The Moscow-based Memorial Human Rights Center also expressed "outrage" at the case in a separate appeal to the Armenian authorities. "Attacks on independent journalists, members of opposition organizations and human rights activists in Armenia have become a virtually daily occurrence," it said.

Turkish-Armenian Roadmap Deal 'Not Implemented'

A controversial framework agreement on the normalization of Turkish-Armenian relations announced in late April is not being implemented, according to Turkey's ambassador to Azerbaijan.

"There is no progress in the implementation of the roadmap signed between Turkey and Armenia," Hulusi Kilic was quoted by the Azerbaijani APA news agency as saying on Tuesday. "Nothing is being done. Nothing has changed."

Kilic gave no reasons for that. He reportedly said last month Turkey will not reopen its border with Armenia until the Nagorno-Karabakh conflict is resolved, echoing statements repeatedly made by Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan in recent months.

Six Major US Companies Lobbing Against Armenia Genocide Bill

Continued from page 1

Besides the genocide resolution, the companies lobbied on Pentagon spending, climate change, taxes and more.

United Technologies, which sells Sikorsky helicopters to Turkey, says it provided information to lawmakers "that helped round out their understanding of the international trade and national security interests involved."

But businesses lobbying against the resolution are not being "good corporate citizens," said Rep. Adam Schiff, D-Calif., its lead sponsor.

Lobbying on human rights issues comes with risks, said Gerry Keim, associate dean at Arizona State University's W.P. Carey School of Business. Several companies halted their efforts opposing restrictions on white minority-ruled South Africa in the 1980s when anti-apartheid activists applied pressure.

"Originally, they were concerned about markets in South Africa. Then they were concerned about markets here," Keim said.

Other analysts say any public backlash against companies lobbying on the Armenia genocide resolution would be minimal because the firms serve governments, not individual consumers who could boycott their products.

The House Foreign Affairs Committee has not taken up the resolution and the Senate does not have a version. A spokeswoman for the House committee said its chairman has not decided when the resolution — or other pending bills — will be taken up as the House considers legislation on Pakistan, State Department funding and other matters.

But pressure on the six companies to avoid offending Turkey is intense. Among the ventures between U.S. businesses and Turkey are a $3 billion contract from Northrop to a Turkish company to be a supplier for fighter jets. Goodrich Corp. and a Turkish firm agreed to a joint venture for maintenance and repair work on engine components. BAE Systems and a Turkish company jointly market and supply armored vehicles to the Turkish armed forces.

Chevron holds a stakes in a pipeline that crosses the country. Raytheon has agreed to sell to Turkey Stinger missile launcher systems valued at $34 million and is working to sell its missile defense systems.

US State Department Bureau of Democracy, Human Rights, and Labor Freedom and Democracy Report on Armenia

Part 1: Political and Human Rights Conditions

Armenia is a constitutional republic with a population of approximately 3.2 million. The constitution provides for an elected president and a unicameral legislature (the National Assembly). The country has a multiparty political system. The significantly flawed 2008 presidential elections resulted in a political crisis that remains unresolved. On March 1, 2008, the government used force to disperse demonstrators, arrested scores of protestors, and imposed a 20-day state of emergency that severely restricted media freedoms and the right of assembly. Clashes between demonstrators and security forces resulted in 10 deaths. The government's human rights record deteriorated significantly after the March violence. Authorities used harassment and intrusive application of bureaucratic measures to intimidate and retaliate against government opponents. Police beat pretrial detainees and failed to provide due process in some cases. The National Security Service and the police acted with impunity and engaged in arbitrary arrest and detention; courts remained subject to political pressure from the executive branch, with the selective prosecution of political opponents and absence of due process reflecting the judiciary's lack of independence; prison conditions remained cramped and unhealthy; and authorities did not always respect citizens' privacy. Journalists continued to practice self-censorship, the government enacted a controversial two-year moratorium on new TV and radio licenses, and the government and laws restricted religious freedom. Violence against women and spousal abuse, trafficking in persons, discrimination against persons with disabilities, and societal harassment of homosexuals also were reported.

Part 2: U.S. Government Democracy Objectives

The U.S. democracy and human rights strategy focuses on promoting democratic institutions and processes, political pluralism, an independent media, an independent judiciary, the rule of law, a vibrant civil society, respect for human rights, freedom of religion, and institutional capacity of government agencies and NGOs to combat trafficking in persons. U.S. assistance has worked to improve electoral systems, procedures, and infrastructure, as well as to enhance the role of civil society in promoting democratic electoral processes. Continued implementation of the country's Compact with the Millennium Challenge Corporation (MCC) that entered into force in September 2006 depends on progress in democratic practices and on its policy performance on MCC's "Ruling Justly" indicators. This reinforces the importance of promoting democratic and human rights reforms to underpin the broader bilateral relationship.

In response to the flawed presidential elections and other democratic backsliding in Armenia in 2008, the United States has intensified work with civil society, independent media, local government, women and youth activists, and reformers within the government to reverse negative trends and respond to public demand for reform and democratization. Promoting the engagement of informed citizens in political processes and encouraging a more representative political culture are particularly critical in reversing anti-democratic trends. Through a wide array of assistance programs, the United States seeks to support government watchdogs and human rights organizations to increase accountability and transparency in the government, and to support anticorruption efforts that foster a culture of lawfulness among both the government and the governed. The United States also has continued pursuing its key objective of combating trafficking in persons in the country.

Part 3: Supporting Top Priorities and Other Aspects of Human Rights and Democratic Governance

U.S. officials use diplomatic engagement to promote democracy and human rights-related goals with government officials, political parties, civil society, and media representatives at all levels, and also regularly convey these messages through local media. Key activities included pressing for due process rights for jailed political figures, freedom of assembly, media freedom, and accountability for government actions during the 2008 elections and the ensuing political crisis. U.S. officials repeatedly have warned the government that MCC funding is contingent upon its progress in democratic practices and in meeting the MCC indicators, and the United States withheld some funding during the year when setbacks occurred. The United States continues to implement its three-year democracy promotion strategy, part of which focuses on raising the integrity of the country's electoral processes in the months before Yerevan mayoral elections in May 2009. The United States provided a broad array of assistance to promote free and fair presidential elections in February 2008. This included programs to improve the accuracy of the country's national voter list; strengthen election administration; increase voter awareness of elections-related public policy issues; strengthen the capacity of political parties to develop constituencies and issue-based platforms that respond to citizen interests; improve media coverage of the campaign and public policy issues; promote citizen participation; and enhance the ability of judges, prosecutors, and defense lawyers to handle election-related grievances. U.S. efforts in support of an independent judiciary included providing translations and training to prosecutors and judges on case law supporting the European Convention on Human Rights. U.S. efforts also have been crucial in the drafting of a Judicial Code of Ethics, a law on the defense bar, and an annual bar exam that admits new attorneys in a transparent and objective manner. The United States continues to conduct training programs for judges, prosecutors, attorneys, and police with the aim of bringing law enforcement and judicial practices into line with international standards. These training programs have focused on a defendant's right to confront witnesses, domestic violence, financial crime investigations, and the investigation and prosecution of corruption.

While the United States continues to support the development of more professional and sustainable media outlets and to promote independent regional media organizations, new emphasis is being placed on supporting the development of alternative sources of information and raising awareness of the law on freedom of information among government officials, journalists, lawyers, judges, NGOs, members of parliament, and political party members. Additionally, the United States provided funding to train journalists in international journalism standards. The United States further supports freedom of information via support of four American Corners that provide information about U.S. democratic institutions. To promote the rule of law and fight corruption, the United States advocates for improved anticorruption legislation that limits judicial discretion in sentencing and increases penalties for perjury, bribery, and related crimes. The United States also provides funding to civil society groups to investigate and expose corruption in schools and the court system. U.S. assistance works to reduce corruption by establishing and supporting Advocacy and Action Centers in four regions. These centers provide support to citizens to help resolve corruption-related problems, offer legal assistance, and provide a mechanism for reporting corruption and directing complaints to government agencies. In addition, the program strengthens anticorruption institutions, including the government's Human Rights Defender (ombudsman). Separately, a U.S.-funded legal socialization project was implemented in over 150 secondary schools to teach students about their rights and responsibilities under the law, and radio series were sponsored to raise awareness on human rights and combating corruption.

U.S. officials promote a vibrant civil society by encouraging the government, independent and opposition political parties, and civil society organizations to engage in constructive dialogue on governance issues. With U.S. funding, local advocacy NGOs pursue initiatives to promote human rights, democratic development, fair and transparent electoral processes, political party development, and civil society. U.S.-supported NGOs also continue to make inroads in supporting mental health care, building capacity to plan and execute advocacy campaigns, lobbying on major environmental cases, and strengthening dialogue between local authorities and communities on local issues. A grassroots youth community action program in more than 80 communities throughout the country has mobilized youth to address local issues and tackle community problems through advocacy and direct action.

To promote respect for human rights, U.S. officials maintain collaborative relations with local human rights defenders and human rights NGOs. U.S. funding for some of these NGOs helped improve independent reporting of human rights abuses. Other funding allowed for trial monitoring of court cases of opposition members arrested for their role in protests related to the presidential elections. In response to a government request for assistance to set up an independent commission to investigate the March 1-2 violence, U.S. officials suggested, and subsequently arranged and funded, a visit to the country by former members of the U.S. 9/11 Commission staff to share their bipartisan experience on investigating a national crisis. U.S. funding also provided training to youth throughout the country on the themes of tolerance, mutual understanding, human rights, and democratic values. Additional funding supported public awareness campaigns, training programs, and shelters for victims of domestic violence. U.S. officials frequently discuss religious freedom problems with government and religious leaders as part of the overall policy to promote human rights. To combat human trafficking, U.S. officials meet regularly with government interlocutors and members of the international antitrafficking working group to support their efforts. U.S. officials monitor trafficking trials and propose recommendations on antitrafficking policy and funding objectives to the government, and U.S. antitrafficking assistance provides annual funding to a shelter that offers safe haven, medical, social, and legal services for victims of trafficking. U.S. assistance also continues to provide training for the Border Guards Service, the National Security Service, and the police on antitrafficking prevention and detection efforts. Other funding supports raising public awareness about the forms and dangers of trafficking.

Ter-Petrosian Pushes For Broader Opposition Collaboration

Continued from page 1

The HAK announced a break in public rallies until September 18 as its leader repeated his call for all democratic political forces to rally around the opposition platform.

As part of this platform, Ter-Petrosian suggested a dozen points of cooperation, including the demand that the Sarkisian administration stop questioning the fact of genocide by agreeing to establish a joint Armenian-Turkish panel of experts to study the historical background of Ottoman-era killings of more than a million Armenians and efforts to avert great Armenian concessions in the continuing negotiations with Azerbaijan over Nagorno-Karabakh.

Other points unveiled by the opposition leader included the release of jailed opposition members, a credible international investigation of the deadly unrest of March 1-2, 2008, a major overhaul of the country's electoral system and abolishing economic monopolies, etc.

Continued from page 1

ABMDR Opens Stem Cell Harvesting Center in Yerevan

Facility is a major advance toward life-saving bone marrow transplants

LOS ANGELES -- The Armenian Bone Marrow Donor Registry (ABMDR) recently unveiled its Stem Cell Harvesting Center in Yerevan with a grand opening celebration. The much-anticipated event was attended by scores of ABMDR donors, sponsors, patients, physicians, and special guests including VivaCell-MTS general manager Ralph Yirikian, a major supporter of the registry; Archbishop Tatev Sargsyan, who conveyed a special commendation from His Holiness

A scene from the center's opening (ABMDR photo)

Karekin II, Catholicos of All Armenians; ABMDR Advisory Board member Nani Oskanian; a representative from Armenia's Ministry of Health; and a group of supporters from Los Angeles who had traveled to Armenia to take part in the celebration.

"The opening of the Stem Cell Harvesting Center was an extremely touching experience for every one of us," said Dr. Sevak Avagyan, executive director of ABMDR Armenia. "While it was wonderful to be surrounded by so many friends, supporters, and colleagues, ultimately the most heartwarming sight was that of our patients and stem cell donors finding common ground in the new facility, where hope awaits those afflicted by life-threatening diseases." Accordingly, Dr. Avagyan added, the honor of cutting the ribbon of the Stem Cell Harvesting Center was given to Mrs. Varduhi, the ABMDR's latest bone marrow stem cell donor.

Commenting on the opening of the center, Dr. Frieda Jordan, president of the ABMDR Board of Directors, said, "We've been working on this project for the past year, sparing no effort or resource for its realization." After acquiring the facility, the ABMDR recruited top medical talent and began the arduous process of training personnel and securing medical machinery.

As Dr. Jordan explains, the project was made possible by a number of major corporate and individual donations, as well as grassroots support through the registry's first-ever telethon, held on April 13 last year. With a total of $850,000 raised, the ABMDR was able to renovate the Stem Cell Harvesting Center site, equip it with state-of-the-art machinery, and continue to train personnel.

In 2006, the ABMDR's HLA tissue-typing laboratory passed the inspection of the European Federation of Immunogenetics (EFI). In May this year, the laboratory passed the EFI's second inspection "with flying colors," paving the way for the future accreditation of the Stem Cell Harvesting Center itself.

The only one of its kind in the region, the ABMDR's Stem Cell Harvesting Center can store and harvest stem cells provided by healthy bone marrow donors. The stem cells subsequently can be utilized in transplants for patients suffering from life-threatening blood-related diseases such as leukemia and other cancers. "It was absolutely critical to have a stem cell harvesting center in Armenia, since the majority of the ABMDR's bone marrow stem cell donors are residents of the republic," Dr. Jordan said. "Having this facility in the country means that local stem cell donors will be spared the often exorbitant expense and inconvenience of traveling abroad to donate their stem cells. The center is equipped with cutting-edge medical machinery that allows our staff to perform not only HLA tissue typing, stem cell harvesting, and cell storage, but autologous transplants as well. These latter procedures can be life-savers for cancer patients, as they restore the integrity and function of bone marrows damaged by chemotherapy."

Ribbon-cutting ceremony at the Stem Cell Harvesting Center (ABMDR photo)

A young ABMDR patient (ABMDR photo)

Dr. Jordan added that the Stem Cell Harvesting Center has also fast become an important hub for medical learning, and that it will continue to grow as a provider of workshops for medical students.

"Today, as our next major goal is to establish a dedicated stem cell transplantation center in Armenia, a top priority is to push for the highest possible standards in the quality and effectiveness of our operations," Dr. Jordan continued. "Now that the dream of having a stem cell harvesting center has become reality, we're working hard toward the next logical step, a full-fledged transplantation center, which would give thousands of Armenian patients access to affordable, life-saving stem cell transplants."

According to Dr. Jordan, the transplantation-center project will be showcased during "Match for Life 2009," the ABMDR's annual gala, on July 12. The event, which will be held at the Glendale Hilton in Glendale, California, will honor Ralph Yirikian as Man of the Year, recognize the outstanding services of several ABMDR volunteers, and celebrate the ongoing support of the registry's many benefactors and volunteer assistants.

For reserving tickets to the "Match for Life 2009" gala, call the ABMDR office at (323) 663-3609, Nectar Kalajian at (626) 705-2565, or Ani Azar at (818) 606-6000.

Call for Papers
International Conference on the Armenian Communities of Asia Minor
University of California, Los Angeles, Saturday-Sunday, March 19-20, 2010
Sponsored by the UCLA Armenian Educational Chair in Modern Armenian History

The 18th in the AEF Chair series on Historic Armenian Cities and Provinces will focus on the Armenian Communities of Asia Minor (Anatolia) from ancient times to the present. The area covered will be from the Asiatic shores of the Sea of Marmara to the borders of Caesarea (Kaiseria; Kayseri) and along the Black and Mediterranean seas to Sinope and Cilicia. There were significant active Armenian communities in Kastamuni, Izmid, Bursa, Banderma, Adabazar, Bardizag, Eskishehir, Kutahia, Konia, Yozgat, and elsewhere in Asia Minor. Abstracts are invited that cover aspects of the social, economic, art and architectural, educational, musical, religious, administrative, and political history of any single community or the region as a whole. Caesarea (Kesaria/ Kayseri), Smyrna/Izmir, Constantinople, and Cilicia are not included as they have been the subject of previous conferences. In case of need, there will be funding for partial air fare and accommodations.

Please submit an abstract of 300 to 500 words by September 1, 2009, together with the following information: (1) Your full name and title; (2) Academic affiliation; (3) mailing address, e-mail address, telephone number.

In the first instance, please inform me of your intent to submit an abstract so that I may determine if there are sufficient materials and interest to organize such a conference

Please respond to hovannis@history.ucla.edu and send your abstract by Word attachment to the same address.

Richard Hovannisian
AEF Chair in Modern Armenian History,
University of California, Los Angeles

Subcommittee Approves Aid for Armenia

Continued from page 1

will go a long way towards strengthening these emerging democracies."

The $48 million in economic aid matches Armenia's total in the fiscal year 2009 bill and represents an enormous jump from the Administration's proposal. The subcommittee increased the President's proposal for aid to Armenia from $30 million to $48 million, and provided $10 million in humanitarian assistance for Karabagh. The President's proposal had requested more funding for military assistance for Azerbaijan than for Armenia. However, the subcommittee restored military assistance parity between Armenian and Azerbaijan at $3 million for each country.

The State, Foreign Operations Subcommittee also strengthened language governing the President's authority to waive Section 907 of the Freedom Support Act, a provision that restricts aid to Azerbaijan due to its blockades and other offensive actions against Armenia and Karabagh. The bill requires the president to consult with Congress before he can waive the Freedom of Support Act.

ՏԵՍԱԿԷՏ

«ԵՍ»-Ը ԵՒ «ՈՉ-ԵՍ»-Ը ԱՐՈՒԵՍՏՈՒՄ

ԴՈԿՏ. ՓԻՊԼ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ
(Շարունակուածնախորդթիւէն)

Արուեստագէտը որպէս մարդ անհատ ունի պատկանելիութեան բազմաթիւ կողմեր: Նա պատկանում է մարդկութեան, իր ազգին, իր բնակավայրին, իր ընտանիքին, իր սովորած դպրոցին, յաճախած եկեղեցուն, անդամակցած կազմակերպութեան, իր մասնագիտական խմբին: Նա իր ստեղծագործութեան, մտքերի, գործի, ապրելակերպի ու յարաբերութիւնների մէջ, կամայ թէ ակամայ, գիտակցուած թէ անգիտակցուած կերպով արտացոլում է իր պատկանելութեան ծալքերը, առանձնայատկութիւնները: 1983-ին պատիւը ունեցայ Կիրովականում ծանօթանալու տաղանդաւոր նկարիչ Կառլոս Աբովեանի հետ: Նա ստալինեան զոհերից էր: Նրա ծնողները աքսորուել էին, ինքը մի կերպ ապրել էր իր տատիկի հետ: Հազիւ կարողացել էր աւարտել եօթերորդ դասարանը: Վատառողջ էր: Միայն այցելել էր Երեւան քաղաքը: Երբ նա սկսեց ցուցադրել իր կտաւները, կարծես իմ առաջ բացուեցին համաշխարհային պատկերասրահների դռները: Իմ դիմաց կանգնած էր հայկականացուած միջազգային գեղանկարչութիւն՝ իր անցեալով ու ներկայով, Եւրոպայով եւ Ասիայով, հիւսիսով ու հարաւով, արեւելքով ու արեւմուտքով: Նա չունէր նուազագոյն մասնագիտական կրթութիւն, աշխարհ ման չէր եկել: Նրա իմացութեան միակ աղբիւրը եղել էին սակաւաթիւ արուեստի ալբոմները: «Ես աշխարհը, համաշխարհային արուեստը ճանաչեցի զգայուն իմ նկարիչի ներաշխարհով: Ես իմ մտքում ապրում էի այլ երկրների մարդկանց հետ: Բոլոր մարդիկ իրենց խորքում միանում են: Երբ մի լար ես զնգացնում, նոյն լարուածութիւնն ունեցող բոլոր լարերը նոյնպէս զնգում են: Այդպէս են նաեւ մարդիկ: Իսկական մարդասէրը, արուեստագէտը չի կարող մեկուսացուած ապրել ու գործել: Նա զգում է այն՝ ինչ իր նմաններն են զգում:» Նա հիացրեց «Անուշ» պոէմին նուիրուած իր պաստառներով, որոնցով նա իր տուրքն էր տալիս իր սիրած Լոռու աշխարհին ու բանաստեղծին՝ Յ. Թումանեանին: Պարմանուհիների հաւաքները, ուրախութիւնները եւ մանաւանդ պարերը առինքնում էին իրենց գեղեցկութեամբ, մարդկային խորքով եւ խորհրդաւորութեամբ: Այդ շարքում նկատեցի մի տարօրինակ երեւոյթ: Պատերի ներքեւի մասերում նկատւում էին տարբեր մեծութիւնների ու ձեւերի զանգուածներ: Երբ խնդրեցի դրանք բացատրել, նա ասաց. «Ես վատառողջ եմ: Երբեք չեմ կարողացել բլուրներ բարձրանալ: Նրանք միշտ ինձանից աւելի ուժեղ են: Ես միշտ պարտւում եմ: Իմ վրէժս առի իմ աշխարհում՝ նկարչութեան աշխարհում: Լեռների ու բլուրների բոլոր ժայռերին ներքեւ բերեցի եւ դարձրի ինձ ենթակայ:»

Իրաւ արուեստագէտը, ստեղծագործ «ես»-ը ունի նաեւ իր խօսքը, իր ասելիքը, իր պատգամը, որը արտայայտում է ոչ թէ քարոզով ու «մելոտրամատիկ» արտայայտամիջոցներով, այլ համապատասխան արուեստին բնորոշ եղանակներով, խորհրդանիշներով, կերպարներով: Այսպիսիներից է Ուիլիամ Սարոյեանի «Մարդկային կատակերգութիւն» երկի Իւլիսիսի կերպարը: Մանչուկը երկաթգծի կողքին կանգնած թափահարում է անցորդներին: Նրան պատասխանում է միայն վերջին բաց վակոնում փայտերի վրայ նստած մի սեւամորթ, որը երգում է «Վերադարձէք ինձ Վըրճինիա» երգը: Մանչուկը անընդհատ հարց է տալի, թէ ինչո՞ւ իրեն չպատասխանեցին առջեւի վակոնների ճանապարհորդները, ինչո՞ւ սեւամորթը ցանկանում էր վերադառնալ Վըրճինիա»: Այս այդ տարիներին ԱՄՆ-ում տիրող սոցիալական խտրականութեան լաւագոյն գեղարուեստական պատկերներից է:

Արուեստագէտը իր «ես»-ից, ներաշխարհից մի բան է աւելացնում արտացոլուող «ոչ-ես»-ի վրայ: Նա այնքան հարուստ ներաշխարհ պէտք է ունենայ, որ կարողանայ լոյս, միտք, կեանք փոխանցել «ոչ-ես»-ին, իր շրջապատին եւ ուրիշներին: Այդ հնարաւոր է դառնում, եթէ նա կարողանում է իր «ես»-ի մէջ ներգրաւել «մենք»-ը: Իրաւ ստեղծագործ «ես»-ը ինքնակեդրոն չէ, եսամոլական չէ, եսապաշտ չէ, լոկ իր անձով պատսպարուած չէ: Նոյնիսկ իր ցաւը, լացը, ողբը, ուրախութիւնը նա պատկերում է որպէս մարդկային մի այնպիսի վիճակ, որը համեմուած է որոշակի անհատականութեամբ: Հայ ազատագրական պայքարի մի շարք խորքային հարցերն իրենց համոզեցուցիչ ու նորովի արտացոլումն են գտնում Ռաֆու պատմավէպերում: Լեւ Տոլստոյի «Պատերազմ եւ Խաղաղութիւն» վէպը մեծապէս հարստացնում է մեր պատկերացումները Ռուսաստան կատարած Նապոլիոնի արշաւանքի ու ռուսական հայրենասիրութեան ծալքերի մասին: Դոստոեւսկու երկերը, մանաւանդ «Կարամազով եղբայրները» մի հանրագիտարան է մարդու հոգեկան ծալքերի բարդութիւնների մասին: Դրանք այդ իմաստով այնքան կարեւոր եւ խորքային էին, որ գրողը համարուեց հոգեբուժութեան նախակարապետներից մէկը: Հայոց ցեղասպանութեան խորքային իմաստաւորման համար աւելի հարուստ աղբիւրներ են Սեւակի, Շիրազի պոէմները, քան պատմական աղբիւրները: Կոմիտասը աւելի ամբողջական է պատկերւում Սեւակի «Անլռելի Զանգակատունը» ընթերցելուց յետոյ: Արուեստի գործը դարձել է պարտադիր լրացումը իրականութեան ճանաչման համար:

Պատահական չէ, որ ամէն մի իրաւ արուեստի գործի մէջ ուրիշները տեսնում են իրենցից մի բան, իրենց խոհերի ու տենչանքների հայելին: Գրեթէ բոլոր սիրահարները իրենց զգացումները ընկերոջը յայտնելու համար պատառիկներ են վերցնում հայ դասականների գործերից (Ա. Իսահակեան, Վ. Տէրեան, Պ. Դուրեան, Յ. Թումանեան եւայլն): Նրանք գտնում են, որ տուեալ հեղինակը աւելի խորը եւ ճիշտ է արտայայտել իր զգացումները: Շատ քաղաքական գործիչներ իրադրութիւնը խտացուած ու սեղմ ձեւով արտայայտելու համար յաճախ դիմում են հետեւեալ թեւաւոր խօսքերի. «Գիտակցուած մահը անմահութիւն է», «Կամ մահ, կամ ազատութիւն», «Լինել թէ չլինել, այս է խնդիրը», «Աւելի ճիշդ է պատուով մեռնել, քան անպատիւ ապրել», եւայլն: Բազմաթիւ առիթներով հայը կրկնել է Վարդանանց խոստում-պատգամը, հաւատքը, հայ եկեղեցուն, հայու ազգային պատկանելութիւնը, ազգային արժանապատուութիւնը, մարդկային իրաւունքները եւ հայ հողը պահպանելու անհրաժեշտութեան մասին:

Իրաւ արուեստի գործի հետ շփուելիս ամէն մէկը իրեն զգում է աւելի հարստացած, աւելի լիցքաւորուած: Եղիշէ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը կարդացողն ու լսողը վերապրում, վերակերտում է հարուստ ու եռացող հայրենասիրական իր ներաշխարհը: «Սասունցի Դաւիթ» էպոսը մարմնաւորուած նոյնանուն հրասայլային գունդով ներշնչում էր Հայրենական Պատերազմի մարտիկներին, ճիշդ այնպէս ինչպէս քաղաքացիական պատերազմում Վարդան Մամիկոնեան գնացքը ոգեւորում էր հայ մարտիկին: Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան»ը շատ ընթերցողների առաջնորդում է դէպի ապաշխարութիւն, վերադարձ դէպի Յիսուս Քրիստոս: Այսպիսով է իրաւ արուեստը իրականացնում իր մարդակերտիչ առաքելութիւնը:

Որքան ստեղծագործական է գործընթացը, այնքան մեծ եւ ուժեղ են «ես»-ի ներգործութեան սահմանները: Երբ ստեղծագործ անհատը իր գիտակցութեան մէջ միացնում է թռչունի կամ միջատի գաղափարը մետաղեայ մեքենայի գաղափարի հետ եւ իր գիտակցութեան մէջ ստեղծում է ինքնաթիռի պատկերը, ապա նրա գիտակցութիւնը, «ես»-ը գտնւում է յարաբերական անկախ վիճակում, յարաբերականօրէն ինքնուրոյն եւ խիստ գործօն վիճակում:: Եղածի հիմքից ելնելով նա ստեղծում է չեղածը, նորը: Այդպէս է բնական բնութիւնից կերտւում մարդակերտ բնութիւնը, քաղաքակրթութիւնը: Նոյնպիսի վիճակ է առաջանում արուեստի գործ ստեղծելու ընթացքում: Ստեղծագործութեան պահին «ես»-ը ապրում է այլակերպման մի փուլ: Նա անցում է կատարում անյայտից դէպի յայտնին, որոնումից դէպի գիւտ: Նրան բնորոշ է դառնում էքստազը, կատարսիսը (ինքնամաքրումը): Ստեղծագործութեան ընթացքում արուեստագէտը էապէս փոխւում է՝ դառնալով աւելի ազնիւ ու բարի: Պատահում են պարագաներ, երբ նա ապրում է ոչ թէ ըստ կեանքի տրամաբանութեան, այլ ըստ արուեստի, ըստ հերոսների կեանքի: Պատմում են, որ «Եւգենի Օնեկին»-ը գրելիս Պուշկին բողոքելով պղաւում է. «Եւգենին ամուսնացաւ տարեց գեներալի եւ ոչ թէ երիտասարդի հետ»: Այդ լուծումը թելադրուած էր ստեղծագործութեան ներքին տրամաբանութեամբ, երբ սովորական պէտք է համարել երկու երիտասարդների ամուսնութիւնը: Մոբասան պատմում է, որ ինքը երկար ժամանակ իր բերանում զգացել է մկնդեղի համը: Նա ֆիզիքապէս ապրել է հերոսի ինքնասպանութեան վիճակը:

Հայ միջնադարեան գեղագիտական միտքը պաշտպանում էր այն գաղափարը, որ գոյութիւն ունի երեք աստիճանի, երեք բնոյթի ստեղծագործ ոյժ. Աստուած, բնութիւն եւ մարդ: Աստուած Արարիչ է: Նա ոչ թէ կերպարանափոխում է եղածը, այլ ստեղծում է գոյութիւն չունեցող բաներ: Նա ստեղծեց նիւթը, տիեզերքը, բնութիւնը եւ մարդուն: Բնութիւնը ստեղծագործում է ըստ Աստուծոյ կողմից իրեն տրուած ներքին ուժերի (կենսաբանական, քիմիական, ֆիզիքական, երկրաբանական), առանց հասկանալու իր արարքի իմաստը, իր առաքելութեան նպատակը: Նա չի գիտակցում իր ստեղծող լինելու իրողութիւնը: Մարդու գործունէութիւնների մի մասի խորքը կարելի է նկատել նրան բնորոշ բնազդների ու խելացի վարքի մէջ: Մարդկային ստեղ-

Շար.ը էջ 19

ԿԱՐԾԻՔ

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

"Հին ուղղագրութեան վերահաստատումը հրամայական պահանջ է՝ միատեսակ ուղղագրութեան տեսակէտէ":

ԶԵՆՈԲ ՔՀՆԹ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Բազմիցս արծարծուած հարց է Արեւելահայերէնի ուղղագրութեան փոփոխութիւնը: Այդ առիթով, հրապարակի վրայ արտայայտուած են թերուդէմ կարծիքներ, բայց ցարդ որոշակի քայլ չէ առնուած Մեսրոպեան ուղղագրութեան վերադարձի ուղղութեամբ: Այս մասամբ կը նշանակէ որ մեր հայրենի կառավարութիւնը յարմար չի տեսներ նման արմատական փոփոխութեան ենթարկելու ուղղագրութիւնը եւ կամ բարեպատեհ առիթի կը սպասէ որպէսզի ստանձնէ նման վիթխարի աշխատանք:

Այստեղ մեր նպատակը չէ զբաղիլ այն հարցով թէ ե՞րբ եւ ինչպէ՞ս պիտի համոզուին մեր իշխանութիւնները վերջնականապէս ազատիլ այդ շինծու ու անճոռնի ուղղագրութենէն, այլ՝ ցոյց տալ, որ աշխարհի ամենայառաջադէմ ազգերն իսկ, որ ուղղագրական կանոններու բարդութիւններէ կը տառապին, չեն համարձակիր նշանախէց մ'իսկ փոխել իրենց խառնիճաղանճ գրելաձեւէն, վանզի դպչելու պարագային, բովանդակ լեզուի պատկերը եւ ընդհանուր նկարագիրը փուլ պիտի գայ՝ աւելի շփոթութիւն յառաջացնելով, քան՝ լուծում:

Իւրաքանչիւր լեզու ունի իր բարեշրջումը (evolution) եւ զարգացման յատուկ եղանակը: Լեզուն դարերու ընթացքին կ'ենթարկուի աստիճանական փոփոխութիւններու, որոնք դանդաղօրէն կը կատարուին հասարակութեան կողմէ եւ երբէք պայթուցիկ բնոյթ չեն կրեր: Այլ խօսքով, ժողովուրդն է սեփականատէրը լեզուին, որովհետեւ ինք է գործածողը, ինչպէս նաեւ՝ զայն փոխողը: Ոչ մէկ անհատ կամ հաւաքականութիւն իրաւունք չունի տնօրինելու լեզուի ճակատագիրը: Այդ իրաւունքը վերապահուած է միմիայն տուեալ համայն զանգուածին՝ ժողովուրդին: Ինչպէս ըսինք, այդ փոփոխութիւնները տեղի կ'ունենան դարերու ընթացքին, եւ ոչ թէ մէկ օրէն միւսը: Ընդհանուր լեզուի պատմութեան մէջ վատահաբար չկայ դէպք մը որ հաւասարի 1920-ական թուականներուն պատահած արեւելահայ ուղղագրութեան փոփոխութեան անպատասխանատու ու աղէտալի արարքին: Այդ կամայական ու անարդարանալի որոշման հետեւանքով, հայութիւնը երկփեղկուեցաւ, մտաւորական աշխարհը սաստիկ յուզուեցաւ, բայց ոչ ոք, բողոքի գրիչ շարժելէ զատ, դրական, աւելի ճիշդ՝ գործնական բան չի կրցաւ ընել: Ինչո՞ւ. որովհետեւ ի վերուստ բռնադատուած որոշում էր, որ անյապաղ հարկ էր գործադրել: Պետական որոշում էր, որ կարելի չէր չգործադրել: Այդ հապճեպ որոշումը ի գործ դրուեցաւ անմիջապէս կատարեալ անհեռատեսութեամբ:

Առաջարկուած ուղղագրական փոփոխութիւնները նոյնիսկ տրամաբանականօրէն չէին մտածուած ու կարգաւորուած: Այդ պատճառով, յետագային վերանայուեցան փոփոխութեանց բոլոր նոր կանոնները՝ խորացնելով ստեղծուած շփոթութիւնը: Շարունակական փոփոխութիւնները նոյնիսկ ոչ մէկ կերպ մխիթարեցին յուզուած ու զայրացած ամբոխը: Ահա այսպիսի մեծ սխալի առաջնորդուեցաւ արեւելահայ ուղղագրութիւնը:

Այս շատ հակիրճ տողերէն ետք, այժմ անցնինք բուն նիւթին եւ տեսնենք թէ ինչպէս որոշ լեզուներ, ուղղագրական խիստ բարդ կառուցուածք ունենալով հանդերձ, պահպանած են իրենց ինքնուրոյնութիւնը եւ ձեւափոխութեամբ չեն եղծած լեզուի հիմնական պատկերը:

Վերցնենք մեզի ծանօթ Ֆրանսերէն լեզուն, որ իր արդի ուղղագրութեամբ մեծ դժուարութիւն կը յարուցէ օտար աշակերտին, նոյնիսկ՝ Ֆրանսացիին: Այսպէս, մէկ հնչիւնի համար կան մի քանի տառակապակցութիւններ՝ ֆր. «o», «au», «aux», «eau», «eaux»: Այս ամբողջը կը հնչուին միայն «o»: Ոչ մէկ փորձ՝ զանոնք վերածելու մէկ հասարակ միաւորի՝ «o»-ի: «Մէկ հնչիւնին մէկ տառ» սկզբունքը կիրարկելի չէ այստեղ, որովհետեւ իմաստային հարց կը ծագի: Նոյնն է պարագան «է» հնչիւնին. Ֆրանսերէնի մէջ այդ հնչիւնը կ'արտայայտուի բազմաթիւ ձեւերով. այսպէս՝ ֆր. Ռ, ռ, Ս, Ջ, ai, ais, ait, Ռs, es, et, est եւն: Այժմ, երեւակայեցէք եթէ այս ամբողջին դիմաց Ֆրանսացին, մեզի պէս, «խոհեմութիւնը» ունենար մէկ հնչիւնի դիմաց միայն մէկ գիրով գրելու «է» հնչիւնը: Ինչ խառնափնթոր վիճակ պիտի ստեղծուէր լեզուէն ներս:

Անցնինք անգլերէն լեզուին: Այս լեզուի մէջ եւս գոյութիւն չունի մէկ գիր մէկ հնչիւն սկզբունքը: Խօսինք օրինակներով՝ «o» հնչիւնը կ'արտայայտուի «o» գիրով՝ order, holy եւն: «O» գիրը կ'արտասանուի նաեւ «ա». այսպէս՝ fox, follow եւն: «O» գիրը կը կիրարկուի նաեւ տարբեր հնչիւններու արտաբերման համար. օրինակ՝ to (թու), various (վէրիըս) եւն: Պարզապէս հնարաւոր չէ վերոբերեալ սկզբունքին հաւատարիմ մնալ եւ կամ կաշկանդել լեզուն՝ պատուաստելով զայն օտար, արուեստական տարրերու հետ:

Ռուսերէնը եւս իր բարդ ուղղագրութիւնը կը պահպանէ ցայսօր՝ որոշ մանր փոփոխութիւններով, որոնք խիստ կենսական էին: Կային գիրեր եւ որոնք դադրած էին գործածութենէ: Անկէ անդին, ամէն ինչ պահուած է նոյնութեամբ: Այսօր, ռուսերէնի մէջ կը գրուի «նիչիկо» եւ կ'արտասանուի՝ «նիչիվо»: «Տ» գիրը երբեմն կ'արտասանուի «Ծ», այլ դէպքերուն լոկ «Տ» եւն:

Վրացերէնի մէջ եւս ժամանակ մը գոյութիւն ունէր «Ց» ձայնորդը, սակայն, լեզուն բնականօրէն կարիք չզգաց անոր եւ գործածութենէ զրկեց զայն:

Կարելի է դեռեւս մէջբերել այլ լեզուներէ օրինակներ եւս: Այսքանը սակայն բաւ է ցոյց տալու որ ուղղագրական զարտուղութիւններ ունին աշխարհի բոլոր լեզուները անխտիր: Ուղղագրական ձեւերը կարելի չէ դիւրացնել եւ կամ ենթարկելու մարդաստեղծ, շինծու ու անգործնական օրէնքներու: Պէտք է թոյլ տալ որ լեզուն ինք իրեն կրէ փոփոխութիւնները:

Անցեալին, հայերս վեցուցած էինք «օ» գիրը եւ անոր տեղ կը գրէինք միայն «ո». այսպէս՝ որ «օր», որացուցց «օրացոյց», որենք «օրէնք», մակբայական -որեն «-օրէն» վերջածանցը եւն: Ապա նկատեցինք, որ կորսնցուցած կ'ըլլանք այս բառերուն նախնական, այսինքն արմատական ձեւերը՝ «աւուր», «աւուրացոյց», «աւրէնք»: «Օ» գիրը անմիջապէս վերադարձաւ իր օգտակար գործին: Անդին, կար «յ» ձայնորդը, որ ձայնափոխուելով բառասկզբին կ'արտասանուէր «հ». այսպէս՝ յոյս, յարկ, յասմիկ, յասպիս, յանձնապաստան եւն: Այս ամբողջը գրուեցան եւ դեռեւս կը գրուին «հ»-ով՝ առանց նկատի առնուելու անոնց գիտական-լեզուաբանական ծագումնաբանութիւնը: Զանցառութիւնները այն աստիճանի հասցուցած են մեզ որ ուղղագրական տարբերութիւն չկայ այլեւս «յարկ» եւ «հարկ» բառերու միջեւ: Նախադասութեան իմաստէն ընթերցողը պէտք է իմանայ: Նմանապէս՝ «յամր»՝ դանդաղ եւ «համր»՝ անխօս եւն:

Արդ, ի՞նչ ցոյց կուտան այս ամբողջը, եթէ ոչ լոկ մէկ բան՝ չդպչիլ լեզուին ամենեւին, չփոխել ուղղագրութիւնը բացարձակապէս, չբարդացնել զայն ու մանաւանդ՝ չկասեցնել լեզուի բնական զարգացման ընթացքը: Այլապէս, կը ստանանք անել ու խառնաշփոթ կացութիւն: Այս անբաղձալի վիճակէն դուրս գալու համար հարկ է վերադառնալ Մեսրոպեան հարազատ ուղղագրութեան: Այս ամբողջէն ետք, տխրութեամբ կը մտաբերենք Հր. Աճառեանի մէկ սքանչելի խօսքը ուղղագրութեան փոփոխութեան ուղղութեամբ՝ «Դա մի իտէալ է, որին կարելի է լոկ ցանկալ»:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Միասին
Դէպի Նպատակակէտ...

Բարձր Հովանաւորութեամբ՝

ԳԵՐԾՆ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ
Հայց. Առաքելական Եկեղեցւոյ
Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի

Կազմակերպութեամբ՝

Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբին

Գեղարուեստական Յայտագիր եւ Հիւրասիրութիւն

Կատարողութեամբ՝

«Խաչատուրեան Դպրաց Դաս» Երգչախումբին
Ղեկավար՝ *Բրջ. Սրբեփան Մրկ. Կէօղուճեան*

«Արարատ» Երգչախումբին
Ղեկավար՝ *Ալեքսոյ Եղնազար*

«Իրանահայ Միութեան» Երգչախումբին
Ղեկավար՝ *Միքայէլ Անանիսեան*

Գալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան «Կոմիտաս» Երգչախումբին
Ղեկավար՝ *Կոմիտաս Քիշիշեան*

Սիրով կը հրաւիրենք Ձեզ ներկայ գտնուելու Առաջնորդանիստ Մայր Տաճարի շինարարական աշխատանքներու առաջին փուլի աւարտի արարողութեան

Կիրակի, Յունիս 28, 2009-ին, Երեկոյեան ժամը 6:00-ին
3325 North Glenoaks Blvd., Burbank

Մուտքը Ազատ

****

TOGETHER
WE PROGRESS...

Under the Auspices of
HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN
Primate of the Western Diocese of the Armenian Church
of North America

The Cathedral Fund Raising Committee

Cordially invites you to attend the opening ceremony of the completion
of the first stage of Cathedral Construction

Cultural Event & Reception

Sunday, June 28, 2009 at 6:00 p.m.

3325 North Glenoaks Blvd., Burbank

Free Admission

ՊԱՏՄՈՒԱԾՔ

ԱՐԵՒԻ ՀՈՏԸ... (ՊԱՏՄՈՒԱԾՔ)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ
(Շարունակուածնախորդթիւէն)

... Ամէն ինչ եղաւ օրին. քեֆ, ուրախութիւն, պաշտօնական գրանցում, սակայն ոչ եկեղեցական արարողութեամբ: Կոմունիստ Վարդանը չէր կարող եկեղեցի մտնել, այն էլ՝ փեսայ դառնալու համար:

Ամուսնութիւնից մէկ տարի էլ չէր անցել, որ Վարդան Յովհաննիսեանի ընտանիքում ծնուեց առաջնեակը. տղայ էր: Անունը Էդուարդ կնքեցին: Մինչ Վարդանը առաջադիմում էր աշխատանքում, լաւ չէին գնում Հուրիկի գործերը: Չէր կարողանում դասերին ներկայ լինել: Արուեստագէտ դառնալու երազանքը խամրելու վրայ էր, մանաւանդ որ նորից էր երեխայի սպասում:

Խեղճ Հոռոմսիմը չգիտէր ինչ անել. տանը երեք տղամարդ, այն էլ երիտասարդ, կարիք ունէին ամէն տեսակի օգնութեան: Շաբաթուայ մէջ եղող պատուէրները գանց առնելով անգամ, դժուարանում էր հասնել աղջկայ եւ Թոռան խնամքին: Հիմա էլ երկրորդ Թոռը. այս անգամ՝ աղջիկ, որին կնքեցին Նունէ անունով:

- Չէ՛, չ՚եղաւ, այսպէս շարունակել հնարաւոր չէ, - մտածում էր Հուրիկը, - կամ ընտանիք, երեխաներ, կամ էլ՝ բեմ, ելոյթներ: Էլ ի՞նչ բեմ, արդէն երկու երեխայ, յետոյ, ո՞վ գիտի, գուցէ երրորդն էլ աշխարհ գայ, Վարդանը երեխայ շատ է սիրում: Հարկաւոր է գոնէ մէկ տարով յետաձգել ուսումը:

Այդպէս էլ արեց: Սակայն, դերասանական վարպետութեան ուսուցիչը, որ մեծ յոյսեր էր կապում Հուրիկի հետ, յուսախաբ եղաւ: Նա մտքի խորքում գիտէր, որ Հուրիկը այլեւս չի կարողանայ նուաճել թատերական արուեստի բարձունքները:

Այդպէս էլ եղաւ: Եւ դրան նպաստեց Հուրիկի երրորդ երեխայի աշխարհ գալը: Սա էլ էր աղջիկ, ինչպէս Հուրիկի երկրորդ երեխան: Լոյսի պէս զուլալ, պայծառ այդ աղջկան էլ կնքեցիր Լուսինէ անունով:

Երեք անչափահաս երեխաներ: Հոռոմսիմ տատիկը գլուխը կորցրել էր: Նա, ի հարկէ, էլի Թոռներ ունէր, տղաներն էլ արդէն ընտանիքի տէր էին: Ունէին երեխաներ, աներ, զոքանչ: Ամենաանօգնական վիճակը բաժին էր ընկել Հուրիկին, որովհետեւ ամուսնու կողմից ոեւէ մէկը չկար, որի վրայ կարողանար յոյս դնել գէթ երեխաներին հոգ տանելու հարցում:

Հոռոմսիմ տատիկի խելքը գնում էր վերջին Թոռնուհու՝ Լուսինէի համար: Աղջիկը՝ Հուրիկը հազիւ էր կարողանում գլուխ հանել միւս երկու երեխաներին խնամելուց եւ, մանաւանդ՝ ամէն ինչում բծախնդիր ամուսնուն ծառայելուց: Պաշտօնի բերումով, Վարդանը պարտաւոր էր մշտապէս կոկիկ վիճակում լինել:

Ամէն օր լուացք, ամէն օր պաշտօնական մարդիկ, հիւրասիրութիւն: Ի՞նչ սովորելու մասին կարող էր խօսք լինել: Եւ այսպէս կամայ թէ ակամայ, ժամանակի ընթացքում Հուրիկը մոռացութեան տուեց թատրոնը: Ամուսինը՝ Վարդանը անընդհատ պաշտօնի բարձրացում էր ստանում:

Լուսինէի աշխարհ գալով աւելի ծայռացաւ Հոռոմսիմը: Երկար տարիներ լուացք անելուց, գոլորշուց թշերը այրուած, սակայն հաճելի ու նրբին այդ աւանդապահ դարսեցին, կարծես քսան տարով երիտասարդացաւ: Ինչպէս ժամանակին աղջկան էր սովորեցնում տնային, խոհանոցային գործեր, լուացք անելու արուեստը, այժմ արդէն այդ ամէնը իրականացնում էր Թոռան՝ Լուսիկի հետ, որի մէջ տեսնում էր ոչ միայն իսկական աւանդապահ հայ կնոջն ու մօրը, այլեւ տաղանդաւոր ապագայ երգչուհուն:»

Մեծացաւ եւ Հուրիկի փոքր աղջիկը՝ Լուսինէն: Դպրոցի եօթերորդ դասարանում արդէն, Լուսինէն շրջապատին զարմացնում էր հիանալի երգեցողութեամբ: Հայրը որ լուրջ երաժշտասէր էր եւ ակորդիոն շատ էր սիրում, օրերից մի օր փոքր ակորդիոն բերեց տուն:

- Կոմիսիոն խանութից եմ գնել, - ասաց նա՝ ակնապիշ իրեն նայող կնոջը՝ Հուրիկին: Խանութում ասին, որ ֆրանսական է եւ որ ծախու է դրել մի ներգաղթած ֆրանսահայ, դէ՛ մի ախպար էլի: Կարծում եմ Լուսինէն կը կարողանայ նուագել: Ես արդէն մի լաւ ուսուցիչ էլ եմ գտել: Պէյրութահայ է: Ասում են շատ լաւ ակորդիոնահար է:

- Լուսի՛կ, Լուսինէ - տնով մէկ ձայնը գցեց արդէն գործարանի տնօրէն դարձած Վարդանը:

- Լսում եմ հայրի՛կ - հարեւան սենեակից պատասխանեց Լուսինէն:

- Տես, տե՛ս, որքան լաւն է, քո տարիքի համար շատ յարմար, գեղեցիկ է, համարեա նոր, տասնըութ բաս ունի: Հը՛, ի՞նչ կ՚ասես.

- Վա՛յ, էլ ինչ լաւ ակորդիոն ա, մա՛մ, պա՛պ - չիմանալով ինչպէս արտայայտել իր հիացմունքը, սենեակի մէջտեղում թռվռում էր Լուսինէն:

Որոշ ժամանակ անց, Լուսինէն ոչ միայն հրաշալի ակորդիոն էր նուագում, այլեւ հիանալի կատարում էր ժողովրդական, գուսանական երգեր՝ հիացնելով ոչ միայն իր շրջապատին, այլեւ մասնագէտ երաժիշտներին:

- Չկարողացայ աղջկաս դերասանուհի դարձնել, բայց Թոռանս համար ամէն ինչ կ՚անեմ, որ մասնագէտ երգչուհի դառնայ, - մտածում էր Հոռոմսիմը:

Երեք տղաներն էլ ամուսնացել էին եւ ունէին իրենց ընտանիքներն ու մեծաթիւ զաւակներ: Թէեւ Հոռոմսիմը նուիրուած էր բոլորին, բայց իր սրտում առանձնակի տեղ էր զբաղեցնում Լուսինէն:

Դպրոցական ստուգատեսների մշտական հիւրն էր Լուսինէն: Իսկ բակում հաւաքուած իր հասակակից երեխաներն ու պատանիները, ամառուայ շոգ երեկոներին իրենց հանգիստն էին վայելում Լուսինէի ակորդիոնի հնչիւնների տակ:

Եկան յիսունական թուականները: Թւում էր, թէ երկինքը պայծառացաւ եւ առջեւում է լուսաւոր հորիզոնը:

Իրօք, մարդիկ սկսեցին ազատօրէն շնչել, թէեւ ազատ խօսքի հնարաւորութիւն հնարաւոր չէր իրականացնել: Բայց քիչ թէ շատ բացուեց երկաթեայ վարագոյրը, եւ մարդիկ տեսան, որ բացի խորհրդային երկրից ուրի՛շ աշխարհ էլ կայ, ուրիշ երկրներ էլ կան:

Լուսինէի համար այնքան էլ դժուար չ՚եղաւ երաժշտական ուսումնարան ընդունուելը:

Ինչպէս մօր՝ Հուրիկի պարագային, Լուսինէն էլ սիրահարուեց հենց ուսուցման առաջին իսկ օրից:

- Աղջիկս, Լուսօ ջան, ախր քո ի՞նչ ժամանակն է, - վրդոված ասում էր տատը՝ Հոռոմսիմը, - դու նպատակներ ունես, երազներ: Մայրդ էլ քեզ նման, քո հասակում, սիրահարուեց, ամուսնացաւ եւ վերջնականապէս զրկուեց արտիստուհի դառնալու հնարաւորութիւնից:

- Տատի ջան, մի յուզուիր, իմ պարագան ուրիշ է: Իմ սիրած տղան, որի անունը Արտաշէս է, բանասիրականում է սովորում եւ ինքնուրոյն, առանց նոտա իմանալու, երգեր էլ է գրում: Այնպէս որ, երկուսս էլ մի խելքի ենք: Արտաշը ամէն ինչ հասկանում է եւ ինձ կ՚օգնի, որպէսզի ես երգչուհի դառնամ:

- Ի՞նչ կարող եմ ասել. ժողովուրդը լաւ է ասում՝ մօր բախտ, աղջկայ բախտ...:

- Առայժմ երկուսս էլ ուսանող ենք: Զորս-հինգ տարի ունենք առջեւում, տեսնենք՝ ինչ կը լինի:

- Ի՞նչ, չորս-հինգ տարի ման էք գալու, յետո՞յ ամուսնանաք:

- Հա՛ տատ, իսկ ի՞նչ կայ որ...

- Անկարելի է: Բա դարսեցու աղջկան, Թոռանը վայե՞լ է այդքան երկար ման գալը: Մարդիկ ի՞նչ կ՚ասեն: Չէ՛, չեղաւ: Ես հօրդ ասելու եմ...

- Չէ՞, ո՛չ, տա՛տ, չասես: Հայրս շատ խիստ մարդ է, գիտես, անհեր, անմեր մեծացած մարդ, նա չի հասկանայ...

Հոռոմսիմ տատը ասէր կամ չասէր, միեւնոյնն է, Վարդանը գիտէր իր աղջկայ եւ Արտաշէսի կապի մասին:

- Աղջկադ գեամերը քաշի՛, - քանի անգամ ասել էր կնոջը՝ Հուրիկին:

Դրութիւնը գնալով բարդանում էր: Նոյնիսկ Լուսինէի հայրը գործարանի բանուորներից մէկին հրամայել էր մշտապէս հետեւել աղջկան, թէ ուր է գնում, ինչ է անում, ում հետ է շփւում:

- Օր ու գիշեր իրար հետ են. կինօ, թատրոն, ցիրկ, կաֆէ, էլ ի՞նչ ասեմ..., տղէն լաւ փող ունի, գրում-մրում ա, հէչ չէք կարդացե՞լ նրա գրութիւնները թերթերում, - այսպիսին էր լրտեսի զեկոյցը:

- Հա...ա...ա՞, ես այդ լակոտներին ցիրկ-միրկ, գրել-մրել ցոյց կը տամ, - կոմիւնիստ ղեկավարներին բնորոշ «բելոմոր» ծխախոտը բերանի աջ ու ձախ կողմը տարուբերելով, մռլտաց հին կոմունիստը եւ շարունակեց.

- Կարո՞ղ ես էդ լակոտին բերել ինձ մօտ:

- Ի հարկէ, կարող եմ, ամէն երկուշաբթի գնում է «Երեկոյեան Երեւան» թերթի խմբագրութիւն՝ հոնորար ստանալու, իսկ քո աղջիկը սպասում է դրսում, մինչեւ երիտասարդի դուրս գալը:

Մի քանի օր անց կայացաւ ապագայ փեսայ եւ աներ հանդիպումը:

- Այստեղ չեն ծխում, երիտասարդ, - ասաց գործարանի տնօրէնը՝ աշխատասենեակի դրան առջեւ կանգնած Արտաշէսին, որը պատրաստւում էր ծխել:

- Բա դո՞ւք ինչու էք ծխում...

- Լակոտի մէկը, էդ էր պակաս, որ դու ինձ դիտողութիւն անէիր: Լսի՛ր, այ տղա՛յ, ձեռ քաշի իմ աղջկանից, նա քո թայը չի..., ձեռ քաշի, թէ չէ որպէս խուլիգանի քեզ նստացնել կը տամ:

- Հենց հիմա՛, ինչի՞ ես ուշացնում, գանգ տուր ոստիկանատուն, թող գան ինձ բռնեն որպէս խուլիգանի, որը ներխուժել է քո կաբինէտից ներս: Հիմա ինձ լսէք. ես եւ ձեր աղջիկը՝ Լուսինէն սիրում ենք միմեանց: Ոչ մի խոչընդոտ չի կարող մեզ բաժանել միմեանցից: Եւ խնդրում եմ, ձեռք չբարձրացնել Լուսինէի վրայ, թէ չէ ինձ հետ գործ կ՚ունենաք...:

- Տօ՜, փսլնքոտ լակոտի մէկը, դու ինձ վախեցնո՞ւմ ես...

- Ո՛չ, պարզապէս զգուշացնում եմ..., միայն զգուշացնում եմ, ուրիշ ոչինչ...

***

Չէ՛, ոչինչ, ոչ մի միջոց չ՚օգնեց սիրող զոյգը բաժանելու համար. ոչ Լուսինէի հօր՝ Վարդանի յոխորտանքներն ու սպառնալիքները, ոչ մօր յորդորները, ոչ էլ՝ Արտաշէսի «ախպար» ծնողների անհամաձայնութիւնը:

(Շարունակելի 4)

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 for USA

* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.

* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.

Name: ----------

Address: ----------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: ----------

Tel :---------- Fax : ----------

ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԵՐԻՆ
(HAPPY FATHER'S DAY)

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Յունիս 21, միջօրէ, արեւը մի ակնթարթ թող կանգնի երկնակամարի բարձունքին, թող հեղեղային լոյսի զուարթութեամբ ժպտայ, իր ատրուշանից կրակէ ճառագայթներ քաղած խուրձ, խուրձ թող նետի ցած՝ ողջունելու մոլորակի հայրերին, իր քուրայում հալած կրակի կարմիր լոյսը թող փոթորկի նրանց սրտերի ծովակներին: Արեւ, արմէնները քու վառուող կրակին պաշտամունք նուիրեցին, որ իրենց աշխարհին յաւերժութիւն պարգեւէիր, իրենց արտերի ցորեանին քու կրակը շաղէիր, իրենց այգիներին պտղաբերութեան ծիածան փռէիր, իրենց հոգիներին կեանքի ջերմութիւն հոսէիր: Միհր կոչեցին քեզ, իրենց մեհեաններում իջեցրին քեզ, նրանց ճակատներին յաւերժութեան խորհրդանիշ կարմիր բոցոտ նուռեր ու արեւից հրդեհուած խաղողի ողկոյզներ քանդակեցին, նրանց շուրջը քու կրակով վառուող նռնենիներ տնկեցին: Քու ճառագայթների փունջերից կրակ վառեցին ատրուշաններում, Արմա-Արմէն՝ արեւ աստուծոյ որդիներ կոչեցին իրենց: Եթէ մայրերի օրուան ձօնուած տօնախմբութեանը նրանց լանջերը տիեզերքից քաղած աստղերի փունջերով քողեցինք, այսօր հայրերին թող ողջունենք նրանց արարած ոստաններում թնդանօթների որոտների փառաբանման օրը: Ցնծում է Ամերիկան այսօր, թող ցնծայ աշխարհը այսօր, ժպիտների կայծերի համբոյրներ նրանց ճակատներին, երախտագիտութեան տեղատարափ անձրեւ նրանց սրտերին, երջանիկ օրերի մաղթանքի աղօթք հայրերին, Happy Father's Day:

Տարին էր եղել 1909, երբ ամերիկուհի Սոնորա Սմարթ Տոտը իրենց քաղաքի տաճարում ունկնդրել էր մայրերի օրուայ փառաբանական տօնակատարութեան ողջոյնի քարոզը, թախծոտ աղօթել էր, որ յաւերժութեան ճանապարհով քայլող մայրիկի հոգուն Արարիչը լոյս շողար: Կարօտի ցաւի մշուշն էր պատել հոգին, մայրական գգուանք չէր ծորեր սրտում, նրա դէմքին մայրական տիեզերական սիրոյ շողէր չէին իջել, չէր հպել նրա լանջին՝ հոգին մայրութեան սիրոյ լոյսով ջերմանալու, նրա սրտի տրոփիւնից էր իր կեանքի ժպիտը ծաղկել: Եւ մայրը, Սոնորային կեանքի արեւի լոյս պարգեւելու պահին... իր լոյսն էր հանգել: Տաճարի կամարները գրկում էին աղօթքի ու մայրական անանձնական սիրոյ ողջոյնները, ցնծութիւն էր տաճարում: Իսկ, Սոնորան, ընկողմանած մայրական վշտի անուշ անուրջում, խորհրդածել էր, թէ ինչո՞ւ նաեւ հայրերին երջանիկ մաղթանք, նրանց խոնջանքին երախտիք, նրանց արարման պաթոսին խրախճանքի հանդէսների տօնակատարութիւն չկատարուէին, որ նրանց աւիւնով ուռճացած զաւակները՝ իրենց հոգիներից քաղած սիրոյ երախտիքի փունջեր մատուցէին:

Սոնորան ու հինգ քոյր եղբայրները հայրիկի՝ Ուիլիամ ձէքսոն Սմարթի խնամքին էին մնացել: Կեանքի վայելքները զոհաբերած՝ բարեպաշտ, քրիստոնէական սիրով յորդած հայրը, աւելի քան երկու տասնամեակներ խնամել էր իր վեց զաւակներին, մայրական սիրոյ գգուանքի հուր կաթելով նրանց սրտերին:

1910 թուականի Յունիսի 19ին՝ հայրիկի ծննդեան օրը, Սոնորան Ուաշինկթոն նահանգի Սպակէյն քաղաքում տօնախմբութիւն էր կազմակերպել՝ իր եւ բոլոր հայրերի մեծարման համար: Աստուածային երախտագիտութեամբ յորդած աղջիկ, քու անունն էլ հայրերի օրուայ հետ փառաբանւում է, եւ դու, հայրական քնքուշ սիրոյ կրակի ջահը ձեռքիդ, քայլում ես ծաղիկների ու աստղերի լոյսով վառուած քու յաւերժութեան ճանապարհին, հայրերի հոգիները քեզ գրկած՝ եթերային ճախրանքի են տանում:

Եւ ամէն տարի, Արարիչի հանգստեան Կիրակի օրը, երկրում սկսել էին հայրերի մեծարանքի ոչ պաշտօնական օրեր տօնախմբել՝ նրանց պատուին սիրոյ հրավառութիւններ կատարել, որոնց լոյսերը ցնծութիւն էին յորդել հայրերի առնական սրտերին: 1924 թուականին, երկրի նախագահ Կալվին Կուլիջը ամէն տարուայ Յունիս ամսուայ երրորդ Կիրակի օրը հռչակել էր «Հայրերի Օր»: Օրուայ ծաղիկը ընտրել էր վարդը՝ իր կարմիրը Աստղիկի արիւնից քաղած ծաղիկների գեղուհին, որին բազմած սոխակները տիեզերքի ողջոյնն են հնչում աշխարհին: Կարմիր վարդերը ողջերի լանջերին, իսկ սպիտակ վարդերը նրանց շիրիմներին՝ որպէս լուսնեակից քաղած ձիւնալոյս պսակ:

Տիեզերքի արարիչին «Հայր» մեր ենք կոչում: «Հայր Մեր» տէրունական աղօթքը մրմնջում ենք վերացած, լուռ երկիւղածութեամբ, խաղաղութեան անդորը է իջնում մեր հոգիներին, չարից փրկուելու աղերսանք, մեր անուշ մանչերին հանապազօրեայ հաց պարգեւելու յոյսի ըղձանք: Հայրը հացի արարողն է, մեր ռանչպար հայրերն էին ցորեանի հատիկները թեւատարած շաղ տուել հայոց արտերին, հորովելներ կանչելով եզներին եղբայր դարձրել, արօրների արեւաշող խոփերով հողի կուրքծը պատռելով ծածկել այն, որոնց մահով արտերն էին կանաչ հագել, արտերն էին ոսկեփայլ ծփացել, հասկերը զեփիւռին յենած հեզաճկուն պար էին բռնել, ամբարները յորդել հացով: Հայոց հեթանոս աստուածների տիեզերական ոգու խորհուրդի կրակը հոգում՝ քրմացած հայ բանաստեղծը Վարուժան, հացի արարման աղօթքն էր եկրնէր:

Երկիրը մեր Հայր-ենիք ենք կոչել, մեր նախնիների արեամբ, քրտինքով, խոնջենքով, մաքառման մարտերով ողողուած հողը հայրենիք է դարձել, որը Արշակների սրտերին պայքարի, կռուի շանթեր էր ժայթքեր: Հայրենի երկրում, հայրերը չէներ, ոստաններ են արարել իրենց ժառանգների համար, որոնք դիւցազնօրէն կռուել են նրանց պաշտպանութեան համար: Երբ հայրենիք ենք կանչում, սարսռում են հոգիները մեր, հայրենիք մրմնջալով՝ ժպտում է մեր սիրտը, կորցրած երկրի կարօտի յուշերից փլւում է մեր հոգին, նրա խռովքից մեր ակներից մարգարտաշար արցունքի հատիկներ են գլորւում մեր այտերին: Հայրենիքի համար իրենց զարնանային հէքիաթների երազներն են զոհել բազում, բազում զաւակները հայոց, իրենց արեամբ հողն հայրենի սրբացրել: Ինչքան այդ հողը պիտի շարունակի հեծել թշնամու զարշապարի տակ: Կորցրինք, տանուլ տուինք, ափսոս:

Հայրերի արարած տները հայրական տուն ենք կոչում, ուր գնացինք, նրա կարօտի մրմունջները տարինք մեզ հետ: Իմ ծննդավայրի հայրենի տունը: Ամէն օր այցի եմ գնում նրան, աշտարակած է նա իմ հոգում, նրա պատշգամբում ռազմադաշտից վերադարձած հայրիկիս եմ փաթաթւում մայրիկիս համբոյրն է գգւում ինձ, խռովում է հոգիս՝ թէ կարօտի սարսուռի անուրջների անուշ հովիկներին բացմած՝ գնում ընկողմանալու նրա գիրկը: Հայրը ինքը տունն է, իր վսեմ ճակատի վրայ է պահում այն, որ չփլի՝ ապաստան լինի զաւակներին:

Սահակ Բագրատունի իշխան իմաստուն, դուն քու արիական ազգի պատմութիւնը երկնելու խնդրանք աղերսեցիր Մաշտոցի աշակերտ Խորենացուն՝ քեզ ու քու տոհմին յաւերժացնելով հայոց Մատեանում յիշատակուելու լոյսով: Եւ Խորենացի այրը իր ցեղի դարերին այցի գնաց, հայերի մտքի թռիչքներով աւանդուած պատումներից ճշմարիտը ու իրականը պեղեց եւ իր ազգի բազինին ձօնեց «Պատմութիւն Հայոց», որից վառուած ջահերը արմենական հուր են կաթում մեր հոգիներին: Հայոց Գողթան կողմն աշխարհի՝ բանաստեղծների ասքը յորդեց մեր սրտերին, հուր-հերով ու արեգակունք-ակներով Վահագնի ծնունդի հրաշապատումը աւետեց, մեր նախնեաց բազում մեծագործութիւնների հպարտանքը ու նրա վսեմութեան պատգամի փայլատակումը յորդեց մեր սրտերին եւ նրան հայր՝ Պատմահայր կոչեցինք:

Շար.ը էջ 19

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ
ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS

Պոլսահայ Միութիւնը ինչպէս ամէն տարի, կը ծրագրէ կրթաթոշակ յատկացնել Գոլէճի եւ Համալսարանի յաջողագոյն ուսանողներու: Խնդրարկուները պէտք է.

1. Հայ ծագումունենան

2. Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ չորս տարուայ գոլէճի կամ համալսարանի դասաւանդութեանց յանախելու իրաւունք ստացած ըլլան (full time)

3. Ցուցաբերեն լաւ նիշեր

Պոլսահայ Միութեան Կրթաթոշակի թեկնածու բոլոր աշակերտները պէտք է լրացնեն դիմումնագիրը եւ յանձնարարական նամակները որոնք կարելի է ստանալ այցելելով հետեւեալ կայքէջը:

http://www.oia.net/scholarship: Պոլսահայ Միութեան Կրթաթոշակի Յանձնախումբը պիտի վերաքննէ բոլոր

դիմումնագիրները եւ պիտի ընտրէ այն աշակերտները որոնց ակադեմական եւ յաւելեալ դասընթացքներու գործունէութիւնները ցոյց կու տան խոստմնալիութիւն:

Յատուկ նկատառում պիտի տրուի այն խնդրարկուներուն որոնք մօտէն կապ ունին Հայկական համայնքային գործունէութիւններու հետ: Գոլէճի կրթաթոշակի յատկացումներուն գումարին մօտաւորապէս կէսը պիտի տրուի Պոլսահայ ծագումունեցողներուն:

Ամբողջացած դիմումնագիրները մինչեւ Հոկտեմբեր 24, 2009 թուականը պէտք է ուղարկուած ըլլան հետեւեալ հասցէին:

THE ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS/ SCHOLARSHIP COMMITTEE
P.O. Box 55153 Sherman Oaks, CA 91413

As it does every year, the Organization of Istanbul Armenians plans to award a number of scholarships to outstanding college and university students. To be eligible an applicant must

1. Be an individual of Armenian descent.

2. Be a full-time student in an accredited four year college/university or a full-time graduate student in the United States

3. Demonstrate academic excellence

All students to be considered for an OIA Scholarship must complete and mail-in an application form and letters of recommendation, available for download at http://www.oia.net/scholarship. The OIA Scholarship Committee will review all applications and select students whose academic and extra-curricular activities show the most promise. Special consideration will be given to applicants involved in Armenian community activities. Roughly half of total amount allocated for college scholarships will be given to students of Istanbul Armenian descent.

Completed applications must be submitted no later than October 24, 2009 to the following address;
THE ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS/ SCHOLARSHIP COMMITTEE
P.O. Box 55153 Sherman Oaks, CA 91413

ՆՈՐ ՔԱՐՈԶԱԳՐՔԻ ՄԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ ՏԻՐՈՋ ՇԱՌԱՆ ՏԻՐՈՋ ԱՆԴԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ «ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ»

ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆԳ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ժրաջան հոգեւոր հովիւը երջանիկ է որովհետեւ ինքզինք Տիրոջ Անդաստանին մէջ կը զգայ՝ գործքով ու հաւատքով ուր իր հոգիի եւ մտքի արգասիքը կը կերտէ իր համեստ ճիգերով բաշխելու համար զայն հաւատացեալներուն: Արժանաշնորհ Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեանն է այդ օրինակելի հոգեւորականը որ ահա իր չորրորդ քարոզագիրքի 32 քարոզներով »Անառակ Որդու Վերադարձը« կ'ընծայէ իր հոգեւոր եղբայրներուն եւ հաւատացեալ հօտին: «Տիրոջ Խորան»էն սկսելով ան «Հաւատքի Ուժը» փոխանցեց ու զայն «Սիրոյ Սեղան»ին վրայ պատարագեց: Ու այս բոլորը հոգեկան գոհունակութեամբ, հաւատքով ու անսակարկ սիրով: Ոչ մէկ ակնկալութիւն, բացի ըղձանքէ մը որ քարոզները, որոնք պարզ են եւ ուղղակի գրուած, Քրիստոսի լոյսը գոնէ մասամբ հասցնեն աղօթողին ու հաւատացեալին:

«Անառակ Որդու Վերադարձը» ինք իր մէջ ունի ներշնչող պատգամը թէ դառնալ պէտք է մեր հին ճանապարհէն եւ ընդունուիլ Հօրմէն որ կը սպասէ իր որդիներուն: Որպէսզի կարենայ իր այս Քարոզագիրքը արժեւորել եւ կնքել, Տէր Հայրը իր համեստ մտքի ցոլքերուն վրայ կ'աւելցնէ մեր հին անցեալի մեծ վարդապետներուն եւ մօտաւոր անցեալի հոգեւորականներուն անժամանցելի եւ շատ օգտակար վերլուծումները: Անոնց շարքին են հիներէն Մանդակունի Հայրապետն ու Շնորհալին, Գրիգոր Նարեկացին ու Տաթեւացի Հայրապետ, որոնք հիմը դրած են Հայ Եկեղեցւոյ դաւանանքին ու պաշտամունքին, երգած են ու մեկնաբանած Աւետարանն ու Քրիստոսի կեանքը:

Բացառապէս զգալի են այն ներդրումները որոնք սոյն Քարոզագիրքի հեղինակին կողմէ կը մէջբերուին նորօրեայ հոյակապ հոգեւորականներու ընծայած քարոզներէն ու մեկնաբանութիւններէն, որոնց շարքին ականաւոր դէմքերն են Վազգէն Ա Կաթողիկոս, Գարեգին Ա Յովսէփեանց Կաթողիկոս, Բաբգէն Կիւլէսէրեան Աթոռակից Կաթողիկոս, Թորգոմ Պատրիարք Գուշակեան, Գարեգին Պատրիարք Խաչատուրեան, Շնորհք Պատրիարք Գալուստեան, եւ այլ բազմերախտ հոգեւոր պետեր, որոնք Ս. Էջմիածինն ու Արմաշը, Երուսաղէմն ու Կիլիկիոյ Աթոռը այնքան բնական կերպով, առանց բռնազբօսիկ ուղղութիւններու դիմելու, իրենց ուրոյն տաղանդովն ու գրական վաստակով ընծայած են Հայաստանեայց Եկեղեցիին: Ու այս կէտին մէջ գնահատելի է Տ. Յովսէփ Քահանայ Հօր կատարած պրպտումները՝ համբերութեամբ եւ հակիրճ բովանդակութեամբ:

Քարոզագիրքին ներքին կառոյցն ալ հետաքրքրական է եւ միեւնոյն ատեն ընթերցողին ուշադրութիւնը կը լարէ: Հոն ո՛չ միայն տօներն են որ կը տողանցեն ըստ Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցին, այլ ամէն քարոզ իր Աւետարանական հպումէն զատ ստացած է նաեւ մեր Եկեղեցւոյ Շարակնոցին հմայքը, գրաբարին հետ աշխարհաբար թարգմանութեամբ, որպէսզի հաւատացեալը կապ մը հաստատէ քարոզուած պատգամին ու երգուած հոգեւոր շարականին միջեւ: Այս մօտեցումը մենք նկատած ենք կանուխէն Երջ. Շնորհք Պատրիարքի քարոզագիրքերուն մէջ, որուն հետեւած է Տ. Յովսէփ Ա. Քահանան իր անվերապահ երախտիքը յայտնելով միանգամայն առ որ անկ է:

Առաւելութեամբ մը եւս կը փայլի ներկայ «Անառակ Որդու Վերադարձը», եւ այդ ալ մաքուր, վճիտ եւ հասկնալի լեզուով գրուած ըլլալն է: Կարդալու ձանձրոյթ չէ որ զգացի երբ երկու շունչով կարդացի ներկայ հատորը, այլ հաճոյքով ու հետաքրքրութեամբ: Պարզ լեզուն ու նիւթերուն համառօտութիւնը առաջին հերթին ընթերցողին ակնկալութիւնները կը սրեն ու քարոզները, որոնք տրամաբանական յաջորդականութեամբ եւ ըստ Տօնացոյցի դասաւորուած են, ուսանելի կ'ըլլան, հաճելի կ'ըլլան ու մանաւանդ իրենց կեանքէ առնուած այլազան օրինակներովը, փոքրիկ մանրավէպերով նոյնիսկ, կուգան յագեցնելու ընթերցողին ծարաւը:

Կարեւորութեամբ նշելու եմ նաեւ Քարոզագիրքին զուտ հոգեւոր եւ բարոյական նկարագիրը: Արդէն անոնք են մնայունն ու կենսականը: Տէր Յովսէփ իր քահանայական պաշտօնին հաւատարիմ մնալով ամէն հոգեւոր պատգամ համարձակութեամբ եւ կենսախինդ լաւատեսութեամբ տուած է առանց կրկնաբանելու, անտես չառնելով անոր մէջ եւ կամ անոր կից բարոյախօսական կարեւոր բաժինը: Բարոյական դասը որ այս անգամ կուգայ Աւետարանի անսպառ աղբիւրէն կը լրացնէ հոգեւոր նոյն պատգամը ճիշդ այնպէս ինչպէս Քրիստոս մեր Տէրը անբաժան պահեց երկուքը՝ հոգեւորն ու բարոյականը, սորվեցնելով իր աշակերտներուն ու հետեւորդներուն բարոյական արժէքներու կիրարկումը որպէս լրում Աստուծոյ պատգամին եւ խօսքին:

Գիրքը հիմնապէս «Վերադարձ»ի հրաւէր մըն է դէպի Քրիստոս այնպէս ինչպէս Անառակ Որդին շեղելէ ետք վերադարձաւ իր հօր տունը զղջալով, եւ սակայն որդիին համար սիրոյ մեծագոյն դասը եղաւ իր հօր համբուրելի ընդունելութիւնը որպէս իր հարազատ որդին, որ կորսուած էր եւ գտնուած:

«ԳՈՀԱՐ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ ԿԻՊՐՈՍԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Հայաստանի Կիւմրի քաղաքի հռչակաւոր «Գոհար» երգչախումբը ղեկավարութեամբ՝ մաեստրօ Սեպուհ Աբգարեանի, այս օրերուն համերգային շրջապտոյտի ելած է Միջին Արեւելքի հայաշատ քաղաքներն այցելելով: Առաջին հերթին «Գոհար» համերգային ճոխ յայտագրով մը ելոյթ ունեցաւ Նիկոսիոյ մէջ, որուն ներկայ գտնուեցան նաեւ կառավարութեան ներկայացուցիչներ եւ բարձրաստիճան դիւանագէտներ: Կիպրական մամուլն ու հեռուստակայանները բարձր գնահատանքով արտայայտուեցան «Գոհար» երգչախումբի կատարողական արուեստին մասին:

Այս օրերուն՝ «Գոհար» իր յաղթական շրջապտոյտը կը շարունակէ համերգներու շարք մը տալով Դամասկոսի եւ Հալէպի մեծագոյն սրահներուն մէջ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԴԵՐԱՍԱՆ ԲԵՄԱԴՐԻՉ ԺԻՐԱՅՐ ՓԱՓԱԶԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆԻ

Վերջերս, չորս այլ հայրենի արուեստագէտներու կողքին ֆրանսահայ դերասան եւ բեմադրիչ Ժիրայր Փափազեան արժանացաւ նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ ընծայուած Մովսէս Խորենացի շքանշանին՝ իր գեղարուեստական նուաճումներուն եւ հայ արուեստը համաշխարհային բեմերու վրայ պանծացնելու նուիրումին համար:

Փափազեան տաղանդաւոր արուեստագէտ մըն է որուն նուաճումները կ'երկարին Հայաստանէն Միջին Արեւելք եւ անկէ՝ մինչեւ Եւրոպա եւ Ամերիկա:

Արուեստագէտը ներկայիս մաս կը կազմէ Ֆրանսայի ամենէն յայտնի թատերախումբերէն մէկուն որուն բեմադրիչն է աշխարհահռչակ Իրինա Պարուք, դուստրը նոյնքան նշանաւոր Փոթըր Պրուքի:

Անցնող երկու տարիներուն Փափազեան վերցուցած էր ամենէն յայտնի դերերէն մէկը (Պաթըմ) Շէքսփիրի «Միջամառնային երազ մը» թատերախաղին մէջ, որ Իրինա Պրուքի արդիական մեկնաբանութեամբ շրջեցաւ համայն Եւրոպան, Հիւսիսային Ափրիկէն եւ Գանատան, արժանանալով միջազգային մամուլի անվերապահ գնահատանքին:

Ապրիլ ամսուան մէջ նշանաւոր բեմադրիչը նախաձեռնած էր ուիրշ արկածախնդրութեան մը՝ Սերվանտէսի «Տոն Քիշոթ»ին տալով նոր մեկնաբանութիւն մը: Թատերախաղը Ապրիլ ամսուան մէջ ունեցաւ իր բացումը Փիթըր Պրուքի «Թէաթրը տէ Պուֆ տիւ Նիւր» պատմական թատերասրահին մէջ: Այս անգամ Փափազեան ստանձնած էր Սանչօ Փանզայի դերը՝ գրեթէ ամբողջ թատերախաղը կրելով իր ուսերուն: Ամբողջ ֆրանսական մամուլը գերազանց գնահատանքով արտայայտուեցաւ ի տես թատերախաղի յաջող բեմադրութեան ու մանաւանդ Փափազեանի արտակարգ խաղարկութեան: Փարիզի «Ֆիկարօ» թերթի թատերական քննադատը՝ Նաթալի Սիմոն «սքանչելի տաղանդ» հռչակած էր Բաբազեանը, Ապրիլ 23, 2009ի մէջ հրատարակուած իր թատերախօսականին մէջ:

Թատերախումբը արդէն հրաւիրուած է այս թատերախաղը ներկայացնելու, բացի Եւրոպայէն, նաեւ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի գլխաւոր քաղաքներուն մէջ: Թատերախաղին մէջ կը փայլի նաեւ ուրիշ հայ տաղանդ մը՝ յանձին պարուհի Լորի Պաղտասարեանի:

Շնորհիւ Ժիրայր Փափազեանի ջանքերուն՝ Իրինա Պրուքի թատերախումբը յառաջիկայ Սեպտեմբերին հրաւիրուած է Երեւան, նախ մասնակցելու Շէյքսփիրեան փառատօնին, ապա նաեւ առանձնապէս ներկայացնելու Սեվանտէսի գործը որ այս անգամ կը կրէ «somewhere... la Mancha» վերնագիրը:

Բացի ֆրանսական բեմի իր յաջողութիւններէն, Փափազեան Փարիզի մէջ հիմնած է Տիգրան Զուհաճեանի հետազօտական հիմնարկը, նպատակ ունենալով հայկական արժէքները ներկայացնել միջազգային հասարակութեան:

Արդէն ան Պարոնեանի «Ատամնաբոյժն Արեւելեան»ը ֆրանսերէնի թարգմանելով բեմադրած է Մոլիէռեան հրայրքով: Վերջերս, իր նոր լիպրեթթոյով եւ ֆրանսերէն թարգմանութեամբ ան բեմադրած է նաեւ Զուհաճեանի «Կարինէ» օփերէթը:

Արեւմուտքի մէջ առաջին անգամ միջազգային բեմ բարձրացած է մեր ազգային օփերան՝ Տիգրանեանի «Անոյշ»ը Ժիրայր Փափազեանի ջանքերով եւ բեմադրութեամբ: 1981-ին՝ անգլերէնով եւ 2001-ին՝ հայերէնով Միշիկընի օփերային մէջ: Նոյնպէս իր թարգմանութեամբ Սան Ֆրանսիսքոյի օփերային բեմին վրայ ներկայացուցաւ հայկական առաջին օփերան՝ Զուհաճեանի «Արշակ Բ.»ը, իր հարազատ բնագրով:

Իր ազատ պահերուն Փափազեան կը զբաղի թարգմանչական գործով: Վերջերս հրատարակութեան պատրաստած է Վահան Թէքէեանէն փունջ մը քերթուածներ՝ անգլերէն լեզուով ու գեղարուեստական ընտիր ճաշակով:



«ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ԸՆԿ. ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակուածէջ 5-էն

դա տեղի չունեցաւ: Մենք առաջարկեցինք ՀՅԴ-ին դուրս գալ իրենց դաշինքից եւ միանալ մեր դաշինքին, սակայն նրանք չկարողացան դա անել:

- Ի՞նչ ռեզոնանսներ կ՝ունենան Լիբանանում տեղի ունեցած ընտրութիւնները Հայաստանում, ուր եւս քաղաքական վերադասաւորումների հեռանկարը չի բացառւում: Ի՞նչ դասեր պէտք է քաղի ՀՀ քաղաքական դաշտը լիբանանեան ընտրութիւններից, մասնաւորապէս՝ Հայաստանում գործող հայ աւանդական կուսակցութիւնները:

- Մենք բոլորս հոգով կապուած ենք մեր հայրենիքի հետ, եւ մեր կուսակցութեան անդամների մեծամասնութիւնը, այդ թւում եւ ես հնարաւորութիւն եմ ստացել բարձրագոյն կրթութիւն ստանալ մայր հայրենիքում: Փաստ է, որ լիբանանեան ընտրութիւններում յաղթեց դեմոկրատիան: Արդեօք կարո՞ղ ենք նոյնն ասել նաեւ վերջերս ՀՀ-ում անցկացուած աւագանու ընտրութիւնների մասին: Թերեւս ոչ, եւ կարծում եմ, որ ժամանակն է արդէն, որպէսզի այլեւս թոյլ չտրուեն նմանօրինակ խախտումներ, ինչպիսիք որ արձանագրուեցին այդ ընտրութիւններում, որովհետեւ ընտրախախտումներ թոյլ տալով՝ իշխանութիւնները յուսահատեցնում են ժողովրդին եւ ստիպում մտածել արտագաղթի մասին: Իսկ դա կանխելու համար իշխանութիւնները չպէտք է բռնանան ժողովրդի կամքին ու պէտք է նրան ազատ ու անկախ ընտրելու հնարաւորութիւն տան, թողնեն, որ ժողովուրդն իր խօսքն ասի, որքան էլ որ այդ խօսքն իրենց համար նպաստաւոր չէ: Այսքան դարեր յետոյ, երբ մենք վերականգնեցինք մեր անկախութիւնը, պէտք չէ այն կորցնելու փաստի առաջ կանգնենք՝ յանուն մանր-մունր աթոռների, մէկ նախարարի կամ քաղաքապետի պաշտօնի պատճառով:

- Իսկ հայ աւանդական կուսակցութիւններն, ըստ ձեզ, արդեօ՞ք ճիշդ քաղաքական գիծ են որդեգրել մայր հայրենիքում՝ Հնչակեանները՝ ՀԱԿ-ի կազմում, ՀՅԴ-ն՝ կոալիցիայից դուրս, ՀՌԱԿ-ն էլ՝ պրոիշխանական:

- Ես կարող եմ միայն Հնչակեանների մասին խօսել. մենք ընդդիմադիր դաշտում ենք, եւ իմ մեծագոյն ցանկութիւնն է, որ մեր ընդդիմադիր դիրքորոշումը լինի շինիչ: Մենք այդ դիրքերից ենք հանդէս գալու այնքան ժամանակ, մինչեւ իշխանութիւնները կատարեն որոշակի սրբագրումներ իրենց քաղաքականութեան մէջ, որովհետեւ վայել չէ նրանց այսպէս իշխանավարել շարունակելը: Մեր կուսակցութիւնը, որը ԽՍՀՄ տարիներին էլ մշտապէս նեցուկ է եղել հայրենի իշխանութիւններին, այսօր խօսք ունի գործող իշխանաւորներին. դժբախտութիւն է, որ երկրում դեմոկրատիա չկայ, եւ դրանից էլ գալիս են մնացած բոլոր դժբախտութիւններն ու անյաջողութիւնները թէ՛ արտաքին քաղաքականութեան, թէ՛ ներքին՝ տնտեսական քաղաքականութեան հարցերում: Բայց մենք՝ որպէս կուսակցութիւն, պատրաստ ենք նստելու, բանակցելու եւ ընդհանուր եզրեր գտնելու հայրենի իշխանութիւնների հետ՝ երկրի վիճակի համար նպաստաւոր լուծումներ գտնելու համար:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Շարունակուածէջ 6-էն

նակցութիւններ են, որոնք ուղղուած են Թուրքիայի զսպմանը, այլ ոչ թէ խնդիրների լուծմանը: Եթէ հայկական կողմը հասկանում է դա, ապա արդէն վատ չէ, իսկ եթէ հայերը լուրջ են ընդունում այդ բանակցութիւնները, ապա դա միամտութիւն է:

Այն աշխարհաքաղաքական հեռանկարում, որ ձեւաւորում են ԱՄՆ-ը եւ Եւրամիութիւնը, Հայաստանի համար կայ կարեւոր պայման եւ հանգամանք: Այսինքն, միայն Թուրքիային շրջափակելու եւ մեկուսացնելու քաղաքականութիւնը կարող է հանգեցնել նրա յարաբերութիւնների կարգաւորմանը Հայաստանի հետ, եթէ Թուրքիան այլ որոշում չընդունի: Այսինքն՝ մեծ տարածաշրջանային պատերազմ, եթէ Թուրքիայում ներքին գործընթացների զարգացումը հանգեցնի բոլոր պրոբլեմները ռազմական ագրեսիայի միջոցով տարածաշրջանային կտրվածքով լուծելու եւ ոչ միայն Հայաստանի նկատմամբ: Առայժմ Թուրքիան համարւում է Ատրպէյճանի ագրեսիւ մտադրութիւնները զսպող գործօն: Բայց եթէ Թուրքիային պարտադրեն մեկուսացման մի իրավիճակ, եւ նրա ծրագրերի իրականացման բոլոր հուլսերը սպառուեն, ապա Ատրպէյճանի պահուածքը կարող է ամենայարմար առիթը դառնալ տարածաշրջանային մեծ պատերազմի համար:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Շարունակուածէջ 6-էն

րութիւնների հաստատմամբ՝ փորձելով նախ փոխհատուցել այն հանգամանքը, որ Ապրիլի 24ին չարտասանեց «ցեղասպանութիւն» բառը», գրում է Օսկանեանը՝ յաւելելով. «Հայաստանը ու Թուրքիան ճիշտ է, տարբեր պատճառներից դրդուած՝ ցանկանում են երկկողմ յարաբերութիւններում առաջընթաց արձանագրել»:

Օսկանեանի պնդմամբ, տարածաշրջանում զգալի է նաեւ անցած տարուայ ռուս-վրացական պատերազմի ազդեցութիւնը, իսկ միջազգային կառոյցներում ի յայտ են եկել միմեանց հակասող մօտեցումներ ու ուղղութիւններ՝ յատկապէս Քոսովոյի անկախութեան հռչակումից յետոյ:

«Ռուսաստանը՝ հակադրուելով իր համոզմամբ՝ Քոսովոյի անկախութեան միակողմանի հռչակմանը, փորձեց հաւասարակշռել այս գործընթացը: Դա աւարտուեց նրանով, որ Ռուսաստանը նոյն քայլին դիմեց արդէն Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի պարագայում: Այլ կերպ ասած՝ Ռուսաստանն ու Արեւմուտքը, անկախութեան ընտրովի ճանաչում իրականացնելուն զուգահեռ, շարունակում են խօսել տարածքային ամբողջականութեան գաղափարի գերակայութեան մասին: Այս հակասական իրադրութիւնը, որ ստեղծուել է առաջիան այլ որոշում չընդունի: Այսինքն՝ մեծ տարածաշրջանային պատերազմ, եթէ Թուրքիայում ներքին գործընթացների զարգացումը հանգեցնի բոլոր պրոբլեմները ռազմական ագրեսիայի միջոցով տարածաշրջանային կտրվածքով լուծելու եւ ոչ միայն Հայաստանի նկատմամբ: Առայժմ Թուրքիան համարւում է Ատրպէյճանի ագրեսիւ մտադրութիւնները զսպող գործօն: Բայց եթէ Թուրքիային պարտադրեն մեկուսացման մի իրավիճակ, եւ նրա ծրագրերի իրականացման բոլոր հուլսերը սպառուեն, ապա Ատրպէյճանի պահուածքը կարող է ամենայարմար առիթը դառնալ տարածաշրջանային մեծ պատերազմի համար:

տար տէրութիւնների մեղքով, թէ՝ հակամարտող կողմերից, թէ՝ միջնորդներից նուրբ դիւանագիտական խուսանաւումներ է պահանջում», նշում է նախկին արտգործնախարարը:

Հակասութիւնների այս կծիկի ֆոնին հաւանակա՞ն է արդեօք հարցի կարգաւորումը: Օսկանեանը յիշեցնում է, որ բանակցութիւնների 15 տարիների ընթացքում կարգաւորման հինգ տարբերակներից չորսը մերժուել են, մէկն էլ այսօր կողմերը շարունակում են քննարկել. «Հիմնախնդիրը, սակայն, դիւրին լուծում չի ստանայ, քանի դեռ հայկական ու ատրպէյճանական կողմերը ունեն մի մօտեցում որը, նրանց համոզմամբ, աւելի ձեռնտու է, քան բանակցութիւնների միջոցով ձեռք բերուած համաձայնութիւնը»:

«Հայերի համար այդ տարբերակը ստատուս քուոն է, Ատրպէյճանի համար՝ պատերազմը», նշում է Վարդան Օսկանեանը՝ եզրափակելով. «Հաստատուն խաղաղութեան մասին կարող ենք խօսել այն ժամանակ, երբ կողմերը կը բաւարարեն նաեւ դիմացինի նուազագոյն պահանջները, այլ ոչ միայն իրենցը: Մինչ սա տեղի կ՝ունենայ, կողմերը պէտք է բանակցութիւններում իրենց դիրքորոշման վերաբերեալ բաւարար ներքին կոնսենսուս ձեւաւորեն: Առայժմ նման բան չկայ»:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ) GLOABCAST SATELLITE

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱՂՆԱՁԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30 Կլէնտէյլի 280-րդ կայանից

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
Palm Springs

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	$ 400
Long Weekend-ների համար՝	$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	$ 675
Մէկ ամսուայ համար՝	$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՄԱՀԱԶԴ

ԱՂԱՒՆԻ ՍԱԹԱՄԵԱՆ
(Ծնեալ Թրիբոլի, Լիբանան 1932)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրելի մօր, մեծ մօր եւ քրոջ ԱՂԱՒՆԻ ՍԱԹԱՄԵԱՆԻ, որ պատահեցաւ Շաբաթ, 13 Յունիս, 2009ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 17 Յունիս, 2009, երեկոյեան ժամը 7:00ին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Եկեղեցիին մէջ՝ 900 W. Lincoln Ave., Montebello, CA 90640:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինշաբթի, 18 Յունիս 2009, առաւօտեան ժամը 10:00ին Ս. Խաչ Եկեղեցիին մէջ: Ապա, թաղման կարգը պիտի կատարուի Rose Hill գերեզմանատան մէջ 3888 Workman Mill Rd., Whittier, CA 90601:

Սգակիրներ՝

Դուստրը՝ Անուշ Մանուկեան եւ զաւակը՝ Ռիթա

Որդին՝ Յարութ Սաթամեան եւ զաւակները՝ Սարին եւ Դալար

Որդին՝ Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Մարինա Սաթամեան եւ զաւակները՝ Թամար եւ Թանիա

Որդին՝ Միհրան Սաթամեան եւ զաւակը Քէնտըլ

Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Անի Տէրմէնճեան

Թոռնիկը՝ Տէր եւ Տիկ. Դանիէլ եւ Հուրի Մանուկեան

Քոյրը՝ Սիրվարդ Արապաճեան եւ զաւակը Գարլօ

Քոյրը՝ Մարկրիթ Թատճէ եւ զաւակները՝ Էտտի եւ Լէյլա

Տիկ. Զապէլ Արապաճեան եւ զաւակները՝ Սոնա, Նորա, Սոֆիկ եւ Լիզա

Քոյրը՝ Փոլին Ալթունեան եւ զաւակը Արմէն

Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Սեդա Արապաճեան եւ զաւակները՝ Մարալ եւ Յարութ

Մօրեղբայրը՝ Յովհաննէս Փէլթէքեան եւ զաւակունք

Մօրեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Վարդան Փէլթէքեան եւ զաւակունք

Մօրեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Վարուժան Փէլթէքեան եւ զաւակունք

Եւ համայն Սաթամեան, Արապաճեան, Փէլթէքեան, Մանուկեան, Կարապետեան, Տէրմէնճեան եւ Ալպրեան ընտանիքներն ու հարազատները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Հանոյ Հայրենակցական Միութեան (Լիբանանի Ուսանողներու Ֆոնտին):

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Արթօ Փոլատեան (Աւստրալիայէն) իրենց խորագոյց ցաւակցութիւնները կը յայտնեն Տիկ. Ատրիան Սաղրեանին ու ընտանեկան բոլոր պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի $100 կը նուիրեն Գանատայի «Լուսաբաց» շաբաթաթերթին եւ $100 «Մասիս» շաբաթաթերթին:

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ԹԱԳՒՈՐ (ՏՈՒՊԵԱՆ) ՍՏԵՓԱՆԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթֆեաններ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարուժան եւ Զարմինէ Սահակեաններուն:

Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

Merrill Lynch
INVESTMENT BANKING
JACK KALANJIAN
Professional Financial Advisor
Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com
"Helping the Armenian Community Build Wealth"

«ԵՍ»-Ը ԵՒ «ՈՉ-ԵՍ»-Ը ԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Շարունակուած էջ 13-էն

ծագործական ուժի հիմնական աղբիւրը, ըստ միջնադարեան մատենագրերի, գտնուում է այն իրողութեան մէջ, որ Աստուած մարդուն ստեղծեց Իր պատկերի նման եւ այդպիսով նրան շնորհեց կամքի ազատութիւն ու ընտրութիւն կատարելու իրաւունք: Վերջիններս արուեստի այն հիմքերն ու շնորհներն են, որոնց մասին խօսեց Եզնիկ Կողբացին: Միջնադարեան գեղագիտական միտքը ինքնատիպ գործօնութիւն տեսաւ ստեղծագործ «ես»-ի մէջ: Նա հաստատեց «ես»-ի իրաւունքը իրականութիւնը, «ոչ-ես»-ը արտացոլելու այն որոշակի «ձեւափոխման» (տեֆորմացիայի) ենթարկելով՝ ըստ արուեստի գործի գաղափարական նպատակների: Միջնադարեան հայ գեղագիտական միտքը պնդում էր, որ «ոչ-ես»-ը արուեստ է մտնում տեֆորմացուած ձեւով, որպէսզի ընդգծի արուեստի գործի գաղափարական տպաւորութիւնը, նպատակը: Արդի գեղանկարչական արուեստը միջնադարեան մանրանկարչութիւնց ժառանգեց տեֆորմացիայի գաղափարն ու մեթոդը ու դրա հիման վրայ մեծացրեց ստեղծագործ «ես»-ի ակտիւութեան շրջանակները եւ հիմնադրեց տարբեր դպրոցներ:

Նկատի պէտք է ունենալ, որ ստեղծագործական անհատը կարող է երկատել իր ներաշխարհը եւ դիմի ներհայեցողութեան: Նա իր «ես»-ը բաժանում է երկու մասի: Նա իր «ես»-ի մի մասով ներթափանցում է, ուսումնասիրում է, քննում է, ճանաչում է իր «ես»-ի միւս մասը: Այդ եղանակին է դիմում Գրիգոր Նարեկացին իր «Մատեան Ողբերգութեան» ստեղծագործութեան մէջ: Ինքնաճանաչման ճանապարհով նա ճանաչում է մարդկութեան էութիւնը, քանի որ համոզուած է, որ անհատը իր մէջ խտացնում է առհասարակ մարդու, մարդկութեան էութիւնը: Իրաւ «ես»-ը «մենք»-ի կրողն է: Ներհայեցողութիւնը ոչ միայն մարդաճանաչման միջոց է, այլեւ ինքնակատարելագործման, ինքնամաքրման: Ներհայեցողութիւնը, գտնում է Նարեկացին, նպաստում է որ մարդ ճանաչի «մեծ տիեզերքը»: Ներհայեցողութիւնը, ինքնաքննադատութիւնը ինքնամաքրման գործօններ են, ինքնակատարելագործման, աստուածամերձեցման միջոցներ: Եթէ սոյն գործընթացում ինքնաճանաչումը, ինքնախարազանումը դառնան կենտրոնական եւ անտեսուեն ինքնազարգացումն ու աստուածամերձեցումը, ապա ներհայեցողութիւնը էապէս կ՚աղքատանայ:

ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԵՐԻՆ

Շարունակուած էջ 16-էն

Սպիտակ թղթին հակած՝ մտքս ղողանջում է թոռնիկներիս կանչերի արձագանգները, երբ նրանք բակում խաղալիս ինչպէս էին «Մեծ Հայրիկ» կանչում, այն ինչքան էր անուշ հնչում: Նրանց խաղընկերները զարմանում էին թէ, անոնք ինչու պապիկին «Մեծ Հայրիկ» էին կանչում: Եւ հայրիկների սիրոյ ջերմութեամբ յորդած՝ այդ մանչերն էլ, ինձ հանդիպելիս, զուարթութեամբ «Մեծ Հայրիկ» էին կանչում:

Տիեզերքի բարութեան ջահը ձեռքին երկիր մոլորակ ժամանած բարի հսկայ Սարոյեանը ասել էր, թէ բոլոր հայերը բանաստեղծ են: Ճշմարիտ էր այդ իմաստունը, իսկապէս հայոց դպրութեան, արուեստների, բանաստեղծների աստուած Տիրը ինչքան քերթողներ, գուսաններ էր ճամբել այս արիական ցեղին: Գուսաններ՝ Սայեաթ, Ջիւանի, Շերամ, Հաւասի, Աշոտ իրենց երգերով փառաբանել էին հայրերին, որ նրանք, իրենց զաւակներին հովանի լինելու համար, երկինքից քաղած սպիտակ ամպերով էին քողել նրանց: Ցեղին սրտի ջահը ձեռքին՝ Վահագն Յարդագողի ճանապարհի Հայոց հեթանոս աստուածների տաճարից երկիր ժամանած Վարուժանը, հայրերի ձիւնոտ վարսերի խորհուրդի ճանապարհով գնալու համար՝ աղաչել էր, որ նա իր հոգու խորանից ու իր մատներից կաթող աղօթքով օրհնէր իրեն:

Հայր իմ, օրհնէ ժամը հասաւ, պիտ երթամ:

Նոր կեանք մ՚ինծի կը սպասէ:

Պատանութիւնն ես թողեցի, նոր արիւն

Երակիս մէջ կը վազէ

Իմ արիւնս է գոյացած քու քրտինքէդ.

Յոգնութեանդ ծիլն եմ տխուր:

Հոգիդ, կաղնի, երբ կուրծքդ կու տար մորիկին՝

Ես շուքին տակ, հանգիստ, լուռ:

Հայր իմ, օրհնէ, դողդոջ ձեռքերդ գլխուս դիր,

Թող մատներէդ կաթի վար

Աղօթքդ եկած հոգւոյդ պայծառ խորանէն:

Վերջին ժամն է, օրհնէ հայր:

Հայ իմաստուն մի այր, իր մայրիկին աշխարհներ տարաւ՝ «Մայրիկ» շարժանկարով: Տեսե՞լ էք, արդեօք, Հայաստանի մի իմաստունի «Հայրիկ» շարժանկարը՝ պաստառի վրայ պարթեւահասակ խոշոր Մհեր-Ֆրունզիկ «Հայրիկը»ն է քայլում եւ հեռու բազմութեան մէջէն մանչն է վազում ու «Հայրիկ» կանչելով գիրկն ընկում: Ինչքան անհամբեր սպասել ենք հայրական տան սեմին, վազել ենք հայրիկին ընդառաջ, խոնջած հայրը սիրոյ թովչանքի քրքիչով գրկել, սեղմել է մեզ իր լանջին: Չէ, մեր հայրերը մեր ցեղին ոգին են:

Մեր լեռները կոչեցինք հայրենի լեռներ: Բարձր են լեռները մեր երկրի, սպիտակ թագեր են նրանց գագաթներին, ամպերի ճերմակ շապիկներ են հագել: Գիշերները աստղերն են այցի գալիս նրանց, լուսնեակն է իջնում իր սպիտակ համբոյրը շաղելու նրանց ճակատներին, արեւն իր երթը աւարտելուց առաջ, կարմիր պատմուճան է փռում նրանց վրայ, երկնքում փոթորկած շանթերը կրակէ գօտի են կապում նրանց մէջքին: Հայոց լեռների սրտերից թշնամին խոցելու խռովքի կրակ է ժայթքում:

Ով հայ մարդ, որ արեւի լոյսի ու կեանքի հէքիաթն ես վայելում, իմացիր, այն քեզ է պարգեւել հայրդ, խոնարհիր նրա սպիտակ թագին, նրա կեանքի իմաստութեանը եւ դու քրիստոնեայ հայ, կատարիր պատուիրանը քու պաշտած Աստուծոյ

Յարգիր ու պատուիր Ծնողքդ,

«Պատուէ քու հայր ու մայր, որպէսզի քու օրերդ երկայն ըլլան այն երկրին վրայ որ քու Տէր Աստուած կու տաք քեզի» (Ելից 20-21)

Եւ ամենաթանկագին օրինակը, որ հայրը կարող է տալ իր զաւակներին, նրանց մայրերին շնորհուած իր սիրոյ զուրգուրանքն է:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՓՐԻԿԷ 2010-Ը ՄՈՆՏԻԱԼԸ ԿԸ ՍԿՍԻ ՄԷԿ ՏԱՐԻԷՆ

ՀԱՄԱԴՐԵՑ ԱԲՕ ՊԷԼԵԱՆ

Հոլանտա, Ճաբոն, Քորիա եւ Աւստրալիա դասաւորուեցան աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին: Շարք մը անակնկալներով շարունակուեցան զտումի մրցումները:

Ճիշդ մէկ տարի ետք, առաջին անգամ ըլլալով ափրիկեան ցամաքամասի վրայ տեղի պիտի ունենայ աշխարհի ֆութպոլի ախոյեանութիւնը մասնակցութեամբ 36 հաւաքականներու:

Հարաւ Ափրիկէ 2010 մոնտիալին հասնելու համար տեղի կ'ունենան զտումի մրցումները երկրագունդի տարածքին: Հոլանտա, Ճաբոն, Հարաւային Քորիա եւ Աւստրալիա ապահովեցին իրենց մասնակցութիւնը ֆութպոլի այդ մեծ մրցաշարքին, ուր կը սպասուին գեղեցիկ անակնկալներ բազմահազար հանդիսականներու համար:

***ՖԻՖԱ**-ն կը ցուցաբերէ ամէն տեսակ օժանդակութիւնը մոնտիալի կազմակերպիչներուն, որ ըլլայ բացառիկ մոնտիալ մը, որ աշխարհը աւելի մօտէն ճանչնայ Ափրիկէն եւ անոր ժողովուրդը:*

Շարունակաբար ամփոփ գծերով կը ներկայացնենք զտումի մրցումներու պատկերները բոլոր գօտիներու մէջ:

ԵՒՐՈՊԱ ԿԸ ՀԱՇՈՒԷ 53 ԵՐԿԻՐՆԵՐ

Եւրոպական գօտիէն ներս Հոլանտա եղաւ առաջին հաւաքականը, որ մոնտիալի բացումէն 399 օրեր առաջ իրաւունք ստացաւ մասնակցելու աշխարհի ֆութպոլի ախոյեանութեան մրցաշարքին: Հոլանտա յաղթեց Իրլանտայի 2-1 եւ Նորվեկիայի 2-0 արդիւնքներով եւ կը հաշուէ 21 կէտ:

Անգլիա մօտեցաւ մոնտիալին յաղթելով Ղազախստանի 4-0 եւ Անտորրայի 6-0 եւ կը հաշուէ 21 կէտ:

Միւս խմբակներէն թեկնածու են մոնտիալին ացնելու Սպանիա, ձեռք բերած է 18, Սերպիա 18, Գերմանիա 16, Տէնիմարքա 16, Էսլովաքիա 15, Իտալիա 14, Յունաստան 13 կէտերով կը գրաւեն եօթը խումբերու առաջատարի դիրքերը:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ 10 ԵՐԿԻՐ

Ափրիկէ 2010-ը մոնտիալի զտումի մրցաշարքին 13րդ եւ 14րդ հանգրուանին տեղի ունեցան անակնկալներ: Առաջինը պատահեցաւ Մոնթեվիտիոյի «Սէնթենարիո» մարզադաշտի վրայ, ուր Պրազիլ պարտութեան մատնեց տանտէրը Ուրուկուէյը 4-0 արդիւնքով: Պրազիլ 33 տարի է, որ չէր յաջողեր յաղթել Ուրուկուէյին: Անկէ ետք Պրազիլ յաղթեց խմբակի առաջատար Փարակուէյի 2-1 եւ որպէս առաջատար մօտեցաւ մոնտիալին:

Զիլի կը շարունակէ իր յաղթական երթը դէպի Ափրիկէ, ան յաղթեց Փարակուէյի 3-0 եւ Պոլիվիայի 3-0 եւ տեղ գրաւեց Պրազիլի կողքին:

Դժուար կացութեան առջեւ կը գտնուի Արժանթինը, գլխաւորութեամբ Մարատոնայի: Արժանթին չկրցաւ վերագտնել իր ուժերը Պոլիվիայի առջեւ իր կրած պարտութենէ ետք (1-6) եւ հազիւ կրցաւ յաղթել Գոլոմպիայի 1-0 Պուէնոս Այրէսի մէջ եւ պարտուեցաւ Էքուատորի մէջ 0-2 արդիւնքով:

Պոլիվիա իր փայլուն յաղթանակէն ետք Արժանթինի հետ իր տան մէջ պարտուեցաւ Վէնէզուէլայի դէմ 0-1 եւ Զիլիի 0-3:

Ներկայիս այս գօտիի ընդհանուր դասաւորումը.

Պրազիլ	*27 կէտ*
Զիլի	*26 կէտ*
Փարակուէյ	*24 կէտ*
Արժանթին	*22 կէտ*
Էքուատոր	*20 կէտ*
Ուրուկուէյ	*18 կէտ*

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ 6 ՀԱՒԱՔԱԿԱՆ

Այս գօտիէն 6 երկիրներ կը պայքարին հասնելու մոնտիալին: Անոնցմէ երեքը, կ'անցնին մրցաշարքին, իսկ չորրորդը պարտի մրցիլ Հարաւային Ամերիկայի հինգերորդի դէմ:

Այս վեցեակի աղիւսակի առաջատրն է Քոսթա Ռիքա, արձանագրելով 4 յաղթանակ: Ամերիկայի Միացեալ Նահանգները, որ պարտուեցաւ Քոսթա Ռիքայի դէմ վերագտնելով իր խաղը յաղթեց Հոնտուրասի 2-1 արդիւնքով:

Այս շրջանի մէջ ամենաուժեղ համարուած Մէքսիքոն կը գտնուի լուրջ դժուարութիւններու առջեւ: Ան անյաջող երեք մրցումներէ ետք փոխարինեց մարզիչը եւ շարք մը ֆութպոլիստները, բայց ծանր պարտութիւն կրեց Էլ Սալվատորի դէմ 1-2 եւ հազիւ կրցաւ յաղթել Թրինիտատ Թոպակոյի 2-1 իր դաշտին վրայ:

Ընդհանուր դասաւորում	
Քոսթա Ռիքա	*12 կէտ*
Ա.Մ. Նահանգներ	*10 կէտ*
Հոնտուրաս	*7 կէտ*
Մէքսիքօ	*6 կէտ*
Էլ Սալվատոր	*5 կէտ*
Թ. Թոպակօ	*2 կէտ*

Ափրիկէի 53 եւ Ասիայի 43 հաւաքականներու միջեւ կը շարունակուին զտումի մրցումները: Ինչպէս ըսինք Աւստրալիա, Հարաւային Քորիա եւ Ճաբոն թէեւ կը շարունակեն իրենց խաղերը, բայց անոնք ապահովեցին իրենց մասնակցութիւնը մոնտիալի մրցաշարքին:

Ափրիկէի գօտիին մէջ առաջատարի դիրքի վրայ են Ալճերիա, Նիճերիա, Պէնին, Զանա եւ Փղոսկրեայ Ափ:

www.massisweekly.com
Updated every Friday

ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆութբոլի Հայաստանի առաջնութեան 12-րդ տուրում հերթական պարտութիւնը կրեց Երեւանի «Արարատը», որը 0:2 հաշուով պարտուեց «Բանանցին»: Արկադի Անդրէասեանի սանները շարունակում են առանց միաւորի եզրափակել մրցաշարային աղիւսակը:

Ախոյեան «Փիւնիկը» առաջին անգամ սեփական յարկի տակ միաւորներ կորցրեց: Առաջատարը «Հանրապետական» մարզադաշտում չկարողացաւ առաւելութեան հասնել «Գանձասարի» նկատմամբ: Խաղը աւարտուեց 0:0 հաշուով:

Առաջատարին մօտեցաւ «Միկան», որը 2:1 հաշուով առաւելութեան հասաւ «Ուլիսի» նկատմամբ: Յաղթողների կազմում 2 անգամ աչքի ընկաւ փորձառու Արամ Ոսկանեանը: «Միկան» 26 միաւորով ընթանում է 2-րդ հորիզոնականով, իսկ «Փիւնիկը» 29 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը: Լաւագոյն եռեակը 24 միաւորով եզրափակում է «Բանանցը»:

Եւս մէկ հանդիպում կայացաւ «Հրազդան» մարզադաշտում, որտեղ «Կիլիկիան» հիւրընկալել էր «Շիրակին»: Հիւրերը մինչեւ 85-րդ րոպէն յաղթում էին 1:0 հաշուով, սակայն պաշտպանութիւնում կոպիտ սխալ թոյլ տալով գնդակ ընդունեցին սեփական դարպասը եւ խաղը աւարտուեց 1:1 հաշուով:

Մրցաշարային աղիւսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փիւնիկ	11	9	2	0	27-6	29
2. Միկա	11	8	2	1	22-9	26
3. Բանանց	11	8	0	3	20-11	24
4. Ուլիս	12	6	2	4	16-10	20
5. Շիրակ	12	3	3	6	12-24	12
6. Կիլիկիա	12	3	1	8	11-19	10
7. Գանձասար	12	3	2	7	7-19	11
8. Արարատ	11	0	0	11	3-20	0

ՀԱՄԱԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԱՓՐԻԿԷԻ ՄԷՋ FIFA-CONFEDERATION CUP

Սպանիա – Իրաք խաղի կոլը

*Հարաւ Ափրիկէ 2010-ը մոնտիալէն մէկ տարի առաջ **ՖԻՖԱ**-ն այդ երկրի մէջ կը կազմակերպէ ֆութպոլի միջազգային մեծ մրցաշարք մը, ուր պիտի մրցին իրենց ցամաքամասերու անցեալ տարուան ախոյեանները, հարաւային Ափրիկէի հիւրընկալութեամբ:*

Բացման արարողութիւնը տեղի ունեցաւ 14 Յունիսին: Առաջին հանդիպում՝ Հարաւային Ափրիկէ ընդդէմ Իրաքի:

Ա. ԽՄԲԱԿԸ

Հարաւային Ափրիկէ - Իրաք	*0-0*
Սպանիա - Նոր Զելանտա	*5-0*
Սպանիա - Իրաք	*1-0*
Հարաւային Ափրիկէ - Նոր Զելանտա	

Խմբակի աղիւսակ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
Սպանիա	2	2	0	0	6-0	6
Հարաւային Ափրիկէ	1	0	1	0	0-0	1
Իրաք	2	0	1	1	0-1	1
Նոր Զելանտա	2	1	0	0	1 0-5	0

Բ. ԽՄԲԱԿ

Ա. Մ. Նահանգներ - Իտալիա	*1-3*
Պրազիլ - Եգիպտոս	*4-3*

Խմբակի աղիւսակ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
Իտալիա	1	1	0	0	3-1	3
Պրազիլ	1	1	0	0	4-3	3
Եգիպտոս	1	0	0	1	3-4	0
Ա. Մ. Նահանգներ	1	0	0	1	1-3	0